

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԱԲՐԱՀԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

**Ա Տ Ե Ն Ա Խ Ո Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**Գիտական ղեկավար՝  
իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. ԽԱԶԱՏՐՅԱՆ**

**ԵՐԵՎԱՆ 2018**

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....4**

### **ԳԼՈՒԽ I.**

#### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ. ՏԵՍԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**1.1.** Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրական ամրագրման նշանակությունը և անհրաժեշտությունը. համեմատական իրավավական հետազոտություն.....**20**

**1.2.** Եվրասիական տնտեսական միությանը պետությունների մասնակցության սահմանադրական կարգավորման հիմնահարցերը.....**31**

### **ԳԼՈՒԽ II.**

#### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

**2.1.** Եվրասիական տնտեսական միության իրավունքը Հայաստանի Հանրապետության և մյուս անդամ պետությունների սահմանադրական իրավունքի համակարգում.....**41**

**2.2.** Եվրասիական տնտեսական միության ակտերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում. հարաբերակցության հիմնախնդիրները սահմանադրաիրավական կարգավորումների արդիականացման պայմաններում.....**51**

**2.3.** Հայաստանի Հանրապետության իրավական քաղաքականության հիմնախնդիրները Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգի շրջանակում.....**62**

**ԳԼՈՒԽ III.**

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ**

**3.1.** Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և Եվրասիական տնտեսական միության վերաբերականության հարաբերակցության հիմնախնդիրները սահմանադրական ժամանակակից կարգավորումների համատեքստում...**76**

**3.2.** Եվրասիական տնտեսական միությունը որպես վերաբերական միջազգային կազմակերպություն. սահմանադրաիրավական և միջազգային իրավական հետազոտություն.....**90**

**3.3.** Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրականության հիմնախնդիրները և դրանց լուծումները սահմանադրական արդարադատության պրակտիկայում.....**100**

<b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>117</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ .....</b>	<b>122</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....</b>	<b>123</b>

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը:** Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հիմնահարցերն ունեն առանցքային նշանակություն, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ միջազգային կազմակերպությունների վերաբերականության սահմանադրականացումն այլևս ժամանակակից իրավական համակարգի արդիականացման պահանջ է, սահմանադրական իրողություն և մշակույթ:

Միաժամանակ տնտեսական ինտեգրման նման գործընթացներին Հայաստանի Հանրապետության մասնակցությունն ինքնին ձեռք է բերում հանրային-իրավական և սոցիալ-քաղաքական նշանակություն հատկապես սահմանադրական և միջազգային իրավունքների հարաբերակցության համատեքստում նոր առաջնահերթություններ հաղորդելու տեսանկյունից:

Ակնհայտ է, որ սկսած անցյալ դարաշրջանի 90-ական թվականներից՝ հետխորհրդային տարածքում իրականացվեցին տարբեր ձևաչափի ինտեգրացիայի գործընթացներ՝ աշխարհաքաղաքական նոր իրողությունների հաշվառմամբ: Այս առումով հատկանշական է այն, որ նախկին խորհրդային հանրապետություններում սոցիալ-տնտեսական և քաղաքական վերաինտեգրման գործընթացների ու դրանց զարգացման հեռանկարների վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները, ինչպես նաև այդ ոլորտի հիմնախնդիրների գիտական հետազոտությունները դիտարկվեցին որպես սահմանադրական և միջազգային իրավունքների զարգացման արդիական հիմնահարցերից մեկը:

Միաժամանակ, կարևորելով Եվրասիական տնտեսական միության մասնակից պետությունների սահմանադրական և միջազգային իրավունքների զարգացումների նշանակությունը, անհրաժեշտ է նշել, որ դրանք ուղղված են ոչ միայն այդ միությանը պետությունների անդամակցության սահմանադրական հիմքերի վերլուծությանը, այլև այդ պետությունների ինքնիշխանության և

միջազգային կազմակերպության վերաբերականության, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության և անդամ-պետությունների իրավական համակարգերի հարաբերակցության հիմնախնդիրների հետազոտությանը հատկապես սահմանադրական նոր կարգավորումների տեսանկյունից:

Անշուշտ, համապատասխան սահմանադրական նորմերի բացակայությունը կամ իրավական ոչ լիարժեք կարգավորումների պայմաններում որոշակի խոչընդոտներ կարող են առաջացնել Եվրասիական տնտեսական միության և մասնակից պետությունների իրավական համակարգերի ու համաձայնեցված իրավական քաղաքականության միջև օրգանական փոխգործակցության ապահովման առումով:

Միևնույն ժամանակ Եվրասիական տնտեսական միությանը պետությունների անդամակցության սահմանադրական կարգավորումների բնույթը, մասնավորապես ներպետական իրավական նորմերի նկատմամբ միջազգային նորմերի գերակայության պարագայում միջազգային պայմանագրերի իրավունքի ենթադրաբար զարգացումն ինքնին կհանգեցնի նույն սահմանադրական սկզբունքների դերակատարության նվազմանը:

Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների սահմանադրական դրույթների առավել հատկանշական գծերից է այն, որ միջազգային կազմակերպություններում նրանց մասնակցության վերաբերյալ բոլոր երկրների սահմանադրությունները բովանդակում են համապատասխան նորմեր:

Վերոգրյալով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել գիտական հետազոտության մակարդակով ուսումնասիրել հետխորհրդային երկրների միջպետական հարաբերությունների շրջանակում Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրական հիմքերի ու սկզբունքների նշանակության, միջազգային այդ կազմակերպություններում սահմանադրական կարգավորման հիմնախնդիրները, ներկայացնել առաջարկություններ այդ անդամակցության ոլորտում անհրաժեշտ ավելի արդյունավետ երաշխիքներ ապահովելու համար:

Չնայած այն հանգամանքին, որ ավանդական ժողովրդավարական երկրներում արդեն վաղուց ճանաչվել են վերպետական միջազգային կազմակերպություններին անդամակցության սահմանադրական կարգավորումների նշանակությունն ու անհրաժեշտությունը, այնուամենայնիվ այդ ինստիտուտը մշտապես կարիք ունի փոփոխվելու և արդիականացվելու՝ կապված հասարակական-քաղաքական և տնտեսական գործընթացներում տեղի ունեցող զարգացումների հետ: Անշուշտ, Եվրասիական տնտեսական միության շրջանակներում պետության ինքնիշխանության և միջազգային կազմակերպության վերպետականության հարաբերակցության հիմնահարցերի ուսումնասիրությունը նոր պահանջներ է ներկայացնում պետության իրավական քաղաքականություն իրականացնող պետական մարմիններին այդ միության իրավական համակարգի պահանջների պահպանման առումով:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի սահմանադրական նոր կարգավորումներից հետո էլ ավելի անհրաժեշտ ու արդիական են դարձել պետության ինքնիշխանության և միջազգային կազմակերպությունների վերպետականության հարաբերակցության հիմնախնդիրների, այդ կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրական կարգավորումների հիմնահարցերի համալիր գիտական ուսումնասիրությունները, ոլորտում առկա խնդիրների վերհանումը և դրանց լուծման վերաբերյալ սահմանադրական զարգացումների նոր պահանջներով պայմանավորված առաջարկությունների ներկայացումը:

Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության մասնակցությունն իր էությամբ կրում է սահմանադրական բնույթ, որը ենթադրում է, որ պետության և վերպետական միջազգային կազմակերպության միջև հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման հիմնախնդիրների հետազոտությունը ձեռք է բերել թե՛ տեսական և թե՛ գործնական մեծ կարևորություն ու նշանակություն:

**Թեմայի գիտական հետազոտման աստիճանը:** Ատենախոսության մեջ քննարկվել են այնպիսի հարցեր, որոնք այս կամ այն չափով արտացոլում են ստացել տարբեր հեղինակների աշխատություններում: Սակայն Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության մասնակցության սահմանադրական կարգավորման հիմնախնդիրներն առանձին համալիր գիտական քննարկման ու սահմանադրաիրավական վերլուծության առարկա չեն եղել, ինչը փորձ է արվել կատարել այս աշխատանքում:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Ատենախոսական հետազոտությունում **նպատակ** է դրվել իրավաբանական գիտության ընդհանուր տեսական դրույթների, հայրենական ու միջազգային փորձի ամփոփման, ինչպես նաև գոյություն ունեցող պրակտիկայի հիման վրա վերհանել Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրական կարգավորման հիմքերն ու հիմնախնդիրները, ինչպես նաև այնպիսի լուծումների առաջադրումը, որոնք հնարավորություն կստեղծեն բարձրացնել Եվրասիական տնտեսական միության որպես վերպետական միջազգային կազմակերպության գործունեության արդյունավետությունը, հետազոտել միջպետական ինտեգրման այդ գործընթացների շրջանակներում սահմանադրական սկզբունքները և դրանց նշանակությունը և այլն:

Հետազոտության նպատակին հասնելու համար հիմնականում առաջ են քաշվել հետևյալ **խնդիրները**.

- ուսումնասիրել միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրական սկզբունքների և այլ ամրագրումների գործառութային նշանակությունը ժամանակակից իրավաընկալման պայմաններում,

- հետազոտել Եվրասիական տնտեսական միության միջպետական ինտեգրման գործընթացների շրջանակներում Հայաստանի Հանրապետության անդամակցության հիմնախնդիրները,

- վերլուծել Հայաստանի Հանրապետության և մյուս անդամ պետությունների սահմանադրական իրավունքում Եվրասիական տնտեսական միության ակտերի նշանակությունը և անհրաժեշտությունը,

- սահմանադրաիրավական կարգավորումների արդիականացման պայմաններում հետազոտել Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգերի հարաբերակցության հիմնախնդիրները,

- ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և Եվրասիական տնտեսական միության վերաբերականության հարաբերակցության հիմնախնդիրները և դրանց լուծման հնարավորությունները,

- սահմանադրաիրավական և միջազգային իրավական հետազոտության ու պրակտիկայի վերլուծության հիման վրա վեր հանել Եվրասիական տնտեսական միությանը որպես վերաբերական միջազգային կազմակերպության և այդ կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրականության հիմնախնդիրները և դրանց լուծումների ուսումնասիրությունը սահմանադրական արդարադատության պրակտիկայում:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Ատենախոսության հետազոտության օբյեկտ են հանդիսանում Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրական կարգավորման հիմնախնդիրները և այդ կարգավորման կապակցությամբ առաջացող հարաբերությունների ամբողջությունը:

Հետազոտության առարկան են կազմում Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրական կարգավորման հիմքերը, միջազգային իրավական ակտերը, գիտական վերլուծությունները, պետության ինքնիշխանության և միջազգային կազմակերպությունների վերաբերականության հարաբերակցության ոլորտում տիրող փաստացի վիճակը:

**Հետազոտության տեսական և նորմատիվ հիմքերը:** Հետխորհրդային երկրների տարածքում կազմավորված միջազգային տարածաշրջանային և ին-



տեգրման կազմակերպություններին պետությունների մասնակցության սահմանադրաիրավական կարգավորման, ինչպես նաև պետության ինքնիշխանության և միջազգային կազմակերպությունների վերպետականության հարաբերակցության հիմնախնդիրներին նվիրված գիտական հետազոտություններ իրականացվում են համեմատաբար վերջին տասնամյակում: Այնուամենայնիվ, Եվրասիական տնտեսական միության սահմանադրաիրավական և միջազգային իրավական հիմնախնդիրներին անդրադարձ են կատարվել հայրենական և արտասահմանյան հեղինակների, մասնավորապես՝ Ս.Ն.Բաբուրինի, Ա.Վ.Բարկովի, Ս.Վ. Բախինի, Կ.Ա. Բեկյաշևի, Վ.Գ.Վիշնյակովի, Ն.Ա.Վորոնցովայի, Տ.Ն.Ջագեպինի, Ն.Կ.Իսինգարինի, Ա.Յա.Կապուստինի, Ս.Յու.Կաշկինի, Ի.Ա.Կուբասովի, Տ.Շ.Կուլմատովի, Ի.Ի.Լուկաշուկի, Բ.Գ.Մանովի, Ա.Ն.Մարիշևի, Ե.Գ.Մոխսեևի, Ս.Դ.Պրիմբետովի, Գ.Ա.Ռապոտի, Օ.Գ.Ռումյանցևի, Լ.Յու.Ռիխտիկովայի, Ն.Բ.Սյուսարի, Յու.Ա.Տիխոմիրովի և այլոց աշխատություններում:

Ատենախոսական հետազոտությունը նախապատրաստելիս հեղինակը հենվել է ինտեգրացիայի ընդհանուր տեսության, ինչպես նաև պետության ինքնիշխանության իրավական խնդիրներին նվիրված՝ Ս.Ա.Ավակյանի, Ա.Ս.Ավտոնոմովի, Ա.Վ.Բարկովի, Գ.Բ.Դանիելյանի, Վ.Վ.Ժիգուլինի, Ա.Ա.Խաչատրյանի, Վ.Ս.Խիժնյակի, Ա.Շ.Հարությունյանի, Ն.Տ.Վեդերնիկովի, Վ.Վ.Մամոնովի, Ս.Մ.Ստեպանենկոյի, Վ.Ա.Տրոիցկի, Օ.Վ.Շպակի, Ե.Ն.Շուվալովի, Ա.Ի.Էկիմովի և այլոց գիտական աշխատությունների վրա:

Հետազոտության նորմատիվ հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության, Եվրասիական տնտեսական միության մասնակից այլ պետությունների և արտասահմանյան երկրների Սահմանադրությունները, Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրերը, Եվրասիական տնտեսական միության շրջանակում ընդունված միջազգային իրավական և այլ ակտերը:

Ժամանակակից հայրենական գիտության մեջ և պրակտիկայում դեռևս չի ձևավորել ամբողջական և միասնական տեսակետ Եվրասիական տնտե-

սական միությանը Հայաստանի Հանրապետության մասնակցության սահմանադրական ամրագրումների, միջազգային կազմակերպությունների վերաբերյալ տեսականության սահմանադրականացման տեսանկյունից:

Միաժամանակ, սահմանադրական իրավունքի գիտության մեջ բավարար ուշադրություն չի դարձվել պետության ինքնիշխանության և միջազգային կազմակերպությունների վերաբերյալ տեսականության, Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգի և այդ միությանը մասնակից պետությունների իրավական քաղաքականության ձևավորման ու իրականացման վրա սահմանադրական նորմերի ներգործության հիմնախնդիրների հետազոտությանը:

Հետազոտության հիմնախնդիրների արդիականությունն ու ոչ բավարար ուսումնասիրությունը, դրանց գործնական նշանակությունը Հայաստանի Հանրապետության պետականության զարգացման համար մատնանշում են հետագա տեսական հետազոտությունների անհրաժեշտությանն այդ ոլորտում:

**Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը:** Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես գիտական ուսումնասիրության տրամաբանական, վերլուծական, պատմական, ընդհանրացման, ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդները, այնպես էլ մի շարք մասնավոր մեթոդներ՝ պատմական-իրավական և համեմատական իրավական վերլուծության: Նշված մեթոդների համակցված կիրառությունը հնարավորություն է տվել բացահայտել հետազոտության շրջանակներում կիրառվող հիմնական հասկացությունների բովանդակությունն ու առանձնահատկությունները, վեր հանել Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության մասնակցության սահմանադրական կարգավորումների ոլորտում առկա խնդրահարույց հարցադրումները և առաջարկել այդ հիմնահարցերի լուծման մոտեցումներ:

**Ատենախոսության գիտական նորույթը:** Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի սահմանադրական նոր կարգավորումների համատեքստում առաջին անգամ իրավագիտական համալիր վերլուծության

առարկա են դարձվում Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրական կարգավորման հիմնախնդիրները՝ առաջադրելով մի շարք հայեցակարգային մոտեցումներ, որոնք բխում են պետության ինքնիշխանության իրականացման և վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության մասնակցության բնույթից ու սահմանադրաիրավական նշանակությունից:

Ատենախոսությունը ներկայիս իրավաքաղաքական իրողությունների և սահմանադրական ժամանակակից կարգավորումների վերլուծության արդյունքներով, որպես վերպետական միջազգային կազմակերպություն՝ Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրական ամրագրման հիմնախնդիրների և լուծման սահմանադրաիրավական մոտեցումների համալիր հետազոտություն է, որի հիման վրա փորձ է արվել ներկայացնել այդ ոլորտի կատարելագործմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ:

Աշխատանքի շրջանակներում վերլուծվել են միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրական ամրագրման գործառույթային նշանակությունը ժամանակակից իրավաընկալման պայմաններում, բացահայտվել են Եվրասիական տնտեսական միության միջպետական ինտեգրման գործընթացներում սահմանադրական սկզբունքների և նորմերի դերն ու նշանակությունը, դրանց նորովի ընկալման ու կիրառության միտումները, ինչպես նաև ներկայացվել են Հայաստանի Հանրապետության՝ որպես ինքնիշխան պետության իրավական քաղաքականության և են Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգի հարաբերակցության հիմնախնդիրները սահմանադրաիրավական կարգավորումների արդիականացման պայմաններում:

Աշխատանքի շրջանակներում նաև ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և Եվրասիական տնտեսական միության վերպետականության հարաբերակցության հիմնախնդիրները սահմանադրա-

կան ժամանակակից կարգավորումների համատեքստում, Եվրասիական տնտեսական միության որպես վերպետական միջազգային կազմակերպության սահմանադրաիրավական և միջազգային իրավական կարգավիճակի հիմնահարցերը, ինչպես նաև ներկայացվել են այդ միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրականության և դրանց լուծման վերաբերյալ կառուցակարգային առաջարկություններ:

Աշխատանքում բացահայտվել են նաև միջազգային կազմակերպությունների վերպետականության սահմանադրականացման հիմնախնդիրները և դրա զարգացման արդի միտումները 2015 թվականի սահմանադրական նոր կարգավորումների համատեքստում: Արդյունքում՝ կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել են հետազոտության առարկայի վերաբերյալ մի շարք գործնական առաջարկություններ:

**Պաշտպանության ներկայացվող դրույթները:** Ելնելով առաջադրված նպատակներից և դրանցից հետևող խնդիրներից՝ պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները.

1. Ատենախոսությամբ հիմնավորված է այն դիրքորոշումը, ըստ որի՝ միջազգային կազմակերպություններին անդամակցությամբ Հայաստանի Հանրապետությունը պետք է հետապնդի **սահմանադրական հետևյալ նպատակների իրագործումը. ա) բարիդրացիականություն, այսինքն՝ միջազգային կազմակերպության անդամ պետությունների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատում՝ որպես պետության արտաքին քաղաքականության խաղաղ բնույթի դրսևորում, բ) փոխշահավետություն, այսինքն՝ միջազգային կազմակերպության շրջանակում բոլոր պետությունների հետ փոխադարձ ու շահավետ հարաբերությունների հաստատումը, գ) հայկական սփյուռքի հետ փոխկապվածություն, այսինքն, միջազգային կազմակերպության շրջանակում պետությունների հետ բարիդրացիական ու փոխշահավետ հարաբերություններում հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդումն ու զարգացումն ունի ևս առանցքային նշանակություն:**

2. Կարևորելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության իրավական քաղաքականությունը Եվրասիական տնտեսական միության մասնակից պետությունների իրավական ընդհանուր քաղաքականության շրջանակում կրում է համաձայնեցված բնույթ, **ապենախոսությամբ հիմնավորվում է հետևյալ դիրքորոշումը, որ Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգի համարեքստում Հայաստանի Հանրապետության իրավական քաղաքականությունն ընկալվում է որպես այդ համակարգի ձևավորման գործոն, որն ուղղված է Եվրասիական տնտեսական միության շրջանակներում համաձայնեցված սկզբունքների ու միասնական իրավական չափանիշների հիման վրա այդ միության ակտերն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանեցմանը, այդ թվում՝ ներդաշնակեցմանն ու մոտարկմանը, ներքին կապի ու համակարգվածության ապահովմանը:**

3. Բացահայտելով Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգի՝ որպես համալիր իրավական կատեգորիայի էությունը, որը ենթադրում է իրավական որոշակի տարրերի, երևույթների ու միջոցների ամբողջություն, որոնք ապահովում են Եվրասիական տնտեսական ինտեգրման զարգացումը և կարգավորում այդ գործընթացների հետ կապված հասարակական հարաբերությունները, հետազոտության արդյունքներով **հիմնավորվել է, որ Եվրասիական տնտեսական միության միասնական իրավական համակարգի՝ որպես Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքում հասարակության իրավական կյանքի ու գործունեության կազմակերպական հենքի և օբյեկտիվ իրականության հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները. ա) ազգային օրենսդրության ներդաշնակեցում պահանջող օրենսդրության ոլորտների սահմանում, բ) համաձայնեցված սկզբունքների ու միասնական իրավական չափանիշների հիման վրա մասնակից պետությունների կողմից միասնական իրավական քաղաքականության իրականացում, գ) ազգային օրենսդրությունների համեմատական իրավական վերլուծությունների իրականացում՝**

**Եվրասիական տնտեսական միության ակտերին ազգային օրենսդրության համապատասխանեցման աստիճանի գնահատման առումով, դ) ազգային օրենսդրության նորմերի նկատմամբ միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների գերակայության երաշխավորում, ե) Եվրասիական տնտեսական միության ակտերի և ազգային օրենսդրության ակտերի միջև ներքին կապի ու համակարգվածության ապահովում:**

4. Աշխատանքում հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ **Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հիմնախնդրի լուծումներն ունեն երկիմաստ նշանակություն, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ այդ անդամակցությամբ Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է միջազգային պարտավորություններ, որոնք, մի կողմից, ամբողջությամբ պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, իսկ, մյուս կողմից, այդ պարտավորությունները պետք է ուղղված լինեն նույն միջազգային կազմակերպության խնդիրների ու նպատակների իրագործմանը:**

5. Կարևորելով Եվրասիական տնտեսական միության շրջանակում Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցման հիմքում ընկած են կազմակերպչական-իրավական որոշակի կառուցակարգերի գործառնական նշանակությունը, որոնք կոչված են երաշխավորելու Հայաստանի Հանրապետության իրավական կանոնակարգումների իսկականության ապահովումը, աշխատանքում **ատենախոսությունում բացահայտվել են՝ Եվրասիական տնտեսական միության օրենսդրությանը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանեցման, մոտարկման, միասնականության ապահովման, իմպլենտացիայի, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության դատական ակտերի և մասնակից պետությունների իրավական ակտերի որպես ինքնուրույն ընթացակարգային կառուցակարգերի էությունն ու գործնական կիրառության շրջանակները:**

6. Ատենախոսությամբ հիմնավորվել է այն դիրքորոշումը, ըստ որի՝ **Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և միջազգային կազմակերպությունների վերաբերականության հարաբերակցության շրջանակում պետության որևէ լիազորությունների փոխանցում չի կարող դիտարկվել որպես պետության ինքնիշխանությունից կամ դրա մի մասից հրաժարում, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ նման լիազորությունների փոխանցումը պայմանավորված է միջազգային ինտեգրման նոր բնույթի գործընթացներ իրականացնող վերաբերական միջազգային կազմակերպությունների այնպիսի խնդիրների իրականացմամբ, որոնք ուղղված են ինչպես փոխալ միջազգային կազմակերպության պայմանագրային, այնպես էլ մասնակից պետությունների նպատակների ու խնդիրների իրագործմանը:**

Միաժամանակ, բացահայտվել է այն մոտեցումը, որ **Հայաստանի Հանրապետությունը չի կարող մասնակիորեն իր ինքնիշխանությունը փոխանցել Եվրասիական տնտեսական միությանը, քանի որ ինքնիշխանությամբ օժտված է հենց միայն պետությունը: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսական ինտեգրման նպատակով պետության լիազորությունների ծավալը ժամանակի հետ ավելի է մեծանում, ուստի Հայաստանի Հանրապետությունը միասնական մաքսային կարգավորումների և տնտեսական ընդհանուր տարածքի ձևավորման նպատակով լիազորությունների որևէ մասը փոխանցվում է Եվրասիական տնտեսական միությանը, ինչը չի նշանակում պետության ինքնիշխանության իրավունքի զիջում:**

7. Ատենախոսության մեջ հիմնավորվել է այն գաղափարը, որ Հայաստանի Հանրապետության միջազգային ինտեգրացիայի ժամանակակից գործընթացների և նոր սահմանադրական կարգավորումների համատեքստում վերաբերական միջազգային կազմակերպությունը բնութագրվում է հետևյալ **հատկանիշների ամբողջությամբ և նշանակությամբ. ա) այն նոր միջազգային իրավակարգ է՝ ինքնուրույն իրավական համակարգով և**

*առանձնահատուկ իրավասության շրջանակով, բ) այդ կազմակերպությանը մասնակից պետությունները փոխանցում են որոշակի ոլորտի իրենց լիազորությունները փվյալ միջազգային կազմակերպության կանոնադրային և մասնակից պետությունների նպատակների ու խնդիրների իրագործմանը, գ) անկախ պետությունների կամարտահայտությունից կազմակերպությունը կարող է ծայների մեծամասնությամբ ընդունել որոշումներ, որոնք պարտադիր են կատարման նույն մասնակից պետությունների կողմից, դ) այդ որոշումները պետք է պարտադիր կատարման ենթակա լինելու բոլոր այն անձանց կողմից, որոնք գտնվում են այս կամ այն անդամ - պետության իրավազորության տակ, ե) այդ կազմակերպությունների ստեղծվում են միայն ժողովրդի անմիջական կամարտահայտման (հանրաքվեի) արդյունքում:*

**8.** Միաժամանակ, կարևորելով Հայաստանի Հանրապետությունում վերպետական կազմակերպությանը պետության լիազորության ուղղակիորեն փոխանցման սահմանադրական արգելքի հաղթահարման անհրաժեշտությունը, աշխատանքում հիմնավորվել են հետևյալ **դիրքորոշումները, որ.**

*ա) պետության ինքնիշխանությունից կամ դրա մի մասից հրաժարում կարող է իրականացվել է միայն ժողովրդի կամարտահայտման արդյունքում՝ հանրաքվեի միջոցով (Սահմանադրության 205-րդ հոդվ., մաս 1),*

*բ) Եվրասիական տնտեսական միության օրինակով Հայաստանի Հանրապետությունն այդ միության կազմում իր անդամակցության դադարման գործընթացը կարող է նախաձեռնել ցանկացած պահի, ինչը դիտարկվում է որպես պետությունների ինքնիշխանության սկզբունքի հարգման իրավական հիմք, գ) Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությունն ինքնին կրում է տնտեսական բնույթ, և միայն հետևանքներն ունեն սահմանադրաիրավական նշանակություն:*

**9.** Հետազոտության արդյունքներով հիմնավոր է համարվել հետևյալ դիրքորոշումը, ըստ որի՝ **Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունը չի կարող հանգեցնել**



*մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների որևէ ձևով սահմանափակմանը, քանի որ առկա են ՀՀ Սահմանադրության նորմերի բովանդակությունից բխող սահմանադրական հեղուկալ հստակ պահանջները. ա) պետության ինքնիշխանության երաշխավորումը, բ) պետությունների հետ միջազգային հարաբերություններում բարիդրացիականության ու փոխշահավետության հաստատումը, գ) մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների միայն այնպիսի հնարավոր սահմանափակումների նախատեսումը, որոնք չեն կարող գերազանցել միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումներին, դ) Հայաստանի Հանրապետության և իր իրավազորության փակ գտնվող իրավաբանական ու ֆիզիկական անձանց համար Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերի գործողության շրջանակը սահմանափակվում է այդ ակտերի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության շրջանակներում:*

10. Աշխատանքում հետազոտության արդյունքներով հիմնավորվել է հետևյալը, որ ՀՀ Սահմանադրության 1, 5, 13, 55, 61, 81-րդ և այլ հոդվածներով ամրագրված դրույթների համակարգային վերլուծության համատեքստում Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունը և այդ անդամակցությամբ պայմանավորված պետության ինքնիշխանության սահմանափակումներն իրավաչափ են այն դեպքում, եթե միաժամանակ կարող են պահպանվել հետևյալ պայմանները. *ա) այդ անդամակցությունը և դրա հետ կապված պետության ինքնիշխանության սահմանափակումը չպետք է հակասեն սահմանադրական կարգի հիմունքներին, բ) այդ անդամակցության հետ կապված պետության ինքնիշխանության սահմանափակումը չպետք է հանգեցնի մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակմանը, գ) այդ անդամակցությունը պետք է ձևակերպվի միջազգային պայմանագրի ձևով և իրավական բոլոր ընթացակարգերին ու*

**կառուցակարգերին համապատասխան լինի պատշաճ ընդունված և վավերացված:**

11. Սահմանադրական նորմերի համակարգային վերլուծության արդյունքներով հիմնավոր է համարվել հետևյալ առաջարկության կարևորությունը, որ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխի 13-րդ հոդվածն անհրաժեշտ է լրացնել նոր 2-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ **«Պետությունը միջազգային իրավունքի հիման վրա այլ պետությունների հետ կարող է մասնակցել միջազգային վերաբերական կազմակերպություններին և դրանց մարմինների ստեղծմանը՝ միջազգային պայմանագրերին համապատասխան փոխանցելով իր լիազորությունների մասը, եթե դա համապատասխանում է իր ազգային շահերին»:**

**Ատենախոսության գիտատեսական ու գործնական նշանակությունը:**

Ատենախոսության գիտատեսական ու գործնական նշանակությունը կարևորվում է նրանով, որ դրանում կատարված վերլուծությունների արդյունքում արված եզրահանգումները կարող են օգտագործվել «Սահմանադրական իրավունք», «Եվրոպական տնտեսական միության իրավունք» դասընթացներում ու հետագա գիտական հետազոտություններում, ինչպես նաև բոլոր այն դասընթացներում, որոնց հետազոտության առարկան որևէ կերպ առնչվում է հետազոտության առարկայի հետ:

Միաժամանակ, առկա հիմնախնդիրների առնչությամբ կատարված վերլուծությունները, ներկայացված առաջարկություններն ու դրանց կապակցությամբ բերված հիմնավորումները կարող են նպաստել իրավաստեղծ գործունեության իրականացմանը՝ ՀՀ Սահմանադրության հենքի վրա միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրական ամրագրման ոլորտում բարեփոխումների ընթացքում, ինչպես նաև օրենսդրական մեկնաբանությունների, կրթական, մեթոդական ու գիտագործնական նյութերի և գրականության մշակմանն ու նախընտրելի իրավական մշակույթի ձևավորմանը:

---

**Հետազոտության արդյունքների փորձարկումը:** Ատենախոսությունը պատրաստվել է Եվրոպական համալսարանում, որտեղ ներկայացվել են զեկույցներ, գիտական հոդվածներ, հետազոտություններ, կազմակերպվել են քննարկումներ, կլոր սեղաններ ու խորհրդակցություններ: Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հրատարակված մենագրությունում և գիտական մի շարք հոդվածներում, տարբեր խորհրդաժողովների, գիտաժողովների սեմինարների և տարատեսակ այլ ձևաչափերով կազմակերպված քննարկումների ընթացքում ներկայացված ելույթներում, զեկուցումներում ու այլ աշխատանքներում:

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ներառված ութ ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

## ԳԼՈՒԽ I.

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ. ՏԵՍԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

#### **1.1. Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրական ամրագրման նշանակությունը և անհրաժեշտությունը. համեմատական իրավավական հետազոտություն**

Ժամանակակից աշխարհում միջպետական հարաբերություններում պետությունների փոխկախվածության և փոխազդեցության հիմնախնդիրներն առավել կարևոր նշանակություն են ձեռք բերում միջազգային կազմակերպությունների շրջանակներում: Ընդ որում դրանք առավելապես պայմանավորված են տնտեսական գործընթացների, տեղեկատվության ու կապի միջոցների, տնտեսական ու ռազմաքաղաքական համակարգերի ինտեգրմամբ ու ընդհանրությամբ, ինչպես նաև ժողովուրդների միջև աճող մտավոր ու մշակութային արժեքների փոխանակմամբ:

Բացի դրանից, առավել ակնհայտ է դառնում այն, որ աշխարհաքաղաքական ժամանակակից խնդիրները լուծելու համար անհրաժեշտություն է առաջանում պետությունների փոխհարաբերություններում միջազգային համագործակցության համար առավել ճկուն և միաժամանակ կայուն նոր ձևերի ընտրությունը: Այդ առումով առանցքային նշանակություն ունեն հատկապես միջազգային կազմակերպությունները՝ որպես պետությունների միջազգային համագործակցության կառուցակարգ, որոնց մասնակցությունն ինքնիշխան որևէ պետության համար դիտարկվում է այդ համագործակցության պատմական զարգացումների օրինաչափ ու օբյեկտիվ արդյունք:

Անշուշտ, հիշյալի կապակցությամբ արդարացի է այն պնդումը, ըստ որի՝ միջազգային կազմակերպությունների վերաբերականության՝ որպես

հասարակական զարգացումների և միջազգային ինտեգրման գործընթացների հետևանք, ինքնին ենթադրում է ինքնիշխան պետության լիազորությունների փոխանցում այդ կազմակերպություններին՝ վերջիններիս կողմից այն իրագործելու հնարավորությամբ: Ընդ որում վերպետական միջազգային կազմակերպությանը պետության ինքնիշխան իրավունքների նման փոխանցումը չի կարող դիտարկվել որպես պետության ինքնիշխանության սահմանափակում կամ պետության միջազգային իրավասությունների կորուստ, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ պետության ինքնիշխանությունը կարող է դադարել միմիայն տվյալ պետության ժողովրդի կամարտահայտման արդյունքում<sup>1</sup>:

Այնուամենայնիվ, պետությունների համագործակցության համար անհրաժեշտ ձևերի առկայությունն ինքնին վկայում է համաշխարհային հանրության նպատակների իրագործման և յուրաքանչյուր պետության արտաքին քաղաքականության իրականացման արդյունավետության մասին:

Միջազգային այն կազմակերպությունները, որոնք ստեղծվում են միջպետական պայմանագրի կամ ընդհանուր իրավասության միջազգային կազմակերպության բանաձևի հիման վրա, ավելի մեծ դեր են խաղում ընդհանուր քաղաքական, տնտեսական և այլ շահերի վրա հիմնված նույն երկրների համագործակցության մեջ: Որպես հետևանք, ուժեղանում են պետությունների իրավական կախվածությունը և կապվածությունը միջպետական այդ ինստիտուտների գործունեությամբ ու ընդունված որոշումներով:

Անշուշտ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ միջազգային կազմակերպությունները որպես կանոն ունեն ընդհանրական բնութագրիչներ<sup>2</sup>, օժտված չեն վերպետական իշխանությամբ և ունեն պետությունների

---

<sup>1</sup> Տե՛ս **Խաչատրյան Ա.Ա.**, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության հիմնախնդիրները սահմանադրական ժամանակակից կարգավորումների համատեքստում և դրանց լուծումները միջազգային իրավական ու սահմանադրական արդարադատության պրակտիկայում, Եր., 2016, էջ 96:

<sup>2</sup> Տե՛ս **Քոչարյան Վ.Վ.**, Միջազգային իրավունք, Եր., 2002, էջ179:

համագործակցության միասնական խնդիրներ՝ առանց պետաիշխանական լիազորությունների ու գործառույթների կիրառման:

Սակայն, ՄԱԿ-ի 1969 թվականի Միջազգային պայմանագրերի իրավունքի և 1975 թվականի Ունիվերսալ բնույթի միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում պետությունների ներկայացուցչության մասին կոնվենցիաների նորմերի համալիր վերլուծությունից հետևում է, որ միջազգային առանձին կազմակերպություններ կարող են օժտված լինել ընդհանուր կանոնից տարբերվող այլ հատկանիշներով: Մասնավորապես խոսքն այն կազմակերպությունների մասին է, որոնք.

ա) ունեն անդամ պետությունների տնտեսական և քաղաքական ինտեգրման հստակ ու որոշակի նպատակներ,

բ) օժտված են վերպետական լիազորություններով, ինչը նշանակում է, որ այդ կազմակերպություններին ինքնիշխան պետությունների մասնակցությունը զուգորդվում է վերջիններիս առանձին ինքնիշխան իրավունքների փոխանցմամբ և այդ կազմակերպությունների որոշումների պարտադիր կատարման պարտավորությունների ստանձնմամբ,

գ) արտահայտում են անդամակցող պետությունների տարածաշրջանային ինտեգրման ավելի բարձր աստիճան այդ պետությունների պատմաքաղաքական զարգացումների համատեքստում,

դ) այդ կազմակերպությունների ակտերն առանձնացվում են հատկապես իրենց իմպերատիվությամբ և դրսևորվում են ազգային օրենսդրության վրա դրանց ներգործուն ազդեցությամբ<sup>3</sup>:

Բացի այդ, նման բնույթի կազմակերպություններին անդամակցության կամ մասնակցության սահմանադրական մոդելները բազմազան են ու

---

<sup>3</sup> Առանձին հեղինակներ նշում են միջազգային վերպետական կազմակերպությունները բնութագրող այլ առանձնահատկություններ, մասնավորապես պրոֆեսոր **Յու. Տիխոմիրովը** նշում է, որ միջազգային վերպետական միավորումների կառուցվածքն արտացոլում է անդամ-պետությունների ինստիտուտների համակարգերը և ունեն դատական համակարգեր՝ վեճերը և կոլիզիոն ընթացակարգերը կարգավորելու համար (տե՛ս **Тихомиров Ю.А.**, Коллизийное право. М., 2000. էջ 337-338):

բազմաբովանդակ, և տարբեր երկրներում դրանք կարող են միանման չլինել ու ունենալ տարբեր դրսևորումներ:

Հարկ է նկատել, որ միջազգային կազմակերպություններին պետության անդամակցության և ինքնիշխան իրավունքների մի մասի փոխանցման հնարավորությունն ամրագրող նորմեր առկա են առանձին երկրների սահմանադրություններում<sup>4</sup>:

Այսպես, Ավստրիայի Սահմանադրության 9-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պետական պայմանագրի կամ օրենքի հիման վրա պետական առանձին իրավունքներ կարող են փոխանցվել միջպետական հիմնարկներին ու նրանց մարմիններին: Կամ Դանիայի Թագավորության Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ պետության մարմինների առանձին լիազորություններ կարող են վերապահվել միջազգային իրավակարգի և համագործակցության զարգացման նպատակով ստեղծված միջազգային կազմակերպություններին:

Իսկ Իսպանիայի Սահմանադրության 93-րդ հոդվածը նախատեսում է դրույթ, համաձայն որի՝ Գլխավոր Կորտեսին կամ կառավարությանը վերապահվում են միջազգային պայմանագրերի կատարումն ապահովելու պարտականություններ, որոնցով պետությունը մասնակցում է միջազգային կամ վերպետական կազմակերպություններին, և որոնց կարող է փոխանցվել համապատասխան իրավասություն:

Իտալիայի Սահմանադրության 11-րդ հոդվածը հռչակում է, որ Իտալիան համաձայնվում է այլ պետությունների հետ փոխադարձության պայմաններում մասնակցել միջազգային այն կազմակերպություններին իր ինքնիշխանության սահմանափակման պայմանով, եթե դա անհրաժեշտ է ժողովուրդների խաղաղության և համերաշխության ապահովման կարգի համար... որը աջակցություն ու օգնություն կցուցաբերի այդ կազմակերպություններին, որոնք ձգտում են նշված նպատակների իրագործմանը:

---

<sup>4</sup> Ст'я Конституции зарубежных государств. Сборник. Т. 1. М.: 2010.

Ալբանիայի Սահմանադրության 123-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ Ալբանիան միջազգային համաձայնագրերի հիման վրա փոխանցում է միջազգային կազմակերպություններին որոշակի հարցերով իր պետական իրավունքները: Իսկ Ֆրանսիայի Հանրապետության 92-554 թվակիր սահմանադրական ակտի 88-2-րդ հոդվածի համաձայն՝ փոխադարձության սկզբունքի պահպանմամբ ու Եվրոպական միության մասին պայմանագրի պայմաններին համապատասխան, Ֆրանսիան համաձայնվում է իր իրավասության մի մասի փոխանցմանը Եվրոպական տնտեսական ու ֆինանսական միության հիմնադրման համար:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրության 24-րդ հոդվածի 1-ին պարբերությունը սահմանում է, որ Դաշնությունը օրենքով կարող է իր պետական իրավունքները փոխանցել միջազգային հիմնարկներին:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ գրեթե նույնաբովանդակ նորմեր պարունակում են Սլովակիայի, Պորտուգալիայի, Լեհաստանի, Նիդեռլանդների, Լյուքսեմբուրգի և այլ երկրների սահմանադրությունները:

Հիշատակված սահմանադրական նորմերի համակարգված վերլուծությունից կարելի է նկատել հետևյալը.

ա) պետությունների անդամակցությունը միջազգային կազմակերպություններին ինքնին ընկալվում է որպես ինքնիշխան պետության իրավասության մաս, բայց ոչ ինքնիշխանության տարր,

բ) միջազգային կազմակերպություններին անդամակցությամբ պետության կողմից այդ կազմակերպություններին սահմանադրական որոշակի լիազորությունների փոխանցումը պայմանավորված է գլոբալացման խորացման պայմաններում հատկապես միջազգային ինտեգրման նոր բնույթի գործընթացներ իրականացնող միջազգային կազմակերպությունների այնպիսի խնդիրների իրականացմամբ, որոնք ուղղված են կամ համընկնում են հենց անդամակցող պետությունների խնդիրների հետ:

Ինչ վերաբերում է մասնագիտական գրականության մեջ առկա մոտեցումներին, ապա դրանց համընդհանուր վերլուծությունը բերում է այն



եզրահանգման, որ միջազգային կազմակերպություններին պետությունների անդամակցությանը բնորոշ են հետևյալ բնութագրիչները.

- 1) պետությունների շահերի ընդհանրության ճանաչումը,
- 2) մասնակից պետությունների կողմից ձայների մեծամասնությամբ որոշումների ընդունումը,
- 3) այդ կազմակերպությունների ծառայողների գործունեության անկախությունը,
- 4) այդ կազմակերպությունների ֆինանսական անկախությունը,
- 5) որոշումների պարտադիր կատարման պայմանը մասնակից պետությունների կողմից և այդ պետությունների տարածքում,
- 6) վերպետական կազմակերպության կազմից միակողմանի դուրս գալու արգելքը,
- 7) այդ կազմակերպության լիազորությունների գերակայությունն անդամ-պետությունների լիազորությունների նկատմամբ,
- 8) անդամ-պետությունների ինքնիշխան լիազորությունների մի մասի փոխանցումը վերպետական կազմակերպությանը<sup>5</sup>:

Բոլոր դեպքերում անհրաժեշտ է նկատել, որ ցանկացած պետության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար միջազգային կազմակերպություններին անդամակցության հիմնահարցը, վերջիններիս վերպետականության համատեքստում կարևոր նշանակություն ունի պետության ինքնիշխանության երաշխավորման սահմանադրական պահանջը: Այս առումով տեղին է մեջբերել պրոֆեսոր Ֆ.Լ.Քրիվզին, որի պնդմամբ. «...վերպետականություն եզրույթն իր անորոշությամբ և այդ եզրույթի շուրջ ծագած վեճերով լիովին համապատասխանում է պետության ինքնիշխանության բովանդակությանը»<sup>6</sup>:

---

<sup>5</sup> Տե՛ս **Моисеев А.А.** Суверенитет государства в международном праве. М.: 2009, էջ 362-363:

<sup>6</sup> Տե՛ս **Crievs F.L.** Supranationalism and International Adjudication. Urbana. 1969. P. 10:

Հայաստանի Հանրապետությունն ինքնուրույն է որոշում միջազգային կազմակերպություններում իր մասնակցության կամ անդամակցության հարցը՝ ելնելով իր ազգային շահերից:

Հայաստանի Երրորդ հանրապետությունում սահմանադրական գործընթացների տարբեր փուլերում միջազգային կազմակերպություններին անդամակցության հիմնահարցերը նույնպես տարբեր կերպ են կանոնակարգվել: Այսպես, եթե մինչև 2015 թվականի սահմանադրական կարգավորումների հիման վրա այդ կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության մասնակցությունը կարող էր իրականացվել միայն համապատասխան միջազգային պայմանագրերի վավերացման շրջանակում, ապա ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 205-րդ և 169-րդ հոդվածների համալիր վերլուծությունից հետևում է.

ա) վերաբերական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության հարցերը լուծվում են հանրաքվեի միջոցով,

բ) Ազգային ժողովը մինչև հանրաքվեի դնելը վերաբերական միջազգային կազմակերպություններին անդամակցությանը վերաբերող հարցերով դիմում է Սահմանադրական դատարան:

Անշուշտ, նման «վերազգային» պարտավորությունների ու լիազորությունների կրումը բոլոր դեպքերում ունի ժամանակավոր բնույթ, քանի որ դրանք ընդգրկում են միայն հարաբերությունների որոշակի ոլորտ և ընդհանուր առմամբ չեն փոխում կազմակերպության անդամ-պետությունների ինքնիշխանության էական հատկանիշները, այդ կազմակերպության մարմնի և նրա անդամների միջև հարաբերությունների բնույթը, որոնք միջազգային իրավական բնույթ են կրում<sup>7</sup>:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել այն, որ միջպետական ինտեգրման գործընթացներում առանձնակի կարևորություն է ստանում անդամ-պետու-

---

<sup>7</sup> Տե՛ս Тихомиров Ю.А., Коллизионное право. М., 2000. էջ 337-338:

թյունների քաղաքական կամարտահայտումը, քանի որ հենց պետությունների քաղաքական նպատակներով է պայմանավորված միջազգային և սահմանադրական իրավունքի նորմերի փոխգործակցության բնույթը:

Այսպես, ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 13-րդ և 19-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից կարելի է բխեցնել հետևյալը.

ա) Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա,

բ) այդ քաղաքականությունը նպատակաուղղված պետք է լինի բացառապես պետությունների հետ բարիդրացիական և փոխշահավետ հարաբերությունների հաստատմանը,

գ) հայկական Սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացմանն ու հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա պետք է նպաստի այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը և այլ պետություններից հայրենադարձությանը:

Անշուշտ, սահմանադրական նորմերի իրացմանն է ուղղված Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող արտաքին քաղաքականությունը, որի բաղկացուցիչ մասն է կազմում միջազգային կազմակերպությունների հետ նրա հարաբերությունների ամբողջությունը: Ընդ որում հարաբերությունների այդ համալիրում առանձնակի կարևորություն են ստանում հետևյալ ուղղությունները՝ երկրի պաշտպանության ամրապնդումը, քաղաքական, միջազգային անվտանգության և խաղաղության ապահովումը, հայկական Սփյուռքի հետ կապերի համակողմանի զարգացումը, հայապահպանությանն ուղղված քաղաքականության իրականացումը, միջպետական տնտեսական և առևտրաֆինանսական համագործակցության հաստատումն ու զարգացումը, միջպետական մշակութային, գիտատեխնիկական ու տեղեկատվական համագործակցության ապահովումը,

միջպետական էկոլոգիական (քննապահպանական) համագործակցության հաստատումը, համաշխարհային իրավակարգի պաշտպանությանը մասնակցության երաշխավորումը:

Միաժամանակ անհրաժեշտ է նկատել, որ սահմանադրական հիշատակված նորմերի ներառումը սահմանադրական կարգի հիմունքներ ինքնին կարևոր նշանակություն է հաղորդում այն իմաստով, որ դրանք բովանդակում են արտաքին քաղաքականության, մասնավորապես միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության նպատակներն ու հիմնարար սկզբունքները:

Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով հռչակված պետության ինքնիշխանության և ՀՀ Սահմանադրության 205-րդ հոդվածով սահմանված միջազգային կազմակերպությունների վերաբերյալ կանոնակարգումների հարաբերակցության հիմնախնդրի առկայությունն ու նշանակությունը: Անշուշտ, պետությունը, անդամակցելով միջազգային որևէ կազմակերպության, չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ իր ինքնիշխանությունը վերջինիս փոխանցել, քանի որ ինքնիշխանությամբ օժտված է միայն պետությունը, և այն վերջինիս հիմնական և առանձնահատուկ հատկանիշն է<sup>8</sup>:

Այս նկատառումով պայմանավորված անընդունելի է այն տեսակետը, ըստ որի՝ պետությունները կամավոր հրաժարվում են իրենց ինքնիշխան իրավունքներից կամ ինքնիշխանությունից հոգուտ միջազգային այն կազմակերպությունների, որոնց անդամակցում են այդ երկրները<sup>9</sup>:

Բնավ դա չի ենթադրում, որ միջազգային կազմակերպություններին մասնակցությունը դրանց վերաբերականության շրջանակում ընդամենը միջոց է՝ «համաշխարհային պետություն» կառուցելու համար<sup>10</sup>, որով մարդկությունը

---

<sup>8</sup> Տե՛ս **Խաչատրյան Ա.Ա.**, նշվ. աշխ., էջ 98-99:

<sup>9</sup> Տե՛ս **Клемин А.В.** Суверенные права государства. М.: 2008, էջ 48:

<sup>10</sup> Տե՛ս **Леонтьев К.Н.** Византизм и славянство. М.: 2008. էջ 106:

ձգտում է ունենալ իր համար համընդհանուր բարգավաճման ու ծաղկման ժամանակաշրջան<sup>11</sup>:

Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության 111-րդ հոդվածի կարգավորումներին, ապա նշված 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Ազգային ժողովը վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում այն միջազգային պայմանագրերը, որոնք նախատեսում են Հայաստանի Հանրապետության անդամակցություն միջազգային կազմակերպությանը: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Ազգային ժողովը կառավարության առաջարկությամբ միջազգային պայմանագրերը վավերացնում, կասեցնում և չեղյալ է հայտարարում օրենքով՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Սահմանադրական հիշատակված նորմերի բովանդակությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունն իրավունք ունի անդամակցելու ինչպես այն միջազգային կազմակերպություններին, որոնց կանոնադրական խնդիրներն ուղղված են պետությունների միջև ընդհանուր բնույթի համագործակցության ապահովմանը, այնպես էլ այն կազմակերպություններին, որոնք օժտված են վերպետականության տարրերով:

Ինչպես հետևում է ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությունից, այն է՝ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել, Հայաստանի Հանրապետությունը չի կարող անդամակցել միջազգային այն կազմակերպություններին և հետևաբար՝ վավերացնել այն միջազգային պայմանագրերը, որոնք նախատեսում են Հայաստանի Հանրապետության անդամակցություն միջազգային կազմակերպությանը, եթե դրանք հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Այսինքն, սահմանադրական այս դրույթը որոշակի պահանջներ է ներկայացնում ոչ միայն միջազգային այն կազմակերպությունների ակտերի

---

<sup>11</sup> Տե՛ս **Тинберген Я.** Пересмотр международного порядка. М.: 2010. էջ 85:

նկատմամբ, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը, այլև ծառայում է որպես մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների գերակայության, պետության ինքնիշխանության, իրավական պետության և սահմանադրական կարգի այլ սկզբունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիք:

Այսպիսով, ընդհանրացնելով այս հետազոտության առարկայի շրջանակում սահմանադրական նորմերի համակարգային վերլուծության արդյունքները, կարելի է առանձնացնել հետևյալ եզրահանգումները.

1) պետության արտաքին քաղաքականությունը պետք է իրականացվի միջազգային իրավունքի նորմերի հիման վրա, ինչը նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունը միջազգային կազմակերպություններին անդամակցելիս պարտավոր է ղեկավարվել և անշեղորեն կատարել միջազգային իրավունքի նորմերով ստանձնած պարտավորությունները,

2) միջազգային կազմակերպություններին անդամակցությամբ Հայաստանի Հանրապետությունը պետք է հետապնդի հետևյալ նպատակների իրագործում. ա) բարիդրացիականություն, այսինքն՝ միջազգային կազմակերպության անդամ-պետությունների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատում՝ որպես պետության արտաքին քաղաքականության խաղաղ բնույթի դրսևորում, բ) փոխշահավետություն, այսինքն՝ միջազգային կազմակերպության շրջանակում բոլոր պետությունների հետ փոխադարձ ու շահավետ հարաբերությունների հաստատում, գ) հայկական Սփյուռքի հետ փոխկապվածություն, այսինքն՝ միջազգային կազմակերպության շրջանակում պետությունների հետ բարիդրացիական ու փոխշահավետ հարաբերություններում հայկական Սփյուռքի հետ կապերի ամրապնդումն ու զարգացումն ունեն ևս առանցքային նշանակություն,

3) միջազգային կազմակերպություններին անդամակցությամբ Հայաստանի Հանրապետությունը հայկական Սփյուռքի հետ կապերի համակողմանի զարգացումն ապահովելու միջոցով պետք է հետապնդի ոչ միայն արտաքին քաղաքականության ընդհանուր նպատակների իրագործում,

այլև միջազգային իրավունքի նորմերի հիման վրա իրականացնի ազգային ու իրավական արժեքաբանական նշանակություն ունեցող հայապահպանությանն ուղղված քաղաքականություն,

4) Հայաստանի Հանրապետությունը կարող է անդամակցել ինչպես այն միջազգային կազմակերպություններին, որոնց կանոնադրական խնդիրներն ուղղված են պետությունների միջև ընդհանուր բնույթի համագործակցության ապահովմանը, այնպես էլ այն կազմակերպություններին, որոնք օժտված են վերապետականության տարրերով,

5) Հայաստանի Հանրապետությունը չի կարող անդամակցել միջազգային այն կազմակերպություններին և հետևաբար՝ վավերացնել այն միջազգային պայմանագրերը, որոնք նախատեսում են Հայաստանի Հանրապետության անդամակցություն միջազգային կազմակերպությանը, եթե դրանք հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության՝ միջազգային կազմակերպություններին անդամակցելու կամ մասնակցելու իրավասությունը պայմանավորված չէ միայն հիշատակված սահմանադրական նորմերի առկայությամբ:

## **1.2. Եվրասիական տնտեսական միությանը պետությունների մասնակցության սահմանադրական կարգավորման հիմնահարցերը**

Միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացում կարևոր նշանակություն ունեն սահմանադրական սկզբունքներն ու նորմերը, որոնք միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության շրջանակին նոր առաջնահերթություններ են հաղորդում:

Ակնհայտ է, որ Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների սահմանադրական իրավունքի զարգացումն ուղղված է մասնավորապես միջպետական տնտեսական ինտեգրմանը: Այդպիսի

գործընթացի տեսանկյունից ներկա ժամանակաշրջանում կարելի է նկատել հետխորհրդային տարածքում միջպետական միություններին պետությունների մասնակցության սահմանադրական ապահովման ինստիտուտի որոշակի խնդիրների առկայության մասին:

Անշուշտ, համապատասխան սահմանադրական նորմերի բացակայությունը կամ ոչ ամբողջական ամրագրման առկայությունն արդեն իսկ կարող են արգելակել առանձին պետությունների և միջպետական միավորման իրավական համակարգերի օրգանական փոխգործակցությունը:

Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների սահմանադրական կարգավորումների բնույթը, մասնավորապես ներպետական իրավական նորմերի նկատմամբ միջազգային իրավունքի նորմերի գերակայությունը հանգեցնում են նրան, որ միջազգային կազմակերպության շրջանակում պայմանագրային գործընթացը ենթադրվում է, որ պետք է զարգանա՝ թուլացնելով նույն սահմանադրական սկզբունքների դերակատարությունը<sup>12</sup>: Այսպես, օրինակ, և՛ Հայաստանի Հանրապետության, և՛ Ռուսաստանի Դաշնության, և՛ մյուս անդամ-պետությունների Սահմանադրությունները եթե չեն նախատեսում դաշնային պետության ստեղծման հիմնադիր գործընթացներ, ապա նույնը չի կարելի ասել վերպետական միջազգային կազմակերպության անդամակցության իրագործման կառուցակարգերի մասին: Դրա համար էլ այդ խնդիրը լուծվում է միջազգային պայմանագրային հարաբերություններում<sup>13</sup>:

Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների սահմանադրական դրույթների առավել հատկանշական գծերից է այն, որ միջազգային կազմակերպություններում նրանց մասնակցության վերաբերյալ

---

<sup>12</sup> Տե՛ս **Примбетов С.Д.** Европейский Союз и Евразийское экономическое сообщество - использование опыта и перспективы сотрудничества. Информационно-аналитический журнал «ANALYTIC». Алматы, №3/2003. Էջ 8:

<sup>13</sup> Տե՛ս Предложения по законодательному регулированию миграционной политики государств - членов ЕврАзЭС (одобрены постановлением Бюро Межпарламентской Ассамблеи ЕврАзЭС от 14.11.2013 N5). Тематический сборник N2(8.1) Межпарламентской Ассамблеи ЕврАзЭС. Спб., 2014:



բոլոր երկրների սահմանադրությունները բովանդակում են համապատասխան նորմեր:

Տվյալ հարցում զգացվել է 1990-ական թվականների հետխորհրդային շրջանի քաղաքական տրամադրությունների ազդեցությունը՝ պետությունների անկախության և ինքնիշխանության վերաբերյալ սահմանադրական ամրագրումների շեշտադրմամբ: Դիտարկենք Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի Հանրապետության և Ղրղզստանի Հանրապետության սահմանադրությունների համապատասխան նորմերը<sup>14</sup>:

1) Բելառուսի Հանրապետության Սահմանադրության (1996թ.) 8-րդ հոդվածի 2-րդ մասը հռչակում է. «Բելառուսի Հանրապետությունը միջազգային իրավունքի նորմերին համապատասխան կամավորության հիման վրա կարող է անդամակցել միջպետական կազմավորումներին և դուրս գալ դրանցից»: Միաժամանակ նույն Սահմանադրության 116-րդ հոդվածի 4-րդ մասով անուղղակիորեն հաստատում է, որ միջպետական այն կազմավորումների ակտերը, որոնց մասնակցում է Բելառուսի Հանրապետությունը, ճանաչվում են որպես նրա իրավական համակարգի մաս և ենթակա են քննության Սահմանադրական դատարանի կողմից:

2) Ղազախստանի Հանրապետության Սահմանադրության (1995թ.) առանցքային հարցադրումներից է պետությունների միջև բարիդրացիության սկզբունքի հաստատումը (հոդված 8), ըստ որի. «Ղազախստանի Հանրապետությունը հարգում է միջազգային իրավունքի սկզբունքները և նորմերը, վարում է պետությունների միջև համագործակցության և բարիդրացիական հարաբերությունների, նրանց հավասարության և ներքին գործերին չմիջամտելու, միջազգային վեճերի խաղաղ կարգավորման

---

<sup>14</sup> Ст'я Конституция Российской Федерации Текст Конституции опубликован в "Российской газете" от 25 декабря 1993 г. N237., Конституция Республики Беларусь 1996 г., Конституция Республики Казахстан 1995 г., Конституция Республики Кыргызстан 1993 г. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (2015 թվականի փոփոխություններով):

քաղաքականություն՝ միաժամանակ հրաժարվելով առաջինը ռազմական ուժ կիրառելուց»:

3) Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության (1993թ.) 79-րդ հոդվածի համաձայն. «Ռուսաստանի Դաշնությունը կարող է մասնակցել միջպետական միավորումներին և միջազգային պայմանագրերին համապատասխան նրանց փոխանցել իր լիազորությունների մի մասը, եթե դա չի առաջացնում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակում և չի հակասում Ռուսաստանի Դաշնության սահմանադրական կարգի հիմունքներին»:

4) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 13-րդ հոդվածը հռչակում է. «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով»: Իսկ նույն Սահմանադրության 205-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. որ «...վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերը լուծվում են հանրաքվեների միջոցով»:

5) Ղրղըզստանի Հանրապետության Սահմանադրությամբ (1993թ.) չի շոշափվում միջպետական միավորումներում մասնակցության վերաբերյալ հարցը, սակայն արտաքին քաղաքականության մասով նշվում է, որ այն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու նպատակով:

Սահմանադրական հիշատակված նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ Եվրասիական տնտեսական միության բոլոր պետություններում միջազգային կազմակերպություններին անդամակցության հիմնախնդիրն ունի համընդհանուր նշանակություն, և այն բխում է բոլոր

պետությունների հետ բարիդրացիական ու փոխշահավետ հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունից:

Եվ միայն Բելառուսի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Սահմանադրություններում է ուղղակիորեն սահմանվում միջազգային կազմակերպություններին անդամակցությանն առնչվող առանձին հարցեր և դրանց լուծման մեխանիզմներ: Անշուշտ, այս առումով տեղին է նկատել պրոֆեսոր Օ.Գ.Ռումյանցևի հետևյալ նկատառումը. «...սահմանադրական կարգի հիմունքները՝ որպես ընդհանուր սկզբունքների համակարգ, որոշում են ոչ միայն հասարակության հիմնական ենթահամակարգերում հարաբերությունների վրա իրավական ներգործության բովանդակությունը, այլև միջպետական հեռանկարային ինտեգրացիայի նպատակով միջազգային կազմավորումներին պետությունների մասնակցությամբ օբյեկտիվորեն պայմանավորված գործընթացները»<sup>15</sup>:

Սակայն անհրաժեշտ է նկատել, որ Եվրասիական տնտեսական միության երկրների սահմանադրություններով այդպես էլ չեն սահմանվում միջազգային կազմակերպություններին ու միություններին անդամակցության հիմքերն ու երաշխիքները, որոնց առկայությունը կարծում ենք՝ կվկայեր սահմանադրական մակարդակում միջազգային այդ միությունների նոր իրավական ձևի ու դրա ուժի բարձրացման ու դերակատարության երաշխավորման մասին:

Անշուշտ, Սահմանադրությունը կարող է չպարունակել որոշակի Եվրասիական տնտեսական միությունում պետությունների անմիջական մասնակցության որոշակի մեխանիզմներ<sup>16</sup>, սակայն չպետք է բացառել, որ ինտեգրման զարգացման արդյունքում պետությունների նման իրավական ձևի

---

<sup>15</sup> Տե՛ս **Румянцев О.Г.** Основы конституционного строя России (понятие, содержание, вопросы становления). М., 2010, էջ 54:

<sup>16</sup> Տե՛ս **Барков А.В.** Правовой статус Евразийского экономического сообщества. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2003. էջ 4:

համագործակցությունը կարող է վերածվել համադաշնային պետության ստեղծմանը, ինչպես օրինակ դա իրականացվեց Եվրոպական միության երկրների փորձով<sup>17</sup>:

Այս հիմնավորմամբ պայմանավորված կարծում ենք՝ Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների սահմանադրական զարգացումների համատեքստում տեղին կլինի «Սահմանադրական կարգի հիմունքները» գլուխը լրացնել նոր հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. «Պետությունը միջազգային իրավունքի հիման վրա այլ պետությունների հետ կարող է մասնակցել միջազգային վերպետական կազմակերպություններին և դրանց մարմինների ստեղծմանը՝ միջազգային պայմանագրերին համապատասխան փոխանցելով իր լիազորությունների մասը, եթե դա համապատասխանում է իր ազգային շահերին»<sup>18</sup>:

Հարկ է նշել, որ Եվրասիական տնտեսական միությունն ըստ էության ստեղծում է միջպետական համագործակցության իրավական շրջանակներ, այդ թվում՝ միջազգային պայմանագրի կնքումից, այնուհետև միության համապատասխան իրավասությամբ օժտված մարմինների կողմից պարտադիր կատարման ենթակա որոշումներ ընդունելուց մինչև այդ միության մասնակից երկրների միջև տնտեսական ինտեգրացման գործընթացների հաստատումը: Սակայն, ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ միության այլ մասնակից պետությունների Սահմանադրությունները որևէ վերապահում չեն կատարում կամ մատնանշում կոնկրետ միությանը տվյալ պետության մասնակցության վերաբերյալ:

Իհարկե, անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ ԽՍՀՄ փլուզման արդյունքում առաջացած նորանկախ պետությունների ձևավորման ու կայացման շրջանում նկատվել են իրար հակասող ու իրարամերժ միտումներ:

---

<sup>17</sup> Տե՛ս **Шеленкова Н.Б.** Современные правовые проблемы европейской интеграции. Автореферат дисс. на соискание ученой степени доктора юридических наук. М., 2005. էջ 25:

<sup>18</sup> Այս լրացումը կարելի է նախատեսել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածում նոր 2-րդ մաս շարադրելու միջոցով: Տե՛ս Աշխատանքի հավելվածով բերված նախագիծը:

Մի կողմից՝ նորանկախ պետությունները ձգտում էին ինչքան հնարավոր է արագ ամրացնել անկախացած երկրի պետական ու ազգային ինքնիշխանությունը, մյուս կողմից՝ նրանք ձգտում էին պահպանել երբեմնի միասնական պետության շրջանակներում ձևավորված տնտեսական կապերը<sup>19</sup>:

Հայտնվելով «ազատ ինքնիշխանության» պայմաններում՝ Եվրասիական տնտեսական համագործակցության երկրների համար այդպես էլ որոշիչ էր դառնում միջազգային և սահմանադրական իրավունքի նորմերի հարաբերակցության հիմնախնդիրը: Այս տեսանկյունից չի կարելի չհամաձայնվել պրոֆեսոր Վ.Վիշնյակովի կարծիքին, որը միջազգային և սահմանադրական իրավունքի նորմերի հարաբերակցության հարցի լուծված չլինելը՝ կապված միջազգային կամ սահմանադրական իրավունքին առաջնահերթ վերապահում տալու հետ, հանգեցնում է նրան, որ Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգն իր հերթին բովանդակում էր հիմնականում հակասական ու տարերային տարրեր<sup>20</sup>:

Այս առումով հատկանշական է նաև այն, որ Եվրասիական տնտեսական միության կազմակերպման ու գործունեության իրավական համակարգում կարևորվեցին «Մաքսային միության մասին» և «Միասնական տնտեսական տարածքի մասին» 1999 թվականներին ընդունված պայմանագրերը, որոնք առաջադրեցին օրենսդրության մերձեցման և ունիֆիկացման խնդիրներ: Մասնավորապես դրանք վերաբերում են՝ ա) օրենսդրական և այլ իրավական ակտերի նախապատրաստման գծով գործունեության համակարգմանը, այդ թվում՝ ազգային օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով, բ) նմուշային (մոդելային) ակտերի ընդունմանը, գ) օրենսդրության մերձեցման ու ունիֆիկացման համար այլ միջոցառումների ձեռնարկմանը:

---

<sup>19</sup> Տե՛ս **Кузоакин Д.В.** Обеспечение единства экономического пространства Российской Федерации (конституционно-правовое исследование): Автореф. Дисс...канд. юрид. наук. Омск, 2005, էջ 15:

<sup>20</sup> Տե՛ս **Вишняков В.Г.** Право и межгосударственные объединения. СПб., 2003, էջ 78:

Սակայն անհրաժեշտ է նկատել, որ պետությունների օրենսդրության մերձեցմանն ուղղված ներպետական գործընթացները ոչ բոլոր դեպքերում են արդյունավետ լինում՝ հաշվի առնելով մասնակից պետությունների արտաքին քաղաքականության իրականացման բնագավառում տարբեր մոտեցումների առկայությունը:

Ընդ որում այս առումով անհրաժեշտ է կարևորել Եվրասիական տնտեսական միության երկրներում միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի կատարման միասնական համակարգի ներմուծման սկզբունքի նշանակությունը, ինչը ենթադրում է վավերացված միջազգային պայմանագրերի ներառում ազգային իրավական համակարգեր, գործող ազգային օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի համապատասխանեցում միջազգային պայմանագրերի դրույթներին, ազգային օրենսդրության համակարգից միջազգային իրավունքի նորմերին հակասող ակտերի «չեղարկում», ազգային օրենսդրության իրավական բացերի «լրացում», կնքված միջազգային պայմանագրերի կատարման գծով նոր ակտերի ընդունում և այլն:

Միաժամանակ հարկ է նկատել, որ միջազգային իրավական ընթացակարգերի արդյունքում էապես դանդաղեց սահմանադրական իրավունքի համապատասխան ինստիտուտների զարգացումը ինչպես Եվրասիական տնտեսական միության շրջանակում, այնպես էլ նրա առանձին մասնակից պետություններում:

Պրակտիկան ցույց է տալիս, որ այդ ինստիտուտների թերագնահատումը բացասական ներգործություն է ունենում միջազգային իրավունքի նորմերի կատարման վրա<sup>21</sup>:

---

<sup>21</sup> Միջազգային կազմակերպության իրավական ակտերի վերաբերյալ համեմատական իրավական վերլուծություն կատարվել է Բելառուսի Հանրապետության նախագահին առընթեր Ազգային կենտրոնի կողմից, որի արդյունքները քննարկվել են Եվրասիական տնտեսական միության՝ 2011 թվականի նոյեմբերի 17-ին Իրավական հարցերով մշտական հանձնաժողովի կողմից: Ст'я Постановление Постоянной комиссии по правовым вопросам МПА ЕвразЭС N9 от 17.11.2012г.:

Այսպես, անգամ այդ միության շրջանակներում առկա են ստորագրված տասնյակ պայմանագրեր ու համաձայնագրեր, որոնց, սակայն, մեծ մասն այդպես էլ ուժի մեջ չեն մտել: Դա անսպասելի չէր, քանի որ առանձին երկրների ազգային օրենսդրության ներդաշնակեցման իրավական ընթացակարգերի օգտագործումն այդպես էլ չի համապատասխանեցվել Եվրասիական տնտեսական միության նպատակին, այն է՝ Միության անդամ-պետությունների տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործումով նպաստել ժողովուրդների կենսամակարդակի բարձրացմանը:

Բնականաբար Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգի կայացման ու զարգացման գործում ինքնուրույն ու էական դերակատարությունը պետք է վերապահել սահմանադրական իրավունքին, որը կոչված է կարգավորելու այն հարաբերությունները, որոնք դրսևորվում են մասնակից պետությունների համատեղ ու կամարտահայտման արդյունքում և չեն կարող կրել բացառապես միջպետական կամ վերազգային բնույթ: Այստեղից հետևում է, որ Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգի զարգացման հիմքում պետք է դրված լինեն սահմանադրական որոշակի սկզբունքներ ու նորմեր, որոնք կարող են լրացվել միջազգային իրավունքի նորմերով<sup>22</sup>:

Իսկ դա ենթադրում է, որ սահմանադրական իրավունքն առավել արդյունավետորեն, իսկ գլխավորը, ավելի համարժեքորեն պետք է կարգավորի Եվրասիական տնտեսական միության շրջանակներում միջպետական փոխհարաբերությունների համակարգը: Սակայն այստեղ առանձնակի նշանակություն կարող են ունենալ այդ հարաբերությունների գիտական հետազոտություններն ու վերլուծությունները, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգի ներքին միասնականության ապահովման ուղղված պետությունների ձգտումները:

---

<sup>22</sup> Այս առումով տեղին է նկատել ՀՀ Սահմանադրության 205-րդ հոդվածի սահմանադրական կարգավորման կարևորությունը, ըստ որի՝ վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության հարցի լուծումն իրականացվում է բացառապես հանրաքվեի միջոցով:

Այսպիսով, ընդհանրացնելով կարելի է ներկայացնել հետևյալ եզրահանգումները:

Ա) Սակայն անհրաժեշտ է նկատել, որ Եվրասիական տնտեսական միության երկրների սահմանադրություններով այդպես էլ չեն սահմանվում միջազգային կազմակերպություններին պետությունների անդամակցության հիմքերն ու երաշխիքները, որոնց առկայությունը, կարծում ենք, կվկայեր սահմանադրական մակարդակում միջազգային վերապետական այդ կազմակերպությունների նոր իրավական ձևի ու դրա ուժի բարձրացման ու դերակատարության երաշխավորման մասին:

Բ) Սահմանադրությունը կարող է չպարունակել կոնկրետ Եվրասիական տնտեսական միությունում պետությունների անմիջական մասնակցության որոշակի մեխանիզմներ, սակայն չպետք է բացառել, որ ինտեգրման զարգացման արդյունքում պետությունների նման իրավական ձևի համագործակցությունը կարող է վերածվել համադաշնային պետության ստեղծմանը, ինչպես օրինակ դա իրականացվեց Եվրոպական միության երկրների փորձով:

Գ) Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների սահմանադրական զարգացումների համատեքստում անհրաժեշտ է Եվրասիական տնտեսական միությունների մասնակից պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» գլուխը լրացնել նոր հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. **«Պետությունը միջազգային իրավունքի հիման վրա այլ պետությունների հետ կարող է մասնակցել միջազգային վերապետական կազմակերպությունների և դրանց մարմինների ստեղծմանը՝ միջազգային պայմանագրերին համապատասխան փոխանցելով իր լիազորությունների մասը, եթե դա համապատասխանում է իր ազգային շահերին»:**



## ԳԼՈՒԽ II.

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

#### 2.1. Եվրասիական տնտեսական միության իրավունքը Հայաստանի Հանրապետության և մյուս անդամ պետությունների սահմանադրական իրավունքի համակարգում

Եվրասիական տնտեսական միության ստեղծումը պայմանավորված է պետությունների կողմից տնտեսական ինտեգրման գործընթացների իրականացման անհրաժեշտությամբ:

Ընդ որում այս կազմակերպության կազմավորման և գործունեության հիմքում անհրաժեշտ է առանձնացնել բացառապես տնտեսական բաղադրիչ բովանդակող հետևյալ երեք փուլերը՝ ա) մաքսային միությունը և ապրանքների ընդհանուր շուկան, բ) պետությունների միասնական ներքին շուկան՝ ապրանքների, ծառայությունների, կապիտալների և անձանց ազատ տեղաշարժման հնարավորությամբ, գ) համաձայնեցված արժույթային քաղաքականության իրականացում:

Սակայն, հետագայում չպետք է բացառել կամ կարելի է կանխատեսել նաև արդեն Եվրասիական միության շրջանակում քաղաքական ինտեգրման միության ստեղծման հնարավորությունը:

Կարևորելով քաղաքական ինտեգրացիայի նշանակությունը՝ այնուամենայնիվ անհրաժեշտ է նկատել, որ դա ամենից առաջ պետք է արտահայտվի վերպետական կազմակերպությանն անդամ-պետությունների իշխանական որոշակի լիազորությունների փոխանցմամբ:

Այսպես, օրինակ, սահմանադրական նոր կարգավորումների տրամաբանության շրջանակում ենթադրվում է, որ Հայաստանի Հանրապետության կողմից պետք է կատարվեն առնվազն Սահմանադրության 169-րդ (Սահմանադրական դատարան դիմելը), 205-րդ և այլ հոդվածների ամրագրած՝ վերաբերական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վերաբերյալ պահանջները:

Իհարկե, Եվրասիական տնտեսական միության նման զարգացումն իրավական ինտեգրման ոլորտում պետք է պայմանավորված լինի հենց այդ միության մարմինների լիազորությունների ընդլայնման միջոցով: Նման համոզմունքի մասին է սահմանվում Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի նախաբանում, համաձայն որի՝ պետությունները համոզմունք են հայտնում, որ Եվրասիական տնտեսական ինտեգրման հետագա զարգացումը համահունչ լինի Կողմերի ազգային շահերին:

Ընդ որում այդ լիազորությունների ծավալը և բովանդակությունը, ինչպես նաև մարմինների կառուցվածքը սահմանվում են համապատասխան միջազգային պայմանագրով, իսկ որոշումները պետք է ունենան պարտադիր (նորմատիվային) բնույթ և կատարվեն այդ միության անդամ-պետությունների կողմից: Այսպես, օրինակ, Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 33-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին համապատասխան՝ արտաքին առևտրային քաղաքականության ոլորտներում Միության մարմիններն ընդունում են անդամ-պետությունների կողմից պարտադիր կատարման ենթակա որոշումներ<sup>23</sup>:

Նույն միության անդամ - պետությունների առավել բարձր աստիճանի ինտեգրման կարևոր նախապայմաններից է այդ երկրների օրենսդրության լայն ու սերտ մերձեցումը: Սակայն այդ միության մարմինների կողմից ընդունված որոշումների պարտադիր կատարման համար անհրաժեշտ

---

<sup>23</sup> Տե՛ս. Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիր (29 մայիսի 2015 թվական), Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2015.01.21/3 (1092), հոդվ. 24:

կազմակերպահրավական հստակ կառուցվածքի բացակայությունն ինքնին հանգեցնում է այդ խնդիրների ոչ արդյունավետ իրականացմանը<sup>24</sup>:

Այդ առումով հարկ է նշել, որ Եվրասիական տնտեսական միության գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով սահմանադրահրավական կարգավորումների մակարդակում պարտադիր կատարման համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ նկատառումները.

ա) ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի կարգավորումների համատեքստում Եվրասիական տնտեսական միության իրավունքի նորմերի նկատմամբ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, սակայն այդ ակտերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում նախապատվությունը վերապահվում է առաջիններին, այստեղից իրավական նորմերի աստիճանակարգվածության սահմանումը կարևոր է հենց Եվրասիական տնտեսական միության ակտերի կարգավիճակի, տեսակների և Միության ընդհանուր իրավական համակարգում դրանց դերի ու նշանակության որոշման տեսանկյունից,

բ) Եվրասիական տնտեսական միության իրավունքի համակարգում ակտերի իրացման հստակ կառուցակարգերի ամրագրումը պետք է համահունչ լինի Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի ու դրա կառուցվածքի բովանդակությանը,

գ) Եվրասիական տնտեսական միության մարմինների իրավասության զարգացումը պայմանավորված պետք է լինի այդ մարմինների ու անդամ-պետությունների պետական մարմինների լիազորությունների օպտիմալացմամբ և փոխգործակցությամբ, որը ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածի կարգավորմանը համապատասխան նպատակաուղղվում է պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանը,

---

<sup>24</sup> Տե՛ս **Бабурин С.Н.** Российская реинтеграция: социально-экономические и политико-правовые проблемы. М., 2006, էջ 183:

դ) Եվրասիական տնտեսական միության իրավական ակտերի նախապատրաստման ու ընդունման և այդ ակտերի հետ անդամ-պետությունների ազգային օրենսդրության համապատասխանեցումն ու ներդաշնակեցումը պահանջում են այդ միության մարմինների և յուրաքանչյուր պետության իրավասու մարմինների գործունեության արդյունավետ կոորդինացման համար անհրաժեշտ կառուցակարգերի ստեղծում,

ե) Եվրասիական տնտեսական միության իրավական ակտերի իրացման նկատմամբ համապատասխան վերահսկողության իրականացման հիմքում ընկած է կազմակերպատիրավական ու համաձայնեցված այն միջոցների համակարգի առկայությունը, որն ապահովում է ինչպես այդ ակտերի, այնպես էլ ներպետական ու միջպետական ակտերի իրացման համար անհրաժեշտ պայմաններ:

Այնուամենայնիվ, անդրադառնալով Եվրասիական տնտեսական միության ակտերի իրագործման կազմակերպատիրավական կառուցակարգերին, անհրաժեշտ է նկատել, որ դրանք ուղղված են ազգային իրավական ակտերի ներդաշնակեցմանը (մերձեցմանն ու միասնականացմանը) և վերջիններիս՝ Եվրասիական տնտեսական միության ակտերին համապատասխանեցմանը:

Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերը կարող են համարվել իրագործված, եթե յուրաքանչյուր երկրի ներպետական ակտերով ձեռք է բերվում այդ միության շրջանակներում իրավահարաբերությունների համապատասխան ոլորտում իրավական կարգավորման ներդաշնակեցման համար անհրաժեշտ ընթացակարգ: Խոսքը վերաբերում է հենց այդ ակտերի մերձեցման ու միասնականացման դեպքերին<sup>25</sup>:

Անշուշտ, այս առումով կարևոր դերակատարություն ունի սահմանադրական իրավունքը: Վերլուծելով Եվրոպական միության պոզիտիվ

---

<sup>25</sup> Տե՛ս **Бекяшев К.А., Моисеев Е.Г.** Право Евразийского экономического союза. М., 2016, էջ 75:

փորձը նման հարցերում, հատկապես անդամ- պետությունների տարածքներում Եվրոպական միության իրավական ակտերի առանձին տեսակների ուղղակի գործողության մասով, անհրաժեշտ է հաշվի առնել, որ Եվրասիական տնտեսական միության մարմիններին վերազգային իրավասությամբ օժտելը հանգեցնում է տվյալ միության ակտերի հետևյալ բնութագրմանը.

ա) այդ ակտերի ուղղակի գործողության հնարավորության երաշխավորում, երբ դրանք դառնում են ազգային օրենսդրության մաս, չեն պահանջում անդամ-պետությունների համար դրանց պարտադիր լինելն արտահայտող հատուկ ընթացակարգեր,

բ) այդ ակտերի առաջնահերթության ապահովում, երբ ազգային իրավական ակտերի նկատմամբ և դրանց կիրառման մասով այդ ակտերն ունեն գերակայություն,

գ) Եվրասիական տնտեսական միության ակտերի կատարման պարտադիրության ապահովում, երբ այդ միության մարմինների կողմից ընդունված ակտերի հիման վրա սահմանվում են ուղղակի իրավասություն և լիազորությունների շրջանակ պետական մարմինների, իրավաբանական ու ֆիզիկական անձանց համար՝ վերջիններիս կողմից այդ ակտերի պարտադիր կատարման կապակցությամբ,

դ) Եվրասիական տնտեսական միության ակտերի նորմերի անմիջական կիրառում, երբ անդամ-պետությունների ազգային դատարանները պարտավոր են Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրության մեջ ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի առնել Եվրասիական տնտեսական միության դատարանի պրակտիկան (Սահմանադրության 81-րդ հոդվ., մաս 1):

Բացի այդ, հարկ է նկատել, որ Եվրասիական տնտեսական միության երկրներում միջազգային կազմակերպությունների մարմինների ակտերի

անմիջական կիրառումը նախատեսված է ոչ բոլոր պետություններում և կրում է հատվածական բնույթ<sup>26</sup>:

Այսպես, Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերի մասին (հոդվ. 15), Ղրղզստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին (հոդվ. 11), Ղազախստանի Հանրապետության (հոդվ. 11) և Տաջիկստանի Հանրապետության (հոդվ. 8) օրենքները բովանդակում են դրույթ այն մասին, որ ազգային խորհրդարանների կողմից միջազգային կազմակերպություններում այդ պետությունների մասնակցության վերաբերյալ վավերացման ենթակա պայմանագրերը, եթե այդպիսի պայմանագրերը նախատեսում են տվյալ պետությունների լիազորությունների և ինքնիշխան իրավունքների մի մասի փոխանցում կամ տվյալ պետությունների համար միջազգային կազմակերպությունների մարմինների որոշումների պարտադիր կատարման իրավասություն: Այս առումով անհրաժեշտ է նկատել, որ Եվրասիական տնտեսական միության երկրներից միայն Բելառուսի Հանրապետությունն է, որտեղ նման իրավակարգավորում չկա:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա և՛ սահմանադրական, և՛ օրենսդրական կարգավորումների մակարդակում սահմանվում է, որ Ազգային ժողովը վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում այն միջազգային պայմանագրերը, որոնք նախատեսում են միջազգային կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության անդամակցություն (Սահմանադրության 116-րդ հոդվ., մաս 1, կետ 3, «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվ., մաս 1, կետ 3):

---

<sup>26</sup> ԱՊՀ Տնտեսական դատարանի 2006 թվականի մարտի 10-ի թիվ 01-1/305 խորհրդատվական եզրակացությունը «2000 թվականի հոկտեմբերի 10-ի Եվրասիական տնտեսական ընկերակցության հիմնադիր պայմանագրի 1-ին հոդվածի երկրորդ մասի, 14-րդ հոդվածի առաջին մասի մեկնաբանության վերաբերյալ Եվրասիական տնտեսական ընկերակցության ինտեգրացիոն կոմիտեի հարցմամբ» // Տե՛ս նաև՝ [http // sudsng.org/](http://sudsng.org/),

Ինչ վերաբերում է այդ երկրներում Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերի անմիջական գործողության հետ կապված հարցերին, ապա դրանք որևէ ձևով օրենսդրական կարգավորումների չեն ենթարկվել:

Այսպես, Ղազախստանի Հանրապետության Սահմանադրության 4-րդ հոդվածը սահմանում է. «Ղազախստանի Հանրապետությունում գործող իրավունք են հանդիսանում Հանրապետության Սահմանադրության, Սահմանադրությանը համապատասխան օրենքների, այլ իրավական նորմատիվային ակտերի, միջազգային պայմանագրային և այլ պարտավորությունների, ինչպես նաև Ղազախստանի Հանրապետության Սահմանադրական խորհրդի և Գերագույն դատարանի նորմերը: Ղազախստանի Հանրապետության Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ և Հանրապետության ողջ տարածքում ուղղակի գործողության ուժ»: Միաժամանակ նույն Սահմանադրության 74-րդ հոդվածի համաձայն. «Ղազախստանի Հանրապետության Սահմանադրությանը ոչ համապատասխան ճանաչված օրենքները և միջազգային պայմանագրերը չեն կարող ստորագրվել կամ համապատասխանաբար վավերացվել և դրվել գործողության մեջ»:

Այնուհետև, Ղրղըստանի Հանրապետության Սահմանադրության 12-րդ հոդվածով սահմանվում է. «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ և ուղղակի գործողություն Ղրղըստանի Հանրապետությունում: Սահմանադրության հիման վրա ընդունվում են օրենքներ և այլ իրավական նորմատիվային ակտեր: Օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերն ու համաձայնագրերը, որոնց մասնակից է Ղրղըստանի Հանրապետությունը, ինչպես նաև միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքներն ու նորմերը Ղրղըստանի Հանրապետության օրենսդրության բաղկացուցիչ մասն են»:

Իսկ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 15-րդ հոդվածի համաձայն. «Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, ուղղակի գործողություն և գործում է

Ռուսաստանի Դաշնության ամբողջ տարածքում: Ռուսաստանի Դաշնությունում ընդունվող օրենքներն ու այլ իրավական ակտերը չպետք է հակասեն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությանը: Պետական իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինները, պաշտոնատար անձինք, քաղաքացիները և նրանց միավորումները պարտավոր են պահպանել Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը և օրենքները»: Նույն Սահմանադրության 125-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է. «...ոչ սահմանադրական ճանաչված ակտերը կամ դրանց առանձին դրույթները կորցնում են իրենց ուժը, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությանը չհամապատասխանող Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերը գործողության մեջ չեն կարող դրվել և ենթակա չեն կիրառման»:

Տաջիկստանի Հանրապետության Սահմանադրության 10-րդ հոդվածը հռչակում է. «Տաջիկստանի Սահմանադրությունն օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով, դրա նորմերն ունեն ուղղակի գործողության ուժ: Սահմանադրությանը հակասող օրենքներն ու այլ իրավական ակտերն իրավաբանական ուժ չունեն: Պետությունը և նրա բոլոր մարմինները, պաշտոնատար անձինք, քաղաքացիները և նրանց միավորումները պարտավոր են պահպանել և կատարել Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները: Տաջիկստանի Հանրապետության կողմից ճանաչված միջազգային իրավական ակտերը պետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Միջազգային իրավական ակտերին Տաջիկստանի Հանրապետության օրենքներն անհամապատասխան ճանաչվելու դեպքում կիրառվում են միջազգային իրավական ակտերի նորմերը»:

Բելառուսի Հանրապետության Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն. «...պետությունը, բոլոր նրա մարմինները և պաշտոնատար անձինք գործում են Սահմանադրության և նրան համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի շրջանակներում: Բելառուսի Հանրապետության Սահմանադրությունն օժտված է բարձրագույն



իրավաբանական ուժով: Օրենքները, դեկրետները, հրամանագրերը և պետական մարմինների այլ ակտերն արձակվում են Բելառուսի Հանրապետության Սահմանադրության հիման վրա և համապատասխան: Ընդ որում սահմանված կարգով Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավական ակտերը կամ դրանց առանձին դրույթներն իրավաբանական ուժ չունեն, իսկ միջազգային պայմանագրերի կնքումը, որոնք հակասում են Սահմանադրությանը, չեն կարող վավերացվել»<sup>27</sup>:

Իսկ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն. «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը», միաժամանակ նույն Սահմանադրության 116-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել»:

Հիշատակված սահմանադրական նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերի ուղղակի գործողության համար սահմանադրական հիմքի, ինչպես նաև պետությունների սահմանադրական իրավունքի համակարգում, այդ թվում՝ սահմանադրական սկզբունքների, ինստիտուտների, Եվրասիական տնտեսական միության ակտերի կիրառելիության և իրականացման կառուցակարգերի բնագավառում համաձայնեցված սկզբունքների մասին դեռևս խոսք չկա: Ավելին, տվյալ պետությունների տարածքներում Եվրասիական տնտեսական միությունը դեռևս օժտված չէ վերապետական լիազորություններով, իսկ նրա մարմինների ակտերը չեն կարող անմիջականորեն կիրառվել պետություններում<sup>28</sup>:

---

<sup>27</sup> Конституция Российской Федерации. М., 1993. N237, Конституция Республики Беларусь. Минск. 1996, Конституция Республики Казахстан, Астана, 1995., Конституция Республики Таджикистан, Душамбе, 1994, Конституция Республики Кыргызстан, Бишкек, 1993,

<sup>28</sup> Տե՛ս **Տիս Վ.Ս.** Международно-правовое регулирование таможенного сотрудничества

Թերևս այս մասով բացառություն կարող է կազմել միայն Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգիրքը, որը ՀՀ Սահմանադրական դատարանի 2017 թվականի հոկտեմբերի 10-ի ՍԴՈ-1381 որոշմամբ դիտարկվել է վերազգային իրավունքի այնպիսի աղբյուր, որի նորմերով կարգավորվում են ոչ միայն պետությունների միջև հորիզոնական, այլև պետության ներսում գործող ուղղահայաց հարաբերությունները<sup>29</sup>:

Սակայն, հաշվի առնելով միջազգային պրակտիկան այն առումով, որ վերազգային իրավունքի աղբյուր հանդիսացող ակտերի նկատմամբ նախնական սահմանադրական վերահսկողությունն օբյեկտիվորեն չի կարող երաշխավորել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների անմիջական գործողության, դրանց սահմանափակման համաչափության ու որոշակիության սկզբունքների խախտման, ինչպես նաև այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր ամրագրելու սահմանադրական պահանջների ապահովումը, ուստի Սահմանադրական դատարանն իր նույն որոշմամբ սահմանադրական վերահսկողության առարկա է դիտարկել միայն Հայաստանի Հանրապետության ստանձնած միջպետական հորիզոնական պարտավորություններն ամրագրող նորմերը (կետ 6)՝ միաժամանակ չբացառելով հետագա վերահսկողության կարգով նաև ներպետական ուղղահայաց հարաբերությունները կարգավորող նորմերը՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության տեսանկյունից (կետ 8):

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ նկատառումները.

---

государств-членов Евразийского экономического сообщества. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2006. էջ 12,

<sup>29</sup> Տե՛ս Սահմանադրական դատարանի 2017 թվականի հոկտեմբերի 10-ի ՍԴՈ-1381 որոշումը // [www.concourt.am/armenian/decisions/common/2017/pdf/sdv-1381.pdf](http://www.concourt.am/armenian/decisions/common/2017/pdf/sdv-1381.pdf):

1) Եվրասիական տնտեսական միության ինտեգրման գործընթացների զարգացման որակապես նոր աստիճան ապահովելու նպատակով կարևոր խնդիր պետք է դիտարկել պետությունների սահմանադրական իրավունքի համակարգում, այդ թվում՝ սահմանադրական սկզբունքների, ինստիտուտների, Եվրասիական տնտեսական միության իրավունքի համակարգի, ինչպես նաև այդ միության իրավական ակտերի կիրառելիության և իրականացման կառուցակարգերի բնագավառում համաձայնեցված սկզբունքների սահմանումը, ինչը յուրաքանչյուր անդամ-պետության ինքնիշխան իրավունքներից է,

2) հաշվի առնելով Եվրասիական տնտեսական միության իրավունքի համակարգում մասնակից պետության սահմանադրական իրավունքի առանցքային դերակատարությունը՝ անհրաժեշտ է ստեղծել այդ միության և պետությունների իրավասու մարմինների փոխգործակցության կազմակերպահրավական ձևեր և կառուցակարգեր, ինչն այդ միության գործունեության արդյունավետության ապահովման նպատակով կարող է դիտարկվել որպես կարևորագույն երաշխիք:

**2.2. Եվրասիական տնտեսական միության ակտերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում. հարաբերակցության հիմնախնդիրները սահմանադրահրավական կարգավորումների արդիականացման պայմաններում**

ՀՀ Սահմանադրության 5, 13, 19, 47, 116, 132-րդ և այլ հոդվածներով ամրագրված նորմերի համակարգային ու համալիր վերլուծության արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետությանը պետության հայեցողության սահմանների շրջանակում վերապահվում է իրավասություն՝ մասնակցելու միջազգային իրավական հարաբերությունների կարգավորմանն

ուղղված իրավական ակտերի նախապատրաստմանը, ընդունմանն ու իրականացմանը:

Եվրասիական տնտեսական միության շրջանակում անհրաժեշտ է կարևորել և միաժամանակ որոշել այդ կազմակերպության իրավական ակտերի բնույթը: Ընդ որում այդ ակտերի կատարման պարտադիրությամբ կամ մոդելային ու խորհրդատվական բնույթով պայմանավորված առանձնակի կարևորություն ունեն հետազոտության առարկա ոլորտի հարաբերությունները կարգավորող միջազգային իրավական ակտերի իրագործման կարգը, այդ ակտերով պայմանավորված ներպետական իրավական ակտերի ընդունումը պահանջող ընթացակարգը, միջազգային իրավական այլ ակտերի և Եվրասիական տնտեսական միության ակտերի ու միության անդամ-պետությունների ազգային իրավական ակտերի հարաբերակցության հիմնահարցերը, ինչպես նաև այդ կազմակերպության մարմինների իրավական կարգավիճակի, դրանց լիազորությունների ծավալի շրջանակները և այլն:

Անշուշտ, Եվրասիական տնտեսական միությունն իրապես կարող է հավակնել համաշխարհային տնտեսական և քաղաքական իշխանության կենտրոններից (բևեռներից) մեկի դերին, եթե այն կարողանա իրագործել իրեն վերապահված բոլոր հնարավորությունները:

Հարկ է կարևորել, որ Եվրասիական տնտեսական միության շրջանակում միջպետական հարաբերությունները հիմնվում են իրավապայմանագրային հենքը կազմող այնպիսի հիմնարար ակտերի վրա, ինչպիսիք են՝ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող՝ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրը<sup>30</sup>, այդ միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը, երրորդ կողմի հետ կնքվող՝ միության միջազգային պայմանագրերը, ինչպես նաև Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական

---

<sup>30</sup> Տե՛ս Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիրը // ՀՀՊՏ 2015.01.21/3(1092), հոդ.24:

խորհրդի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումներն ու կարգադրությունները, որոնք ընդունվել են Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով ու այդ միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված իրենց լիազորությունների շրջանակներում (հոդվ. 6):

Ընդ որում Եվրասիական տնտեսական միության իրավունքի համակարգում կենտրոնական տեղը պատկանում է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին (այսուհետ՝ Պայմանագիր), որով սահմանվում են այդ միության հիմնադրման կազմակերպահրավական հիմքերը: Մասնավորապես այդ պայմանագրի 6-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանվում է, որ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի և Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշումները ենթակա են կատարման անդամ-պետությունների կողմից դրանց ազգային օրենսդրությամբ նախատեսված կարգով<sup>31</sup>:

Միաժամանակ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումները գերակայում են Եվրասիական միջկառավարական խորհրդի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նկատմամբ, իսկ Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշումները գերակայում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նկատմամբ:

Այսինքն, նշված նորմերի բովանդակային վերլուծությունից անհրաժեշտ է նկատել, որ Եվրասիական տնտեսական միության իրավապայմանագրային հիմքում սահմանված չէ այդ միության շրջանակում ընդունվող իրավական ակտերի հարաբերակցությունն ազգային իրավական համակարգերի նկատմամբ, ինչը ենթադրում է նաև այն, որ մասնակիորեն են սահմանված այդպիսի ակտերի աստիճանակարգության (հիերարխիայի) և իրավա-

---

<sup>31</sup> St'u **Жигулин В. В.** Конституционно-правовые основы участия Российской Федерации и других государств в Евразийском экономическом сообществе: Дисс...канд. юрид. наук. М.: 2005, էջ 56:

բանական ուժի մեջ մտնելու հարցերը, բավարար չափով կարգավորված չեն Եվրասիական տնտեսական միության մարմինների կողմից ընդունվող որոշումների իրականացման մեխանիզմները:

Հարկ է նաև կարևորել, որ Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների իրավական համակարգերի փոխգործակցությանն ուղղված հարաբերությունների իրավական կարգավորման անհրաժեշտությունը, իրավական ակտերի մշակումը, դրանց հետագա ուսումնասիրությունն ու կարգավորումը պահանջում են միասնական իրավական տարածքի ձևավորում, այդ միության իրավական ակտերի արդյունավետությունն ապահովող և իրավական համակարգի հետ ազգային համակարգերի փոխազդեցության հարցերի խորքային հետազոտություն:

Հաշվի առնելով, որ Եվրասիական տնտեսական միությունը տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է, որն ունի միջազգային իրավասուբյեկտություն (հոդվ. 1, մաս 2), անհրաժեշտ է նաև նկատել, որ այդպիսի իրավասությամբ Եվրասիական տնտեսական միությունն օժտվում է ոչ միայն այդ պայմանագրով, այլև նույն միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված սահմաններում և ծավալներով (հոդվ. 6):

Անշուշտ, այդ իրավասության կրողները Եվրասիական տնտեսական միության պայմանագրի շրջանակներում գործող մարմիններն (հոդվ. 8) են՝ ա) Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը (այսուհետ՝ Բարձրագույն խորհուրդ), բ) Եվրասիական միջկառավարական խորհուրդը (այսուհետ՝ Միջկառավարական խորհուրդ), գ) Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), դ) Եվրասիական տնտեսական միության դատարանը (այսուհետ՝ Միության դատարան): Ընդ որում այդ մարմիններն իրենց լիազորությունների շրջանակում ընդունում են՝ կարգադրություններ, որոնք նշված պայմանագրով ընկալվում են որպես կազմակերպակարգադրական ակտեր, ինչպես նաև նորմատիվ իրավական բնույթի դրույթներ պարունակող ակտեր՝ որոշումների տեսքով (հոդվ. 2):

Միաժամանակ անհրաժեշտ է նկատել, որ նշված պայմանագրով այդ կազմակերպության մարմինների լիազորությունները կանոնակարգող 2, 8-19 հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ այդ մարմինների կողմից ընդունվող ակտերի համակարգն ունի որոշակի աստիճանակարգություն: Այսպես, նույն պայմանագրի 6-րդ հոդվածի 3-4-րդ մասերին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական միության մարմինների որոշումներն ու կարգադրությունները չպետք է հակասեն Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին և այդ միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին, միաժամանակ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների միջև հակասություններ առաջանալու դեպքում Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումները գերակայում են Եվրասիական միջկառավարական խորհրդի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների միջև հակասություններ առաջանալու դեպքում Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումները գերակայում են Եվրասիական միջկառավարական խորհրդի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նկատմամբ, իսկ Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշումները գերակայում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նկատմամբ:

Անշուշտ, Եվրասիական տնտեսական միության իրավական ակտերի համակարգն անհրաժեշտ է ընկալել Եվրասիական տնտեսական միության օրենսդրության հիմունքները, անդամ- պետությունների կողմից կնքվող միջազգային պայմանագրերը, իրենց իրավասությունների սահմաններում այդ միության մարմինների որոշումները, նորմատիվային իրավական այլ ակտերը, որոնք կազմում են այդ կազմակերպության իրավապայմանագրային հենքը<sup>32</sup>:

Միաժամանակ, հաշվի առնելով միջազգային այդ կազմակերպության ակտերի նորմատիվային նշանակությունը, դրանք կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի՝ ներկազմակերպական հարցերով (ներքին

<sup>32</sup> Տե՛ս **Жигулин В.В.** նշվ. աշխ., էջ 76:

կանոնակարգում) և Եվրասիական տնտեսական միության նպատակների անմիջական իրականացման հարցերով (արտաքին կանոնակարգում)<sup>33</sup>:

Այսպես, նշված ակտերի առաջին խումբը վերաբերում է ընթացակարգի կանոնների, անձնակազմի վարքագծի կանոնների ընդունմանը և միջազգային կազմակերպության գործունեությունը կարգավորող՝ այդ կազմակերպության մարմինների և անդամ-պետությունների համար պարտադիր այլ նորմերի սահմանմանը: Դրանց թվում են դասվում Եվրասիական տնտեսական միության մարմինների որոշումները, որոնք սահմանում են այդ միության մարմինների կառուցվածքը և գործունեության ուղղություններն ու կառուցակարգերը, այդ մարմինների միջև փոխհարաբերությունները, պաշտոններում նշանակման կարգը, Եվրասիական տնտեսական միության պաշտոնատար անձանց և ծառայող մարմինների կարգավիճակը և այլ ներկազմակերպական հարցեր:

Երկրորդ խմբի մեջ անհրաժեշտ է ներառել Եվրասիական տնտեսական միության նպատակների անմիջական իրականացման հարցերով ընդունված ակտերը (արտաքին կանոնակարգում), որոնք հասցեագրված են անդամ-պետություններին և սահմանում են վերջիններիս միջև, ինչպես նաև լիազորությունների շրջանակը երրորդ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում:

Բացի այդ, Եվրասիական տնտեսական միությունը ձեռք է բերում արտաքին կանոնակարգման բնույթ կրող միջազգային իրավունքի նորմեր սահմանելու իրավասություն՝ միջազգային այդ կազմակերպության հիմնադիր ակտի համապատասխան դրույթներին կամ համապատասխան միջազգային պայմանագրին հավանություն տալու միջոցով արտահայտված անդամ-պետությունների համաձայնության հիման վրա:

Ասվածի համատեքստում անհրաժեշտ է կարևորել այն հանգամանքը, որ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 13-րդ և 17-րդ հոդվածներին համաձայն՝ և՛ Բարձրագույն խորհրդի, և՛ Միջկառավարական

---

<sup>33</sup> Տե՛ս նաև՝ **Кашкин С.Ю., Четвериков А.О.** Право Евразийского экономического союза, М.: 2016, 15 11:



խորհրդի որոշումներն ու կարգադրություններն ընդունվում են ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

Միաժամանակ իրենց գործառույթային նշանակությամբ պայմանավորված Եվրասիական տնտեսական միության շրջանակում ընդունվող իրավական ակտերը կարելի է դասակարգել.

- ակտերի, որոնք ենթակա են համապատասխանեցման և ներդաշնակեցման միության անդամ-պետությունների ազգային օրենսդրություններում: Նման ակտերի առկայությունը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ դրանք ընդունվում են Եվրասիական տնտեսական միության նպատակների անմիջական իրացման հարցերով բոլոր անդամ-պետությունների մասնակցությամբ, որոնց կատարման պարտադիր լինելն ինքնին իրականացվում է նույն պետությունների կողմից ազգային իրավական ակտերի ընդունման միջոցով,

- խորհրդատվական ակտերի, որոնք բովանդակում են բացառապես խորհրդատվական բնույթի եզրակացություններ և պարզաբանումներ: Նման ակտերի պարագայում միության անդամ-պետությունները՝ելնելով երկրի շահերից, ինքնուրույնաբար են որոշում տվյալ ակտերի իրականացման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունն ազգային իրավակիրառական և օրենսդրական պրակտիկայում,

- և վերջապես ներքին ակտերի, որոնք կարող են ընդունվել բանաձևերի, կարգադրությունների և այլ ձևերով, որոնց կիրառման շրջանակը սահմանափակվում է Եվրասիական տնտեսական միության մարմինների աշխատակազմերի գործունեությամբ:

Այնուամենայնիվ, անդրադառնալով Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում Եվրասիական տնտեսական միության իրավական ակտերի տեղի ու նշանակության հարցի դիտարկմանը, անհրաժեշտ է նկատել հետևյալը. Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրը՝ որպես միջազգային կազմակերպության հիմնադիր ակտ, սահմանում է, որ անդամ-պետություններն ինքնուրույն են որոշում, թե երբ, ինչ կարգով,

ինչպիսի ազգային նորմատիվային իրավական ակտեր կարող են ընդունել՝ ի կատարումը նույն կազմակերպության մարմինների ակտերի, և սահմանել Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց իրացվելիության շրջանակները:

Սակայն անհրաժեշտ է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ Պայմանագրի 1-ին հոդվածով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության կողմից «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 1-ին հավելվածում նշված միջազգային այլ պայմանագրերի առանձին նորմերի կիրառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելու հետ կապված հարցերի վերաբերյալ նույն պայմանագրի 3-րդ հավելվածով նախատեսված պայմաններին ու անցումային դրույթներին համապատասխան<sup>34</sup>:

Դա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնում Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից իր տարածքում կիրառել Եվրասիական տնտեսական միության Բարձրագույն խորհրդի և Միջկառավարական խորհրդի որոշումներն ու կարգադրությունները:

Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից Հայաստանի Հանրապետության տարածքում կիրառվում են նույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից գործող՝ Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերը, ինչպես նաև Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի (Եվրասիական տնտեսական ընկերակցության միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) որոշումները, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

---

<sup>34</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագիրը. ՀՀՊՏ 2015.01.21/3 (1092), հոդ.54, տե՛ս նաև՝ **Бекяшев К.А., Моисеев Е.Г.** Право Евразийского экономического союза, М.: 2016, էջ 16:

(Մաքսային միության հանձնաժողովի) որոշումները՝ հաշվի առնելով Պայմանագրի 3-րդ հավելվածով սահմանված դրույթները (Պայմանագրի 2-րդ հոդված):

Հարկ է նկատել, որ Եվրասիական տնտեսական միության մարմինների նորմատիվային իրավական ակտերի պարտադիր լինելը ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Եվրասիական տնտեսական միության մյուս անդամ-պետություններում իրականացվում է դրանց ներպետական իրավական նորմատիվային ակտերով ամրագրելու և իրավաբանական ուժ տալու միջոցով:

Անշուշտ, Եվրասիական տնտեսական միության շրջանակներում միջպետական հարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգերը սահմանվում են սահմանադրական նորմերով:

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրության ակտերի աստիճանակարգությամբ առանձնահատուկ չեն ներկայացվել Եվրասիական տնտեսական միության ակտերը, այդուհանդերձ ակնհայտ է դառնում, որ բոլոր միջազգային իրավական ակտերը, այդ թվում՝ վավերացման ենթակա Եվրասիական տնտեսական միության ակտերը, վավերացվում են Ազգային ժողովի կողմից, եթե դրանք չեն հակասում ՀՀ Սահմանադրությանը (հոդվ. 116, 1-2-րդ մասեր):

Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ամրագրված են դրույթներ, որոնք անուղղակիորեն վերաբերում են Եվրասիական տնտեսական միությանը՝ սահմանելով այդ միության ակտերի տեղն ազգային իրավական համակարգում: Մասնավորապես Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով իրավական նորմերի աստիճանակարգության առանցքային սկզբունքներից է այն, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած Եվրասիական տնտեսական միության ակտերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Իսկ նույն Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասի տրամաբանությանը համապատասխան՝ Ազգային ժողովը վավերացնում,

կասեցնում կամ չեղյալ է հայտարարում Եվրասիական տնտեսական միության այն ակտերը՝ որոնք վերաբերում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին, ինչպես նաև պարտականություններին, նախատեսում են Հայաստանի Հանրապետության անդամակցություն միջազգային կազմակերպությանը, Հայաստանի Հանրապետության համար նախատեսում են ֆինանսական կամ գույքային պարտավորություններ և այլն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն. Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:

Կամ ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրության մեջ ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ Եվրասիական տնտեսական միության պայմանագրերի հիման վրա գործող մարմինների, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի պրակտիկան:

Հիշատակված նորմերի համակարգային վերլուծությունից կարելի է եզրակացնել հետևյալը.

- Հայաստանի Հանրապետությունում միջազգային իրավունքի և ներպետական իրավունքի փոխգործակցության մասով, ի տարբերություն ՀՀ Սահմանադրության 2005 թվականի խմբագրության, երկրի իրավական համակարգի կազմում բացակայում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքների ու նորմերի ներառման հանգամանքը, ինչը սակայն չի ենթադրում, որ Հայաստանի Հանրապետությունն այդ նույն սկզբունքների ու նորմերի հիման վրա չի կրում պարտավորություն: Այդ սկզբունքներն ի վերջո համընդհանուր նշանակություն ունեն ՄԱԿ-ի բոլոր անդամ-պետությունների համար, ընդ որում մի կողմից՝ դրանց աղբյուրը հենց միջազգային պայմանագրերն են, իսկ մյուս կողմից՝ դրանք համընդհանուր են ու հանրաճանաչ՝ առանց այդ սկզբունքների ամրագրման աղբյուրի նշման և գոյության:

- Հայաստանի Հանրապետությունում Եվրասիական տնտեսական միության ակտերի գործողությունը ճանաչվում է գերակա ազգային օրենսդրության նորմերի նկատմամբ, եթե դրանցում առկա են հակասություններ:

- Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրությանը հակասող Եվրասիական տնտեսական միության ակտերը չեն կարող վավերացվել, հետևաբար՝ դրանց նորմերը ենթակա չեն գործողության մեջ դնելու ու կիրառելու:

Հայաստանի Հանրապետության տարածքում Եվրասիական տնտեսական միության ակտերի նկատմամբ առաջնահերթությամբ օժտված է ՀՀ Սահմանադրությունը, սակայն իրավական նորմերի աստիճանակարգությանը համապատասխան այդ ակտերն ունեն գերակայություն ազգային օրենքների նկատմամբ:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրության և Եվրասիական տնտեսական միության ակտերի առավել ամբողջական հարաբերակցության վերաբերյալ կարելի է ձևակերպել հետևյալ բանաձևը. Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված Եվրասիական տնտեսական միության ակտերը չպետք է հակասեն Սահմանադրությանը, ինչը նշանակում է, որ այդ ակտերով ստանձնած միջազգային պարտավորությունները պետք է համապատասխանեն նույն Սահմանադրությանը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում այդ ակտերն օժտված են գերակայությամբ ազգային օրենքների նկատմամբ:

### 2.3. Հայաստանի Հանրապետության իրավական քաղաքականության հիմնախնդիրները Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգի շրջանակում

Եվրասիական տնտեսական միության շրջանակում պետությունների միջև համագործակցության առանցքային հարցերից է իրավական ոլորտի համաձայնեցված խնդիրների ու գործողությունների իրականացումը: Այս հանգամանքը ենթադրում է առաջնահերթության ապահովում հենց այդ պետությունների միջև միջազգային և ներպետական իրավական միասնական քաղաքականության իրականացման, այդ թվում այդ պետությունների ազգային օրենսդրության ներդաշնակեցման տեսանկյունից:

Այսպես, այս միության մասնակից պետության իրավական կյանքի պոզիտիվիստական զարգացման կարևորագույն եղանակներից մեկը պետք է լինի իրավական արդյունավետ քաղաքականության իրականացումը՝ նմանատիպ միջպետական կազմակերպությունների համար առկա միջազգային իրավական լավագույն փորձի օգտագործմամբ<sup>35</sup>: Այդ առումով անհրաժեշտ է նման ինտեգրացիայի իրավունքի գործիքակազմի օգտագործմամբ ապահովել պետության ազգային, վերպետական և միջազգային շահերի հաշվեկշռվածությունը, ինչպես նաև գլոբալացման պայմաններում ադապտացնել պետությանը դրա նեգատիվ դրսևորումներին:

Նախ, անհրաժեշտ է նկատել, որ միջազգային ինտեգրման գործընթացներում ակտիվորեն հաշվի են առնվում հատկապես Եվրոպական միության որպես միջպետական ինտեգրման ներուժի և հնարավորությունների իրագործման իրավական փորձը: Պատահական չէ, որ մասնագիտական գրականության մեջ Եվրոպական միությունը բնութագրվում է որպես «գլոբալացման գործընթացների սուր անկյունների հարթեցման ռազմավա-

---

<sup>35</sup> Մանրամասն տե՛ս **Malko A., Elistratova V.** Die Eurasische Wirtschaftsunion: Die Verwendung der europäischen rechtlichen Erfahrung der zwischenstaatlichen Integration // Rechtspolitisches Forum. - Trier, 2014. - S. 7 – 17:

րության նմուշային օրինակ»<sup>36</sup>, ինչը բացատրվում է միջազգային և սահմանադրական իրավունքի վրա այդ միության իրավունքի ներգործությամբ ու նշանակությամբ:

Բացի այդ, միջազգային կազմակերպությունների ժամանակակից իրավունքի զարգացման միտումները կանխորոշում են առաջին հերթին այդ կազմակերպությունների իրավական քաղաքականության իրականացման այնպիսի եղանակի առկայություն, ինչպիսին մասնակից պետությունների ազգային իրավունքի ներդաշնակեցումն ու մոտարկումն է, որոնց արդյունքում պետությունների իրավական համակարգին հաղորդվում է նոր բովանդակություն<sup>37</sup>:

Անշուշտ, այդ փորձի հաշվառմամբ Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգը նույնպես անմասն չի մնում համաշխարհային իրավական այդ գործընթացներից:

Բացի այդ, չնայած այն հանգամանքին, որ առկա են ազգային օրենսդրության նպատակների, խնդիրների ու դրա կիրառման առանձնահատկություններ, այնուամենայնիվ, այդ իրավակարգավորումների ներդաշնակեցումը և մոտարկումն ինքնին պետք է ենթադրեն դրանց արագ և միատարրության որոշակի աստիճանի ապահովում:

Այսպես, Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի նախաբանում վկայակոչվում է «Եվրասիական տնտեսական ինտեգրման մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի հռչակագիրը, որով Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի ներուժի ամբողջական իրագործման, այդ միության պայմանագրաիրավական համակարգի հետագա զարգացման ու կատարելագործման կարևորագույն ուղղություններից է դիտարկվում ազգային օրենսդրության ներդաշնակեցումը, դրա հետագա

---

<sup>36</sup> Տե՛ս **Авдийский В.И.** Национальная экономическая безопасность в условиях глобализации // Международное публичное и частное право. 2012. - N2. էջ 9:

<sup>37</sup> Տե՛ս **Жигулин В.В.** նշվ. աշխ., էջ 92:

մերձեցումը, ինչպես նաև պայմանագրի կարգավորման առարկա ոլորտները կարգավորող օրենսդրության միասնականացումը:

Նույն Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 2-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ եթե «օրենսդրության ներդաշնակեցում» եզրույթն ընկալվում է որպես անդամ-պետությունների օրենսդրության մոտարկում և ուղղված է առանձին ոլորտներում համանման կամ համադրելի նորմատիվ իրավական կարգավորում սահմանելուն, ապա այդ պետությունների կողմից իրականացվող համաձայնեցված, այդ թվում՝ իրավական քաղաքականությունը ենթադրում է իրավական կարգավորման այն չափով ներդաշնակեցում, այդ թվում՝ նույն միության մարմինների որոշումների հիման վրա, որն անհրաժեշտ է այդ միության՝ նշված պայմանագրով նախատեսված նպատակներն իրագործելու համար:

Միաժամանակ հիշատակված հոդվածի տրամաբանությունից նաև հետևում է, որ «միասնական տնտեսական տարածքը»՝ անդամ-պետությունների տարածքներից բաղկացած տարածքն է, որտեղ շուկայական սկզբունքների և ներդաշնակեցված կամ միասնականացված իրավական նորմերի կիրառման հիման վրա գործում են տնտեսության կարգավորման համանման (համադրելի) ու միատեսակ մեխանիզմներ, և որտեղ գոյություն ունի միասնական ենթակառուցվածք:

Այդուհանդերձ, ասվածի համատեքստում նույն պայմանագրի նախաբանով սահմանվում է, որ՝ անդամ-պետությունները մասնավորապես պետք է առաջնորդվեն իրենց երկրների տնտեսություններն ամրապնդելու և դրանց ներդաշնակ զարգացումն ու մերձեցումն ապահովելու ձգտումներով ապահովելով տնտեսական առաջընթաց այդ պետությունների առջև դրված ընդհանուր խնդիրների լուծմանն ուղղված համատեղ գործողությունների միջոցով<sup>38</sup>:

---

<sup>38</sup> Անհրաժեշտ է նկատել, որ 2017 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված և ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացված՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ-պետությունների միջև համապարփակ և ընդլայնված գործընկերության վերաբերյալ համաձայնագրի 22(2)-րդ և մի շարք



Բացի այդ, նշված պայմանագրի դրույթներով սահմանվում են ոչ միայն պետությունների օրենսդրության, այլև նույն ազգային օրենսդրության պահանջների ներդաշնակեցման (հոդվածներ 30, 31, 71, 89 և այլն), իսկ առանձին դեպքերում նաև՝ իրավական նորմերի կամ օրենսդրության պահանջների միասնականացման վերաբերյալ դրույթներ (Նախաբանով, հոդվ. 30):

Իսկ նույն պայմանագրի 32-րդ հոդվածով ամրագրված դրույթը սահմանում է միասնական մաքսային կարգավորում, ինչը ենթադրում է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի որպես մաքսային իրավահարաբերությունները կարգավորող մեկ միասնական ակտի ընդունման անհրաժեշտություն:

Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև պահանջը, որ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի շրջանակում Հայաստանի Հանրապետությունը պետք է ապահովի, որպեսզի Հայաստանի Հանրապետության տարածքում՝ որպես միասնական տնտեսական տարածքի բաղկացուցիչ մասում, շուկայական սկզբունքների և ներդաշնակեցված կամ միասնականացված իրավական նորմերի կիրառման հիման վրա գործեն տնտեսության կարգավորման նման (համադրելի) և միատեսակ մեխանիզմներ և ձևավորվի միասնական ենթակառուցվածք (հոդվ. 2, պարբ. 5):

Իսկ նույն պայմանագրի 2-րդ հոդվածի 13-րդ պարբերության և 5-րդ հոդվածի 2-րդ կետի համատեքստում Հայաստանի Հանրապետությունը ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակում պարտավորվել է նաև նշված միության շրջանակներում միջազգային պայմանագրերով նախատեսված սահմաններում և ծավալներով իրականացնել համաձայնեցված

---

այլ հոդվածներով ստանձնած պարտավորությունների տրամաբանությունից հետևում է, որ արդյունավետ գործող շուկայական տնտեսություն զարգացնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է իր տնտեսական ու ֆինանսական օրենսդրությունն ու քաղաքականությունը համաձայնագրով համաձայնեցված դեպքերում աստիճանաբար մոտարկել Եվրոպական միության տնտեսական ու ֆինանսական օրենսդրությանն ու քաղաքականությանը (տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2018 թվականի մարտի 16-ի ՍԴՈ – 1407 թվակիր որոշումը):

քաղաքականություն, այն է՝ տարբեր ոլորտներում իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը ենթադրում է իրավական կարգավորման ներդաշնակեցում:

Հիշատակված նորմերի համալիր վերլուծությունից կարելի է եզրակացնել.

ա) Եվրասիական տնտեսական միության մասնակից պետությունների իրավական ընդհանուր քաղաքականությունն ուղղված է ամրապնդելուն երկրների տնտեսությունները և դրանց ներդաշնակ զարգացումն ու մերձեցումը՝ օգտագործելով միասնականացված իրավական նորմերի կիրառման հիման վրա գործող տնտեսության կարգավորման համանման կամ համադրելի ու միատեսակ մեխանիզմներ,

բ) նման իրավական քաղաքականությունը կրում է համաձայնեցված բնույթ, քանի որ այն վերաբերում է պայմանագրի կարգավորման առարկա ոլորտների իրավական կարգավորումների միասնական նպատակներին, խնդիրներին ու կիրառման ընդհանուր մոտեցումներին,

գ) Եվրասիական տնտեսական միության մասին հիմնադիր պայմանագիրը նախատեսում է միասնական մաքսային կարգավորում՝ մաքսային օրենսգրքի՝ որպես մաքսային իրավահարաբերությունները կարգավորող միասնական ակտի միջոցով:

Այսպիսով, Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի և դրա բաղկացությունը կազմող այլ ակտերի համակարգային վերլուծությունից կարելի է առանձնացնել այդ միության մյուս պետությունների հետ համաձայնեցված Հայաստանի Հանրապետության իրավական քաղաքականության իրականացման հետևյալ ձևերը.

1) օրենսդրության մոտարկում կամ մերձեցում, երբ որոշվում են տվյալ ոլորտում պետությունների իրավական ընդհանուր ու միասնական քաղաքականության ուղղվածությունը, մոտարկման շրջանակն ու ձևերը,

2) ազգային օրենսդրության ներդաշնակեցում, երբ համաձայնեցվում են պայմանագրի կարգավորման առարկա ոլորտներում իրավական

կարգավորումների նպատակը, խնդիրները, դրանց կիրառման վերաբերյալ ընդհանուր մոտեցումները,

3) Եվրասիական տնտեսական միության իրավունքի շրջանակում միասնական իրավական ակտի ընդունում, երբ մշակվում և պետությունների համար ուժի մեջ է մտնում համապարտադիր ու միասնական իրավական նորմեր բովանդակող ակտ:

Նշվածից հետևում է, որ համաձայնեցված իրավական քաղաքականության յուրաքանչյուր ձևի շրջանակում նախապատվությունը պետք է տրվի այս կամ այն իրավական ակտին: Այսպես, ազգային օրենսդրության մոտարկման ձևի պարագայում պետություններն ազգային օրենսդրության մշակման ու ընդունման ժամանակ հաշվի են առնում Եվրասիական տնտեսական միության իրավական քաղաքականության ուղղվածության ու միասնականության ապահովման անհրաժեշտությունը, այդ միության մարմինների կողմից ընդունված ակտերի ու դրանց կիրառման վերաբերյալ ընդհանուր ու միասնական մոտեցումները, հաստատված ծրագրերի և առաջադրված խնդիրների պահանջներն ու դրանց լուծման հնարավոր տարբերակների առկայությունը:

Այնուհետև, ազգային օրենսդրության ներդաշնակեցումն ինքնին ենթադրում է համաձայնեցված իրավական քաղաքականության իրականացում՝ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի կարգավորման առարկա ոլորտներում իրավակարգավորումների նպատակների, խնդիրների ու դրանց կիրառման վերաբերյալ ընդհանուր մոտեցումների հաշվառմամբ<sup>39</sup>:

Ինչ վերաբերում է միասնական իրավական ակտերի ընդունմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ դրանք ընդունվում են Եվրասիական տնտեսական միության իրավունքի շրջանակում, ունեն համընդհանուր ու համապարտադիր բնույթ, ինչպես նաև կատարման առումով վերաբերում են ինչպես անդամ-

---

<sup>39</sup> Տե՛ս **Нарышкин С.Е., Хабриева Т.Я.** К новому парламентскому измерению евразийской интеграции // Журнал российского права. – М., 2012. – N8. էջ 13:

պետություններին, այնպես էլ վերջիններիս իրավաբանական ու ֆիզիկական անձանց: Ընդ որում այս ակտերի իրավակիրառական պրակտիկայում չպետք է բացառել ազգային օրենսդրության հետ հնարավոր ու պարբերական բնույթի հակասությունների առկայությունը<sup>40</sup>: Թերևս նման պրակտիկայից հրաժարվելու լավագույն տարբերակն այն է, որ վերջինս կարելի է փոխարինել արդյունավետ իրավակարգավորումների գործուն մեխանիզմների սահմանումով:

Հարկ է նկատել, որ Եվրասիական տնտեսական միության շրջանակում պետությունների կողմից ընդունված ակտերի նշանակությունը, նպաստակներն ու խնդիրները, ինչպես նաև այդ ակտերի միջև հարաբերակցության սահմանները կարող են փոփոխվել հենց նույն պետությունների կողմից իրականացվող համաձայնեցված իրավական քաղաքականության արդյունքում: Ընդ որում այդ ակտերի ճիշտ և օպտիմալ համակցությունն ուղղակիորեն պետք է բխի ազգային օրենսդրության մոտարկման, ներդաշնակեցման և միասնական իրավական ակտերի ընդունման ձևերի բովանդակությունից ու նշանակությունից: Ակնհայտ է, երբ խոսքը վերաբերում է հետխորհրդային տարածքում ինտեգրացիայի գործընթացներին, որը, ի տարբերություն աշխարհի մյուս տարածաշրջանային գործընթացների, առավել նպաստավոր պայմաններ են ստեղծվում այդ փոխգործակցությունների համար, քանի որ դրանք ընկալվում են որպես պատմականորեն պոզիտիվ զարգացման արդյունք<sup>41</sup>:

Անշուշտ, Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի տրամաբանությունից նաև հետևում է, որ անդամ- պետությունները շահագրգռված են այդ միության շրջանակներում միջպետական հարաբերությունների միասնական ու լիարժեք կարգավորմամբ: Ասվածը

---

<sup>40</sup> Մանրամասն տե՛ս նաև՝ **Скуратов Ю.И.** Евразийская парадигма и некоторые проблемы интеграции на пространстве Содружества Независимых Государств (СНГ) // Государство и право. 2015. N2. էջ 90-99:

<sup>41</sup> Տե՛ս **Курбанов Р.А.** Евразийское право: процессы формирования // Государство и право. – М., 2015. – N9. էջ 71.

պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ ազգային օրենսդրությունների մոտարկման, ներդաշնակեցման և միասնականացման նկատմամբ համաձայնեցված մոտեցումների բացակայությունն ինքնին կրնակավի որպես պետությունների իրավական քաղաքականության ընդհանրության ու միասնականության խաթարում:

Նշվածի համատեքստում հարկ է նաև նշել, որ Եվրասիական տնտեսական միության շրջանակում Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցման համար կարևորվում է նաև կազմակերպչական-իրավական որոշակի կառուցակարգերի առկայությունը, որոնք թեև չեն կարող դիտարկվել որպես բոլոր խնդիրների լուծման միջոց, այնուամենայնիվ նման կառուցակարգերի բացակայությունն ինքնին որևէ ձևով չի կարող նպաստել պետությունների միջև տնտեսական համագործակցության զարգացմանը մաքսային միության և միասնական տնտեսական տարածքի ձևավորման տեսանկյունից<sup>42</sup>:

Այսպես, անդրադառնալով Եվրասիական տնտեսական միության ակտերին Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրության ներդաշնակեցման ու համապատասխանեցման կազմակերպչական-իրավական կառուցակարգերին, անհրաժեշտ է կարևորել հետևյալները.

1) Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրության ներդաշնակեցումը որպես իրավական գործընթաց խարըսխվում է ներպետական ազգային ակտերի ընդունման իրավական այնպիսի կառուցակարգի վրա, որի իրականացման արդյունքում ազգային օրենսդրության նորմերը մասնավորապես իրենց բովանդակությամբ, ուղղվածությամբ, իրավական ազդեցությամբ և իրավական կարգավորման հնարավոր հետևանքներով ու սկզբունքներով համապատասխանեցվում են Եվրասիական տնտեսական միության իրավական ակտերի նորմերի հետ: Հարկ է նկատել, որ նշված

---

<sup>42</sup> Հարկ է նշել, որ դեռևս Եվրասիական տնտեսական համագործակցության շրջանակներում նույնպես խոսքը իրավական ակտերի իրացման կազմակերպչական-իրավական կառուցակարգերի կատարելագործման անհրաժեշտության մասին: См. Приложение 1 к постановлению Бюро МПА ЕврАзЭС от 17.11.05 N7.

կառուցակարգի պարագայում նման համապատասխանեցումը թույլ է տալիս կարգավորման ընդհանուր կանոնների սահմանման միջոցով գնահատել անգամ պետությունների տնտեսության վիճակի տարբերությունները:

2) Կազմակերպչական-իրավական առումով ընթացակարգային գրեթե նմանատիպ կառուցակարգ է ենթադրում Եվրասիական տնտեսական միության ակտերին Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրության մոտարկումը: Ընդ որում վերջինիս իրականացման պարագայում ազգային օրենսդրության ընդունումը կատարվում է այն տրամաբանությամբ, որ դրանք իրենց բովանդակությամբ ու ուղղվածությամբ հիմնականում պետք է համապատասխանեն կամ գոնե չհակասեն Եվրասիական տնտեսական միության իրավական ակտերին:

3) Բովանդակային առումով այլ նշանակություն ունի Եվրասիական տնտեսական միության մասնակից պետությունների իրավական ակտերի միասնականության ապահովման կազմակերպչական-իրավական կառուցակարգը: Այն նույնպես դիտարկվում է Եվրասիական տնտեսական միության իրավական ակտերին ազգային օրենսդրության համապատասխանեցման իրավական գործընթաց, որի ժամանակ ազգային օրենսդրության նորմերն ամբողջությամբ նույնական են կամ համընկնում են անդամ-պետությունների կողմից սահմանված իրավական չափանիշների և Միության իրավական ակտերի դրույթների հետ:

4) Կազմակերպչական-իրավական հաջորդ կառուցակարգը Եվրասիական տնտեսական միության իրավական ակտերի իմպլեմենտացիան է, որը միջազգային իրավունքի տեսանկյունից անհրաժեշտ է ընկալել որպես իրավական այնպիսի գործընթաց, երբ Եվրասիական տնտեսական միության իրավունքի և Հայաստանի Հանրապետության ներպետական իրավունքի հարաբերակցության արդյունքում Եվրասիական տնտեսական միության իրավունքի նորմը ներմուծվում է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգ:

5) Եվրասիական տնտեսական միության իրավական ակտերի համակարգը որպես ինքնուրույն ընթացակարգային կառուցակարգ կարևորվում է այն հիմնավորմամբ, որ այդ համակարգ են ներառված ոչ միայն միջազգային պայմանագրերը, այլև այդ միության մարմինների կողմից ընդունված ակտերը, որոնք իրենց համընդհանուր նշանակությամբ համապարտադիր են անդամ-պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և իրավաբանական ու ֆիզիկական անձանց համար:

6) Եվրասիական տնտեսական միության դատարանի ակտերը, որոնք այդ միության իրավական համակարգի առանցքային տարրերից են և դիտարկվում են որպես մասնակից պետությունների միջև ծագած հակասությունների ու վեճերի լուծման արդյունավետ միջոցներ:

7) Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների իրավական ակտերը որպես ինքնուրույն ընթացակարգային կառուցակարգ առանձնանում են այն առումով, որ այդ ակտերն ուղղված են այդ միության իրավական ակտերով սահմանված խնդիրների, նպատակների ու գործառույթների իրականացմանը:

Ակնհայտ է, որ բոլոր թվարկված կառուցակարգերը ենթադրում են Եվրասիական տնտեսական միության և մասնակից պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության իրավական կանոնակարգումների միասնականության ապահովում:

Բացի դրանից, Եվրասիական տնտեսական միության մասնակից պետությունների ինտեգրացիայի ոլորտում համաձայնեցված իրավական քաղաքականությունն ինքնին կարևոր գործոն է այդ միության իրավական համակարգի ձևավորման համար: Թերևս նման արդյունավետ ու լիարժեք իրավական համակարգի կառուցման պարագայում հնարավոր կլինի Եվրասիական միասնական տնտեսական տարածքին զուգահեռ ստեղծել իրավական միասնական տարածք: Այն հնարավոր կլինի միայն մասնակից պետությունների, այդ թվում նաև՝ Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող համաձայնեցված իրավական քաղաքականության

արդյունքում, ինչն առանձնահատուկ գիտական ու գործնական նշանակություն ունի:

Ի վերջո, այդ հանգամանքը կարևորվում է նաև այն հիմնավորմամբ, որ Եվրասիական տնտեսական միության միասնական իրավական համակարգի ձևավորման հիմնախնդրի լուծումը նպատակաուղղված է այդ վերպետական կազմակերպության գործունեության արդյունավետ իրավական ապահովման մեխանիզմների ձևավորմանը<sup>43</sup>:

Ընդ որում Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգը որպես համալիր իրավական կատեգորիա ենթադրում է իրավական որոշակի տարրերի, երևույթների ու միջոցների ամբողջություն, որոնք ապահովում են Եվրասիական տնտեսական ինտեգրման զարգացումը և կարգավորում այդ գործընթացների հետ կապված հասարակական հարաբերությունները:

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ այդ իրավական համակարգի առաջնային օղակը պետք է դիտարկել տվյալ միության օրենսդրության համակարգը, որը ներառում է հիմնադիր պայմանագրերն ու միության շրջանակներում Եվրասիական տնտեսական միության մարմինների կողմից ընդունված ակտերը:

Եվրասիական տնտեսական միության միասնական իրավական համակարգը՝ որպես Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքում հասարակության իրավական կյանքի ու գործունեության կազմակերպական հենք և օբյեկտիվ իրականություն, առանցքային նշանակություն ունի ոչ միայն տնտեսական ինտեգրացման, այլև ազգային միասնական իրավական քաղաքականության իրականացման գործընթացներում:

Եվրասիական տնտեսական միության շրջանակում ընդունված պայմանագրերով ամրագրված նորմերի համալիր վերլուծությունից կարելի է

---

<sup>43</sup> Տե՛ս **Матузов Н.И.** Актуальные проблемы теории права. Саратов, 2014. էջ 94:



առանձնացնել այդ միության միասնական իրավական համակարգի հիմքում ընկած որոշակի սկզբունքներ: Դրանք են.

ա) ազգային օրենսդրության ներդաշնակեցում պահանջող օրենսդրության ոլորտների սահմանում,

բ) համաձայնեցված սկզբունքների ու միասնական իրավական չափանիշների հիման վրա մասնակից պետությունների կողմից միասնական իրավական քաղաքականության իրականացում,

գ) ազգային օրենսդրությունների համեմատական իրավական վերլուծությունների իրականացում՝ Եվրասիական տնտեսական միության ակտերին ազգային օրենսդրության համապատասխանեցման աստիճանի գնահատման առումով,

դ) ազգային օրենսդրության նորմերի նկատմամբ միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների գերակայության երաշխավորում,

ե) Եվրասիական տնտեսական միության ակտերի և ազգային օրենսդրության ակտերի միջև ներքին կապի ու համակարգվածության ապահովում:

Այսպիսով, ընդհանրացնելով Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգի համատեքստում Հայաստանի Հանրապետության իրավական քաղաքականության հիմնախնդիրների հետազոտության արդյունքները՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

1) Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգի համատեքստում Հայաստանի Հանրապետության իրավական քաղաքականությունն ընկալվում է որպես այդ համակարգի ձևավորման գործոն, որն ուղղված է Եվրասիական տնտեսական միության շրջանակներում համաձայնեցված սկզբունքների ու միասնական իրավական չափանիշների հիման վրա այդ միության ակտերի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանեցմանը, այդ թվում՝ ներդաշնակեցմանն ու մոտարկմանը, ներքին կապի ու համակարգվածության ապահովմանը:

2) Հայաստանի Հանրապետության իրավական քաղաքականությունը Եվրասիական տնտեսական միության մասնակից պետությունների իրավական

ընդհանուր քաղաքականության համատեքստում կրում է համաձայնեցված բնույթ, ուղղված է ամրապնդելուն երկրի տնտեսությունը, դրա ներդաշնակ զարգացումն ու մերձեցումը՝ օգտագործելով միասնականացված իրավական նորմերի կիրառման հիման վրա գործող տնտեսության կարգավորման համանման կամ համադրելի ու միատեսակ մեխանիզմներ:

3) Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգի համատեքստում Հայաստանի Հանրապետության իրավական քաղաքականություն իրականացվում է ազգային օրենսդրության մոտարկման, ներդաշնակեցման և Եվրասիական տնտեսական միության իրավունքի շրջանակում միասնական իրավական ակտի ընդունման ձևերի միջոցով, որոնցից յուրաքանչյուրի շրջանակում նախապատվությունը տալով այս կամ այն իրավական ակտին՝ Եվրասիական տնտեսական միության նպատակների, խնդիրների ու դրանց կիրառման վերաբերյալ ընդհանուր մոտեցումների, ինչպես նաև իրավական քաղաքականության ուղղվածության ու միասնականության ապահովման հանգամանքների հաշվառմամբ:

4) Եվրասիական տնտեսական միության իրավունքի շրջանակում միասնական իրավական ակտերի պրակտիկայում ազգային օրենսդրության հետ հնարավոր ու պարբերական բնույթի հակասությունները բացառելու նպատակով անհրաժեշտ է հրաժարվել այդ պրակտիկայից և դիտարկել համապատասխան իրավակարգավորումների համար գործուն մեխանիզմներ սահմանելը:

5) Եվրասիական տնտեսական միության շրջանակում Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցման հիմքում ընկած են կազմակերպչական-իրավական որոշակի կառուցակարգեր, որոնք կոչված են երաշխավորելու Հայաստանի Հանրապետության իրավական կանոնակարգումների միասնականության ապահովումը: Խոսքը Եվրասիական տնտեսական միության օրենսդրությանը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանեցման, մոտարկման, միասնականության ապահովման, իմպլեմենտացիայի, ինչպես նաև Եվրասիական տնտեսական

միության դատական ակտերի և մասնակից պետությունների իրավական ակտերի՝ որպես ինքնուրույն ընթացակարգային կառուցակարգերի մասին է:

6) Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգը որպես համալիր իրավական կատեգորիա ենթադրում է իրավական որոշակի տարրերի, երևույթների ու միջոցների ամբողջություն, որոնք ապահովում են Եվրասիական տնտեսական ինտեգրման զարգացումը և կարգավորում այդ գործընթացների հետ կապված հասարակական հարաբերությունները: Եվրասիական տնտեսական միության միասնական իրավական համակարգի՝ որպես Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքում հասարակության իրավական կյանքի ու գործունեության կազմակերպական հենքի և օբյեկտիվ իրականության հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները. ա) ազգային օրենսդրության ներդաշնակեցում պահանջող օրենսդրության ոլորտների սահմանում, բ) համաձայնեցված սկզբունքների ու միասնական իրավական չափանիշների հիման վրա մասնակից պետությունների կողմից միասնական իրավական քաղաքականության իրականացում, գ) ազգային օրենսդրությունների համեմատական իրավական վերլուծությունների իրականացում՝ Եվրասիական տնտեսական միության ակտերին ազգային օրենսդրության համապատասխանեցման աստիճանի գնահատման առումով, դ) ազգային օրենսդրության նորմերի նկատմամբ միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների գերակայության երաշխավորում, ե) Եվրասիական տնտեսական միության և ազգային օրենսդրության ակտերի միջև ներքին կապի ու համակարգվածության ապահովում:

### ԳԼՈՒԽ III.

## **ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ**

### **3.1. Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և Եվրասիական տնտեսական միության վերաբերականության հարաբերակցության հիմնախնդիրները սահմանադրական ժամանակակից կարգավորումների համատեքստում**

Ժամանակակից սահմանադրություն ունեցող պետությունների համար առանցքային նշանակություն ունեն պետության ինքնիշխանության և վերաբերական միջազգային կազմակերպություններին պետության անդամակցության հարաբերակցության հիմնախնդիրներն ու դրանց լուծումները<sup>44</sup>: Ընդ որում այս հիմնախնդիրների մեջ հիմնական հարցադրումը վերաբերում է հետևյալին. պետության ինքնիշխանությունը սահմանափակվո՞ւմ է արդյոք վերաբերական միջազգային կազմակերպությանն անդամակցելիս:

Նախ, անդրադառնանք պետության ինքնիշխանությանը, որը սահմանադրական իրավունքի տեսանկյունից դիտարկվում է ոչ միայն պետության հիմնական բնութագրիչ, այլև սահմանադրական կարգի հիմունքների համակարգում՝ առաջինը մյուս հավասար բնութագրիչների նկատմամբ: Դա հավաստվում է գրեթե բոլոր երկրների սահմանադրական կարգավորումներով, այդ թվում նաև՝ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված նորմի բովանդակությամբ, այն է՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական

<sup>44</sup> Ժամանակակից արևմտյան դոկտրինայում տարածում է ստացել «վերազգային» եզրույթը, որը որպես ընդհանուր կանոն նույնականացվում է «վերաբերական» հասկացության բովանդակության ու նշանակության հետ: Տե՛ս նաև՝ **Հարությունյան Ա.Շ.**, Եվրոպական միության իրավունքի հիմունքները (Սահմանադրական իրավունք), Եր., 2011, էջ 210:

պետություն է: Միաժամանակ պետության ինքնիշխանության սկզբունքի մասին գրվում է նույն Սահմանադրության նախաբանում և Հայաստանի անկախության մասին հռչակագրում:

Չնայած այն հանգամանքին, որ ժամանակակից հետազոտողների զգալի մասը պետության ինքնիշխանության իրավական ընկալումը շատ դեպքերում փոխառնչում են պետությունների տարածքային բաղադրիչի հետ<sup>45</sup>, այնուամենայնիվ սահմանադրական կարգի նշված սկզբունքի ամրագրմանը զուգընթաց՝ «պետության ինքնիշխանություն» եզրույթի հետագա ամրապնդումը, ինչպես նաև դրա իրավական ու գործառույթային նշանակությունը որոշակի փոփոխությունների են ենթարկվում միջազգային ինտեգրացիայի գործընթացների համատեքստում:

Այսպես, Սահմանադրական դատարանն իր՝ 2014 թվականի նոյեմբերի 14-ի ՍԴՈ-1175 որոշմամբ, անդրադառնալով՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցին, սահմանադրաիրավական տեսանկյունից պետության ինքնիշխանությունը դիտարկեց երեք հիմնական բնութագրիչների՝ ազգային, ժողովրդական և պետական ինքնիշխանությունների միասնության համատեքստում: Ընդ որում սահմանադրական դատարանի որոշման տրամաբանությանը համապատասխան, եթե ազգային ինքնիշխանությունը դիտարկվում է որպես ազգի իրավունք՝ ինքնուրույն և ազատորեն որոշելու իր քաղաքական կեցությունը, մշակութային ու սոցիալ-տնտեսական վիճակը, իսկ ժողովրդական ինքնիշխանության էությունը բնութագրվում է իբրև ժողովրդի՝ իշխանության միակ կրողի ու աղբյուրի ճանաչում, ապա պետական ինքնիշխանությունը ենթադրում է, որ. ա) պետական իշխանությունն ունի գերակայություն ու անկախություն երկրի ներսում և

---

<sup>45</sup> Ст'ю Научный макет Новой Конституции/Под общей редакцией С.С. Сулакшина. - М.: 2011, էջ 96:

միջազգային հարաբերություններում, բ) միայն ինքնիշխան պետությունն ունի միջազգային իրավասություն կարգավիճակ, գ) երկրի ներսում ինքնիշխան պետությունն ինքն է սահմանում և պահպանում իր երկրի իրավակարգը՝ անհրաժեշտության դեպքում գործադրելով պետական հարկադրանքի միջոցներ, դ) պետական ինքնիշխանությունը տարածվում է երկրի ամբողջ տարածքի վրա, բացառում է երկիշխանությունը, միակ լեգիտիմ իշխանությունն է իրականացնում օրենսդիր, գործադիր և դատական գործառույթները<sup>46</sup>:

Միաժամանակ, զարգացնելով պետության ինքնիշխանության հարցի կարևորությունն ու նշանակությունը պետության կամ հանրային իշխանության՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով սահմանափակված լինելու սահմանադրական պահանջի շրջանակում, Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ պետական ինքնիշխանությունը չի ենթադրում իշխանության բացարձակ անսահմանափակություն, քանի որ իրավական պետությունում այն առաջին հերթին սահմանափակված է մարդու հիմնարար իրավունքներով ու ազատություններով, որոնք գործում են անմիջականորեն, ունեն ինչպես ներպետական, այնպես էլ վերպետական կամ միջազգային իրավական պաշտպանվածություն<sup>47</sup>:

Սակայն Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության էության իմաստավորման և դրա իրավական բովանդակության սահմանման առումով առավել կարևորություն է ստանում հատկապես պետության արտաքին քաղաքականության արդյունավետության բարձրացման համար համապատասխան երաշխիքների ձևավորման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության հիմնախնդիրների գիտական հետազա մշակման նպատակով<sup>48</sup>:

---

<sup>46</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2014 թվականի նոյեմբերի 14-ի ՍԴՈ-1175 թվակիր որոշումը // <http://www.concourt.am/armenian/decisions/common/2014/pdf/sdv-1175.pdf>:

<sup>47</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>48</sup> Տե՛ս CDL-AD(2014)027, 2014 թվականի հոկտեմբերի 13, Հայաստանի Հանրապետության

Այդ իմաստով ժամանակակից միջազգային ինտեգրացիայի գործընթացների ու իրավական զարգացումների տեսանկյունից նշված հիմնախնդրի վերաբերյալ գիտական հետազոտությունները դառնում են առավել արդիական ու հրատապ հատկապես Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրական կարգավորումների համատեքստում:

Այս հիմնախնդրի առանձնահատուկ կարևորությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական նոր կարգավորումների շրջանակում առաջին անգամ շրջանառվող միջազգային կազմակերպությունների վերաբերականությունը որքանով է փոխկապակցվում պետության ինքնիշխանության հետ:

Այսպես, միջազգային իրավունքի տեսությունից հայտնի է, որ եթե միջկառավարական միջազգային կազմակերպությունները ստեղծվում են պետությունների միջև որոշակի ոլորտներում կոոպերացիայի կամ փոխգործակցության որոշակի հարթակ ապահովելու համար, ինչն անհնարին է անել ազգային մակարդակում, ապա վերաբերական միջազգային կազմակերպություններն առանձնահատուկ են իրենց գործառույթների ու լիազորությունների առումով<sup>49</sup>:

Մասնավորապես վերաբերական միջազգային կազմակերպություններին բնորոշ են այնպիսի բացառիկ լիազորություններ, ինչպիսիք են՝ ներքին անկախ մարմիններ ունենալը, պարտադիր կատարման այնպիսի ակտեր ընդունելու իրավասությունը, որոնք անմիջականորեն ենթակա են կիրառման պետությունների ու նրանց քաղաքացիների կողմից, ինչպես նաև հարկադրանքի մեխանիզմներ ընդունելը, որոնք ուղղակիորեն պարտավորեցնում են պետություններին ենթարկվել կազմակերպության որոշումներին՝ անկախ այն

---

սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծի վերաբերյալ եզրակացություն, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով), <http://moj.am/storage/uploads/CDLAD2014027-e>.pdf. <http://www.venice.coe.int/>:

<sup>49</sup> Տե՛ս **Bedjaoui M.** International law: Achievements and Prospects. Leiden: Martinus Nijhoff Publishers, 1991. էջ 71:

հանգամանքից, թե այդ որոշումների ընդունման պահին հաշվի առնվե՞լ է տվյալ պետության կամարտահայտությունը<sup>50</sup>:

Անշուշտ, մասնագիտական գրականության մեջ շրջանառվում են բովանդակային առումով այլ տեսակետներ: Այսպես, պրոֆեսոր Լ.Մալոունը գտնում է, որ վերպետական միջազգային կազմակերպությունները ստեղծվում են այն ժամանակ, երբ անդամ-պետությունների և տվյալ կազմակերպության միջև տեղի է ունենում լիազորությունների բաժանում, որի արդյունքում պետություններն իրենց ինքնիշխանության մի մասն ինքնաբար փոխանցում են այդ միջազգային կազմակերպությանը՝ վերջինիս իրավաստեղծ գործունեությանն ակտիվորեն մասնակցելու նպատակով<sup>51</sup>:

Այնուհետև վերպետական միջազգային կազմակերպությունների վերաբերյալ առավել հատկանշական բնութագրում տրվել է պրոֆեսորներ Հ. Շերմերսի և Ն. Բլոկերի կողմից՝ սահմանելով այդ կազմակերպությունը բնութագրող որոշակի իրավական հատկանիշներ.

«1) վերպետական կազմակերպությունը պետք է իրավասու լինի ընդունել որոշումներ, որոնք ենթակա են անդամ-պետությունների կողմից պարտադիր կատարման,

2) վերպետական կազմակերպության մարմինները պետք լինեն անկախ, ընդ որում այդ անկախությունը պետք է ապահովվել մասնավորապես ձայների մեծամասնությամբ որոշումների ընդունման միջոցով նույնիսկ այն դեպքերում, երբ պետությունն անկախ իր կամարտահայտությունից ստանձնում է որոշակի պարտավորություններ, ինչպես նաև վերպետական մարմիններին որոշումներ ընդունելու լիազորության փոխանցման միջոցով, որոնց ծառայողներն անկախ են,

3) վերպետական կազմակերպությունը պետք է իրավասու լինի սահմանելու կանոններ, որոնք պարտավորեցնում են անդամ-պետությունների

---

<sup>50</sup> Տե՛ս **Martinez M.** National Sovereignty and International Organizations. The Hague: Martinus Nijhoff Publishers, 1996. էջ 100.

<sup>51</sup> Տե՛ս **Malone L.** International Law. New York: Aspen Publishers Online, 2008. էջ 71.



քաղաքացիներին դրանք անվերապահորեն կատարելու, արդյունքում սահմանվում են վարքագծի կանոններ՝ շրջանցելով ներպետական իրավունքը,

4) վերպետական կազմակերպությունը պետք է իրավասու լինի կատարելու իր որոշումները՝ առանց պետությունների համապատասխան աջակցության, ինչը ենթադրում է, որ ազգային դատարանները և խորհրդարանները կարող են պարտավորեցնել իրենց կառավարություններին կատարելու պետության ստանձնած պարտավորությունները,

5) կազմակերպությունը պետք է ունենա բավարար չափով ֆինանսական ինքնուրույնություն,

6) կազմակերպությունից միակողմանի կամ կոլեկտիվ դուրս գալը չպետք է հնարավոր լինի՝ առանց վերպետական կազմակերպության մարմինների որոշման»<sup>52</sup>:

Այդուհանդերձ մասնագիտական գրականության մեջ շրջանառվում է նաև այլ տեսակետ, ըստ որի՝ վերպետական կազմակերպություններին վերապահվում են հետևյալ բնութագրիչները՝ ա) միջազգային համաձայնագրերի ad referendum կնքման հնարավորություն, բ) որոշումներ ընդունելու իրավասություն, որոնք պարտադիր են անդամ-պետությունների համար, այդ թվում նաև պատասխանատվություն կիրառել այն պետությունների նկատմամբ, որոնք այդ որոշումները չեն ենթարկել փոխակերպման (իմպլեմենտացիա), գ) կազմակերպության կողմից այնպիսի որոշումների ընդունման իրավասության առկայություն, որոնց կատարումը կարող է իրականացվել ինքնուրույն, դ) կազմակերպության կողմից պետք է ընդունվեն այնպիսի որոշումներ, որոնք պարտադիր են կատարման իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից՝ նույնիսկ առանց պետությունների միջամտության<sup>53</sup>:

---

<sup>52</sup> Տե՛ս **Schermers H.G., Blokker N.M.** International Institutional Law: Unity without Diversity. Leiden: Brill, 2011. P.56-57.

<sup>53</sup> Տե՛ս **Robertson A.H.** Legal Problems of European Integration. RCADI. 1957. Volume 91. P.145.

Գրեթե նույնաբովանդակ եզրահանգում կատարել է պրոֆեսոր Ա.Ա.Մոիսենը, որի կարծիքով միջազգային կազմակերպությունների վերաբերականությանը բնորոշ են որոշակի այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են՝ 1) անդամ-պետությունների շահերի ընդհանրության ճանաչումը, 2) այդ պետությունների մեծամասնությամբ որոշումների ընդունումը, 3) ծառայողների գործունեության անկախությունը, 4) ֆինանսական անկախությունը, 5) որոշումների պարտադիր կատարման պայմանն անդամ-պետությունների կողմից և անդամ-պետությունների տարածքում, 6) վերաբերական կազմակերպության կազմից միակողմանի դուրս գալու արգելքը, 7) այդ կազմակերպության լիազորությունների գերակայությունն անդամ-պետությունների լիազորությունների նկատմամբ, 8) անդամ-պետությունների ինքնիշխան լիազորությունների մի մասի փոխանցումը վերաբերական կազմակերպությանը<sup>54</sup>:

Անշուշտ, այս ձևակերպումներում բազմաթիվ խնդրահարույց հարցեր կան, որպիսիք են՝ ֆինանսական ինքնուրույնության երաշխավորումը, միջազգային անկախ ծառայողների կողմից կազմակերպության կառավարումը, միջազգային կազմակերպություններից պետությունների դուրս գալու ազատության սահմանափակումը և այլն<sup>55</sup>:

Այնուամենայնիվ, անդրադառնալով Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի սահմանադրական նոր կարգավորումներով «վերաբերական միջազգային կազմակերպություն» եզրույթի շրջանառության մեջ դնելու սահմանադրական պահանջին, հայ իրավագետներն իրենց գիտական հետազոտություններում նույնպես ներկայացրել են որոշակի մոտեցումներ:

Այսպես, իրավագետների մի խումբ գտնում է, որ՝ ա) յուրաքանչյուր միջազգային կազմակերպության միանալն այս կամ այն չափով հանգեցնում է պետության ինքնիշխանության սահմանափակմանը, ընդ որում տվյալ դեպքում

<sup>54</sup> Տե՛ս **Моисеев А.А.** Суверенитет государства в международном праве. М.: 2009, էջ 362-363:

<sup>55</sup> Տե՛ս **Богданова, М.В.** Государство в современных международных отношениях: автореф. дис. ... канд. полит, наук: 23.00.04. М., 2008. էջ 3,

վճռորոշը ինչպես ինքնիշխանության բովանդակային կորստի չափն է, այնպես էլ դրա ամրագրման եղանակները, բ) առաջարկվող կարգավորման համատեքստում «ինքնիշխանության սահմանափակում» եզրույթը կարող է ընկալվել բացառապես այն կտրվածքով, որի դեպքում հարկ կլինի վերանայել իշխանությունը կրող սուբյեկտների լիազորությունների շրջանակը սահմանադրական գործառույթների իրացման տեսանկյունից, և գ) իշխանությունները նախապես եզրակացություն են տալիս հանրաքվեի դրված հարցի էության, դրա իրավաչափության և նպատակահարմարության կապակցությամբ<sup>56</sup>:

Արդարացի է այն մոտեցումը, ըստ որի՝ վերպետականությունը պետք է ընկալել որպես միջազգային կազմակերպության իրավական այնպիսի հատկություն, որն ինքնիշխան անդամ-պետություններին հնարավորություն է ընձեռում ազգային օրենսդրությամբ իրենց իրավունքների մի մասը փոխանցելու միջազգային կազմակերպությանը՝ վերջինիս հիմնադիր պայմանագրով նախատեսված նպատակների ու խնդիրների իրագործմանը<sup>57</sup>: Ավելին, պետության ինքնիշխանության և միջազգային կազմակերպությունների վերպետականության հարաբերակցության խնդրում առանձին հեղինակների կարծիքով անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ պետությունը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ իր ինքնիշխանությունը փոխանցել որևէ միջազգային կազմակերպության, քանի որ ինքնիշխանությամբ օժտված է միայն պետությունը, և այն վերջինիս հիմնական և առանձնահատուկ հատկանիշն է<sup>58</sup>:

Այնուամենայնիվ, ներկայացված տեսակետների համակարգային վերլուծությունից անհրաժեշտ է նկատել, որ միջազգային կազ-

---

<sup>56</sup> Տե՛ս Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն) / Գ.Բ.Դանիելյան, Վ.Ա.Այվազյան, Ա.Ա.Մանասյան. Եր., 2015, էջ 204:

<sup>57</sup> Տե՛ս **Խաչատրյան Ա.Ա.**, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության հիմնախնդիրները. սահմանադրական ժամանակակից կարգավորումների համատեքստում և դրանց լուծումները միջազգային իրավական ու սահմանադրական արդարադատության պրակտիկայում, Եր., 2016, էջ 108-109:

<sup>58</sup> Նույն տեղում:

մակերպությունների վերպետականության և պետության ինքնիշխանության հարաբերակցության հիմնախնդրի վերաբերյալ առկա սահմանադրաիրավական հետազոտություններն արդիական են յուրաքանչյուր երկրի սահմանադրական կարգավորումների տեսանկյունից: Ակնհայտ է, որ, ի տարբերություն ՀՀ Սահմանադրության, որի ամբողջ տեքստում այդպես էլ որևէ խոսք չկա ինքնիշխանության օտարման կամ սահմանափակման հնարավորությունների մասին:

Թերևս անհրաժեշտ է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունը չի կարող մասնակիորեն իր ինքնիշխանությունը փոխանցել միջազգային որևէ կազմակերպության, քանի որ ինքնիշխանությամբ օժտված է հենց միայն պետությունը: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսական ինտեգրման նպատակով պետության լիազորությունների ծավալը ժամանակի հետ ավելի է մեծանում, ուստի Հայաստանի Հանրապետությունը միասնական մաքսային կարգավորումների և տնտեսական ընդհանուր տարածքի ձևավորման նպատակով լիազորությունների որևէ մասը փոխանցում է Եվրասիական տնտեսական միությանը, ինչը չի նշանակում պետության ինքնիշխանության իրավունքի զիջում:

Այդուհանդերձ, հետազոտության առարկայի համեմատական իրավական վերլուծության արդյունքներով պայմանավորված, հարկ է նշել, որ վերպետական միջազգային կազմակերպություններին պետության ինքնիշխանության տարրերի փոխանցման հնարավորություն ամրագրող նորմեր առկա են հատկապես առանձին երկրների սահմանադրություններում<sup>59</sup>:

Այսպես, Հունաստանի Հանրապետության Սահմանադրության 28-րդ հոդվածի 3-րդ կետը հռչակում է, որ Հունաստանը կարող է ազատորեն վերպետական միջազգային կազմակերպություններին անդամակցելիս գնալ իր ազգային ինքնիշխանության սահմանափակման, եթե դա թելադրված է

---

<sup>59</sup> Տե՛ս **Моисеев А.А.** Суверенитет государства в международном праве. М.: 2009, էջ 371-374 // Конституции зарубежных государств. Сборник. Т. 1-2. М.: 2010-2012.

ազգային շահերով, չի խոչընդոտում մարդու իրավունքների և ժողովրդավարական հիմքերի իրացումը:

Իտալիայի Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝ Իտալիան համաձայնվում է այլ պետությունների հետ փոխադարձության պայմաններում իր ինքնիշխանության սահմանափակում, եթե դա անհրաժեշտ է ժողովուրդների խաղաղության և համերաշխության ապահովման կարգի համար,... որը կցուցաբերի աջակցություն ու օգնություն միջազգային այն կազմակերպություններին, որոնք ձգտում են այդ նպատակների իրագործմանը:

Հետազոտության առարկայի շրջանակում անհրաժեշտ է հիշատակել նաև Նիդեռլանդների Թագավորության Սահմանադրության 92-րդ հոդվածը, ըստ որի՝ Թագավորության օրենսդիր, գործադիր և դատական գործառույթները կարող են փոխանցվել վերպետական միջազգային կազմակերպություններին այն պայմանով, որ պահպանվեն նույն Սահմանադրության 91-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները (այստեղ խոսքը վերաբերում է մարդու իրավունքների պաշտպանությանը, ժողովրդավարության հիմքերի ամրագրմանը և այլ սահմանադրական արժեքների պահպանմանը):

Կամ Իսպանիայի Սահմանադրության 93-րդ հոդվածի իրավակարգավորումը հռչակում է, որ Գլխավոր Կորտեսին կամ կառավարությանը վերապահվում են միջազգային պայմանագրերի կատարումն ապահովելու պարտականություններ, որոնցով միջազգային կամ վերպետական կազմակերպություններին կարող է փոխանցվել համապատասխան իրավասություն:

Իսկ Ավստրիայի Սահմանադրության 9-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված է, որ պետական պայմանագրի կամ օրենքի հիման վրա պետական առանձին իրավունքներ կարող են փոխանցվել միջպետական հիմնարկներին ու նրանց մարմիններին:

Դանիայի Թագավորության Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ պետության մարմինների առանձին լիազորություններ կարող են վերապահվել միջազգային իրավակարգի և համագործակցության զարգացման նպատակով ստեղծված միջազգային կազմակերպություններին:

Ալբանիայի Սահմանադրության 123-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ Ալբանիան միջազգային համաձայնագրերի հիման վրա փոխանցում է միջազգային կազմակերպություններին որոշակի հարցերով իր պետական իրավունքները:

Բացի դրանից, Բելգիայի Թագավորության Սահմանադրության 34-րդ հոդվածը սահմանում է, որ որոշակի լիազորությունների իրականացում կարող է դրվել միջազգային հանրային հիմնարկների վրա՝ օրենքով կամ պայմանագրով սահմանված կարգով:

Հաշվի առնելով Եվրոպական միության անդամակցության հարցը՝ Ֆրանսիայի Հանրապետության թիվ 92-554 սահմանադրական ակտի 88.2-րդ հոդվածը սահմանում է, որ փոխադարձության սկզբունքի պահպանմամբ ու Եվրոպական միության մասին պայմանագրի պայմաններին համապատասխան, Ֆրանսիան համաձայնվում է իր իրավասության մի մասի փոխանցմանը Եվրոպական տնտեսական ու ֆինանսական միության հիմնադրման համար:

Անհրաժեշտ է մատնանշել նաև սահմանադրական մոտեցումները Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, որի Հիմնական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ Դաշնությունը օրենքով կարող է իր պետական իրավունքները փոխանցել միջազգային կազմակերպությունների մարմիններին:

Այսպիսով, ինչպես տարբեր երկրների սահմանադրական նորմերի վերլուծությունը, այնպես էլ մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետների համընդհանրությունը ցույց են տալիս վերպետական միջազգային կազմակերպության հասկացության ու իրավաբանական

բովանդակության վերաբերյալ միասնական կարծիքի բացակայության առկայությունը:

Այնուամենայնիվ, համադրելով ներկայացված տեսակետների բովանդակային նշանակությունը, անհրաժեշտ է նկատել, որ վերպետական միջազգային կազմակերպության հիմնարար հատկանիշների սահմանման առումով առկա է որոշակի միասնություն:

Եվ Հայաստանի Հանրապետության միջազգային ինտեգրացիայի ժամանակակից գործընթացների և նոր սահմանադրական կարգավորումների համատեքստում վերպետական միջազգային կազմակերպությունը բնութագրվում է հետևյալ հատկանիշների ամբողջությամբ և նշանակությամբ.

ա) այն նոր միջազգային իրավակարգ է՝ ինքնուրույն իրավական համակարգով և առանձնահատուկ իրավասության շրջանակով, բ) այդ կազմակերպությանը մասնակից պետությունները փոխանցում են որոշակի ոլորտի իրենց լիազորությունները տվյալ միջազգային կազմակերպության կանոնադրային և մասնակից պետությունների նպատակների ու խնդիրների իրագործմանը, գ) անկախ պետությունների կամարտահայտությունից կազմակերպությունը կարող է ձայների մեծամասնությամբ ընդունել որոշումներ, որոնք պարտադիր են կատարման նույն մասնակից պետությունների կողմից, դ) այդ որոշումները պետք է հանդիսանան պարտադիր կատարման ենթակա բոլոր այն անձանց կողմից, որոնք գտնվում են այս կամ այն անդամ-պետության իրավազորության տակ:

Միջազգային վերպետական կազմակերպությունների վերաբերյալ թվարկված այս էական հատկանիշները պաշտպանվում են գրեթե բոլոր իրավաբանների կողմից: Բայց միաժամանակ վերջին տասնամյակների սահմանադրական զարգացումների արդյունքում առանձին վերպետական միջազգային կազմակերպություններին պետությունների անդամակցությունը սահմանադրական կարգավորումների մակարդակում դիտարկվեց հանրաքվեներով լուծվող հարց: Նման պրակտիկա ունեն գրեթե Եվրոպական միության բոլոր անդամ-պետությունները: Մասնավորապես այդ միության

անդամակցության հարցը դիտարկվեց որպես հանրաքվեի առարկա Ավստրիայում<sup>60</sup>, Լեհաստանում<sup>61</sup>, Խորվաթիայում<sup>62</sup>, Իսլանդիայում<sup>63</sup> և այլ երկրներում:

Բացի այդ, վերպետական միջազգային կազմակերպության նման հատկանիշ դրսևորվում է նույնիսկ Եվրոպական միության հիմնադիր պայմանագրերի վավերացման կապակցությամբ: Օրինակ, Ֆրանսիայում Նիցցայի պայմանագրի վավերացման հարցը լուծվեց հանրաքվեի միջոցով<sup>64</sup>, կամ Եվրոպական միության միասնական արժույթային շուկային միանալու կապակցությամբ հարցը Շվեդիայում նույնպես լուծվեց հանրաքվեի արդյունքներով<sup>65</sup>, իսկ Ամստերդամի պայմանագրի վավերացման համար հանրաքվե կազմակերպվեց Դանիայում<sup>66</sup> և այլն:

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ 2015 թվականի սահմանադրական կարգավորումներին համապատասխան վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցությունը նույնպես դիտարկվեց հանրաքվեի միջոցով լուծվող հարց (հոդվ. 205, մաս 1):

Այս կապակցությամբ ողջամիտ է վերպետական միջազգային կազմակերպության իրավական բնութագրման համար առանձնացնել նաև այնպիսի էական հատկանիշ, որը նույնպես հիմնարար նշանակություն ունի հենց այդ եզրույթի սահմանման համատեքստում: Խոսքն այն մասին է, որ վերպետական միջազգային կազմակերպությունների ստեղծման (մասնակցության) կամ այդ կազմակերպություններին անդամակցության հարցերում

---

<sup>60</sup> Տե՛ս **Dieter N.** Elections in Europe: A Data Handbook. Baden-Baden: Nomos Publishers, 2010. էջ 196.

<sup>61</sup> Տե՛ս **Dieter N.** նշվ. աշխ., էջ 1491.

<sup>62</sup> Տե՛ս Croatia EU Referendum: Voters Back Membership // [www.bbc.com/news/world-europe-16670298](http://www.bbc.com/news/world-europe-16670298).

<sup>63</sup> Տե՛ս Icelanders to get a referendum on joining the EU // [www.bbc.com/news/world-europe-22624110](http://www.bbc.com/news/world-europe-22624110).

<sup>64</sup> Տե՛ս **Dieter N.** նշվ. աշխ., էջ 674.

<sup>65</sup> Տե՛ս Sweden. Euro Referendum, 2003 // [www.electoralgeography.com/new/en/countries/s/sweden/swed-en-euro-referendum-2003.html](http://www.electoralgeography.com/new/en/countries/s/sweden/swed-en-euro-referendum-2003.html):

<sup>66</sup> Տե՛ս **Dieter N.** նշվ. աշխ., էջ 525.



պետության ինքնիշխան իրավունքը կարող է իրականացվել միայն ժողովրդի անմիջական կամարտահայտման (հանրաքվեի) արդյունքում:

Անշուշտ, Սահմանադրությունը չի նախատեսում միջազգային իրավունքի սուբյեկտներին Հայաստանի Հանրապետության լիազորությունների փոխանցման այլ հնարավորություններ, քան «անդամակցությունը վերպետական միջազգային կազմակերպություններին», ինչը կարող է իրականացվել Ազգային ժողովի կողմից այդ անդամակցությունը նախատեսող միջազգային պայմանագրի պարտադիր վավերացման, ինչպես նաև անդամակցության հարցը հանրաքվեով լուծելու միջոցով:

Այսպիսով, ընդհանրացնելով Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և Եվրասիական տնտեսական միության վերպետականության հարաբերակցության հիմնախնդիրների հետազոտության արդյունքները, կարելի է ներկայացնել հետևյալ եզրահանգումները.

1) Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և միջազգային կազմակերպությունների վերպետականության հարաբերակցության շրջանակում պետության որևէ լիազորության փոխանցում չի կարող դիտարկվել որպես պետության ինքնիշխանությունից կամ դրա մի մասից հրաժարում, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ նման լիազորությունների փոխանցումը պայմանավորված է միջազգային ինտեգրման նոր բնույթի գործընթացներ իրականացնող վերպետական միջազգային կազմակերպությունների այնպիսի խնդիրների իրականացմամբ, որոնք ուղղված են ինչպես տվյալ միջազգային կազմակերպության պայմանագրային, այնպես էլ մասնակից պետությունների նպատակների ու խնդիրների իրագործմանը:

2) Հայաստանի Հանրապետությունը չի կարող մասնակիորեն իր ինքնիշխանությունը փոխանցել Եվրասիական տնտեսական միությանը, քանի որ ինքնիշխանությամբ օժտված է հենց միայն պետությունը: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսական ինտեգրման նպատակով պետության լիազորությունների ծավալը ժամանակի հետ ավելի է մեծանում,

ուստի Հայաստանի Հանրապետությունը միասնական մաքսային կարգավորումների և տնտեսական ընդհանուր տարածքի ձևավորման նպատակով լիազորությունների որևէ մասը փոխանցվում է Եվրասիական տնտեսական միությանը, ինչը չի նշանակում պետության ինքնիշխանության իրավունքի զիջում:

3) Հայաստանի Հանրապետության միջազգային ինտեգրացիայի ժամանակակից գործընթացների և նոր սահմանադրական կարգավորումների համատեքստում վերպետական միջազգային կազմակերպությունը բնութագրվում է հետևյալ հատկանիշների ամբողջությամբ և նշանակությամբ՝ ա) այն նոր միջազգային իրավակարգ է՝ ինքնուրույն իրավական համակարգով և առանձնահատուկ իրավասության շրջանակով, բ) այդ կազմակերպությանը մասնակից պետությունները փոխանցում են որոշակի ոլորտի իրենց լիազորությունները տվյալ միջազգային կազմակերպության կանոնադրային և մասնակից պետությունների նպատակների ու խնդիրների իրագործմանը, գ) անկախ պետությունների կամարտահայտությունից կազմակերպությունը կարող է ձայների մեծամասնությամբ ընդունել որոշումներ, որոնք պարտադիր են կատարման նույն մասնակից պետությունների կողմից, դ) այդ որոշումները պետք է հանդիսանան պարտադիր կատարման ենթակա բոլոր այն անձանց կողմից, որոնք գտնվում են այս կամ այն անդամ-պետության իրավազորության տակ, ե) այդ կազմակերպությունները ստեղծվում են միայն ժողովրդի անմիջական կամարտահայտման (հանրաքվեի) արդյունքում:

### **3.2. Եվրասիական տնտեսական միությունը որպես վերպետական միջազգային կազմակերպություն. սահմանադրաիրավական և միջազգային իրավական հետազոտություն**

Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հարաբերակցության համատեքստում առավել քան հրատապ են դիտարկվում

միջազգային կազմակերպությունների վերաբերականության սահմանադրականացման ու դրանով պայմանավորված հետազոտության առարկա իրավահարաբերությունների կանոնակարգվածության հիմնախնդիրները:

Անշուշտ, անհրաժեշտ է կարևորել այն, որ միջազգային կազմակերպությունների վերաբերականության պայմաններում պետության ինքնիշխանության ոչ իրավաչափ որևէ սահմանափակում կարող է հանգեցնել սահմանադրական արժեքների ցանկացած ձևախեղման:

Ուստի այս հարցադրման առանձնահատուկ կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ Սահմանադրության և Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի դրույթների համակարգային վերլուծության շրջանակում անհրաժեշտ է պարզել, թե Եվրասիական տնտեսական միությունը վերաբերական միջազգային կազմակերպություն՞ն է, թե՞ ոչ:

Նախ, այս հարցադրման շրջանակում պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2015 թ. հունվարի 2-ից, այսինքն՝ ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) գործողության ժամանակաշրջանում, որտեղ բացակայում էին միջազգային, այդ թվում՝ վերաբերական կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության և հանրաքվեի միջոցով այդ անդամակցության հարցերի լուծման վերաբերյալ սահմանադրական ամրագրումները:

Այնուամենայնիվ, համադրելով այս հարցի կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ առկա մոտեցումները, անհրաժեշտ է ընդգծել, որ դրանք իրարամերժ են:

Այսպես, հեղինակների մի խումբ, վկայակոչելով Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի որոշակի կարգավորումները, գտնում է, որ վերաբերականության մասին ընդհանրապես խոսք չի կարող լինել: Մասնավորապես իրենց դիրքորոշումների հիմնավորման հիմքում նույն

հեղինակները մատնանշում են պայմանագրային այն հիմնարար դրույթները, ըստ որոնց՝ Եվրասիական տնտեսական միությունը տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է (հոդվ. 1, կետ 2), և այդ միությունը ծառայությունների առևտրի ոլորտում չունի վերազգային իրավասություն (հոդվ. 38)<sup>67</sup>:

Ավելին, պրոֆեսոր Բ.Կ. Ազանովի պնդմամբ Եվրասիական տնտեսական միությունն անհրաժեշտ է դիտարկել որպես համադաշնային պետություն՝ վերազգային կազմակերպությանը բնորոշ հատկանիշներով<sup>68</sup>:

Սակայն հեղինակների մեկ այլ խումբ վստահորեն պնդում է, որ Եվրասիական տնտեսական միությունը վերպետական միջազգային կազմակերպություն է, քանի որ այդ միության նորմերն անմիջականորեն վերաբերում են ինչպես մասնակից պետություններին, այնպես էլ նրանց քաղաքացիներին<sup>69</sup>:

Այնուամենայնիվ, այս հիմնախնդրի հետազոտության համար անհրաժեշտ է այն քննարկել սահմանադրական և միջազգային իրավական նորմերի համակարգային առումով փոխկապակցվածության և այդ նորմերի համալիր վերլուծության համատեքստում:

Այսպես, Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակում Հայաստանի Հանրապետությունը պետք է.

ա) ապահովի իր տարածքում Եվրասիական տնտեսական միության մյուս անդամ-պետությունների հետ հարաբերություններում իրականացնել միասնական մաքսային կարգավորում և կիրառել Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագինը (հոդվ. 25, մաս 1, կետ 2 և 4),

---

<sup>67</sup> Տե՛ս **Бекяшев К.А., Моисеев Е.Г.** Право Евразийского экономического союза, -М.: 2016, էջ 31-32:

<sup>68</sup> Տե՛ս **Азанов Б.К.** Договор о Евразийском экономическом союзе // Евразийский юридический журнал, -М.: 2014, N9. էջ 26:

<sup>69</sup> Տե՛ս **Свинарев В.В.** Международная интеграция: правовой опыт Европейского Союза и перспективы его применения на Евразийском пространстве Российский ежегодник международного права. СПб., 2013, էջ 238-243:

բ) իր տարածքում կիրառի Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերը, ինչպես նաև Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումները (հոդվ. 2),

գ) ապահովի իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը ենթադրում է միասնականացված իրավական կարգավորում, ինչպես նաև իր տարածքում՝ որպես միասնական տնտեսական տարածքի բաղկացուցիչ մաս, շուկայական սկզբունքների և ներդաշնակեցված կամ միասնականացված իրավական նորմերի կիրառման հիման վրա գործեն տնտեսության կարգավորման նման (համադրելի) և միատեսակ մեխանիզմներ, և ձևավորվի միասնական ենթակառուցվածք (հոդվ. 2, 5-6-րդ պարբերություններ),

դ) իրականացնի համաձայնեցված քաղաքականություն, այն է՝ տարբեր ոլորտներում իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը ենթադրում է իրավական կարգավորման ներդաշնակեցում, այդ թվում՝ Միության մարմինների որոշումների հիման վրա (հոդվ. 2, 13-րդ պարբերություն, հոդվ. 5, կետ 2),

ե) իրականացնի միասնական մաքսային կարգավորում՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքին և Եվրասիական տնտեսական միության իրավունքը կազմող՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան (հոդվ. 32, կետ 1),

զ) իր տարածքում կիրառի Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի կողմից հաստատվող և Միության առևտրային քաղաքականության գործիքները համարվող Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկը և Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագինը (հոդվ. 42, կետ 1) և այլն:

Բացի այդ, Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության օրինակով միջազգային պայմանագրի

նորմերի իրականացումն առավել մասշտաբային է ոչ միայն միջազգային տնտեսական ինտեգրման առումով, այլև սահմանադրաիրավական այն իմաստով, որ նման անդամակցությունն ինքնին կարող է ենթադրել ոչ միայն պետության որևէ լիազորության փոխանցում այդ միությանը, այլև դիտարկվել որպես պետության ինքնիշխանության սահմանափակում կամ դրա մի մասից հրաժարում:

Այս հանգամանքն ավելի է որոշակիացվում Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 103-րդ հոդվածով, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունը մինչև 2025 թվականը մյուս անդամ-պետությունների հետ պետք է իրականացնի ֆինանսական շուկայի ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցում՝ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին ... համապատասխան, ֆինանսական շուկաների ոլորտում օրենսդրության ներդաշնակեցումն ավարտելուց հետո մյուս անդամ-պետությունների հետ որոշում ընդունել ֆինանսական շուկայի կարգավորման գծով վերազգային մարմնի լիազորությունների և գործառույթների վերաբերյալ և նշված վերազգային մարմինն ստեղծել 2025 թվականին:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական ժամանակակից կարգավորումների համատեքստում և պայմանագրի հիշատակված նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ վերջինիս դրույթներն ուղղակիորեն խնդրահարույց են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա պետական իշխանության իրականացման սկզբունքի (հոդվ. 4), իրավական նորմերի աստիճանակարգության (հոդվ. 5), օրենքին համապատասխան սահմանված մաքսային վճարների որպես պարտադիր վճարում կատարելու յուրաքանչյուրի պարտականության ամրագրման (հոդվ. 60, մաս 8) և այլ նորմերի համապատասխանության տեսանկյունից:

Սակայն նշված պայմանագրի տրամաբանությունից անհրաժեշտ է նկատել, որ Եվրասիական տնտեսական միությունը իրավասու չէ ինքնուրույն սահմանելու կամ փոփոխելու իր լիազորությունների շրջանակը: Դա բխում է հիշատակված պայմանագրով ամրագրված կարգավորումների բովանդակությունից, ըստ որի՝ Եվրասիական տնտեսական միությունն օժտվում է իրավասությամբ՝ այդ միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված սահմաններում և ծավալներով (հոդվ. 5, կետ 1):

Ավելին, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնադրության 42-րդ կետի համաձայն՝ դատարանի իրավասության մեջ չի մտնում նույն միության մարմիններին, տվյալ միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով ուղղակիորեն նախատեսված իրավասություններից բացի, լրացուցիչ իրավասություններով օժտելը:

Հաջորդ կարևոր հարցադրումը վերաբերում է Եվրասիական տնտեսական միության անդամակցության դադարմանը և պայմանագրից դուրս գալուն: Այս առումով Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 118-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան անդամ-պետությունն իրավունք ունի դուրս գալու պայմանագրից, իսկ նույն հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ պայմանագրից դուրս գալն ինքնաբերաբար հանգեցնում է Եվրասիական տնտեսական միության անդամակցության դադարմանը:

Այս նորմերի բովանդակությունից ենթադրվում է, որ պետությունը, իրացնելով իր ինքնիշխան իրավունքը, կարող է լուծել կազմակերպությունից դուրս գալու մասին հարցը՝ միևնույն ժամանակ այդ կազմակերպությունից չակնկալելով որևէ համաձայնություն:

Այսինքն, հիշատակված դրույթների համալիր վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ Եվրասիական տնտեսական միությունը որևէ մասնակից պետության ինքնիշխանության մաս կրող սուբյեկտ չէ և իր հայեցողությամբ չի կարող ընդլայնել իրավասության շրջանակները, քանի որ հիմնադիր

պայմանագրով այդ միությունն օժտված է միայն իրեն վերապահված իրավասությամբ:

Անդրադառնալով սահմանադրական այլ նորմերի վերլուծությանը անհրաժեշտ է նշել հետևյալը. ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Ազգային ժողովը վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում այն միջազգային պայմանագրերը, որոնք նախատեսում են Հայաստանի Հանրապետության անդամակցություն միջազգային կազմակերպությանը: Իսկ նույն Սահմանադրության 205-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումներին համապատասխան՝ վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության հարցերը լուծվում են հանրաքվեի միջոցով:

Այսինքն, 2015 թվականի սահմանադրական կարգավորումների համատեքստում Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությանը սահմանադրական իրավունքի տեսանկյունից նոր իմաստ է հաղորդվում, քանի որ այդ անդամակցության արդյունքում միասնական մաքսային կարգավորումների և տնտեսական ընդհանուր տարածքի ձևավորման առումով պետությանը վերապահված լիազորությունների մի մասը փոխանցվում է տվյալ միջազգային կազմակերպությանը:

Վկայակոչված սահմանադրական նորմերի և Եվրասիական տնտեսական միության իրավունքի նորմերի համադրված վերլուծության համատեքստում անհրաժեշտ է այդ միության իրավական կարգավիճակի վերաբերյալ ներկայացնել որոշ մոտեցումներ:

Այսպես, Եվրասիական տնտեսական միության իրավունքը միջազգային իրավունքի մաս է, քանի որ այդ միության հիմնադիր պայմանագիրը սահմանվում է որպես միջազգային պայմանագիր (հոդվ. 12): Անշուշտ, տվյալ դեպքում խոսքը ոչ թե միջազգային այն պայմանագրի մասին է, որով մասնակիցները ստանձնում են որոշակի պարտավորություններ, այլ այն պայ-



մանագրի մասին, որի հիման վրա ստեղծվում է միջազգային իրավասուբյեկտությամբ օժտված միջազգային կազմակերպություն<sup>70</sup>:

Այնուհետև անհրաժեշտ է կարևորել այն, որ Եվրասիական տնտեսական միության իրավունքի նորմերն օժտված են՝ և՛ միջազգային իրավունքի, և՛ ներպետական իրավունքի առանձնահատուկ գծերով, ինչը թույլ է տալիս խոսել այդ միության երկակի էության մասին: Ընդ որում երկակիությունը հիմնավորվում է ներպետական իրավունքի և միջազգային իրավունքի հարաբերակցության առկայությամբ, երբ մի դեպքում այդ հարաբերակցության հիմքում ընկած է ներպետական իրավունքի նորմերի նկատմամբ միջազգային իրավունքի նորմերի գերակայության սկզբունքը, իսկ մեկ այլ դեպքում այդ հարաբերակցության հիմքում ընկած է Եվրասիական տնտեսական միության իրավունքի անմիջական գործողության սկզբունքը: Այս մոտեցումը բնորոշ է նաև Եվրոպական միության իրավունքի համակարգին<sup>71</sup>:

Անշուշտ, մասնակից բոլոր պետությունների սահմանադրական նորմերի բովանդակությունից է բխում այն, որ Եվրասիական տնտեսական միության իրավունքի նորմերը գերակա են ներպետական օրենսդրության նկատմամբ: Ինչ վերաբերում է իրավունքի անմիջական գործողության սկզբունքին, ապա այն ենթադրում է, որ Եվրասիական տնտեսական միության իրավունքն իրավաբանական և ֆիզիկական անձանց օժտում է սուբյեկտիվ իրավունքներով և պարտականություններով, որոնց պաշտպանությունը և կատարումն իրականացվում են դատական կարգով:

Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եվրասիական տնտեսական միության իրավունքը բովանդակում է վերպետական իրավունքի նորմեր, որոնք չեն սահմանափակվում միայն տարբեր իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև փոխադարձ պարտավորությունների ստեղծմամբ,

---

<sup>70</sup> Եվրոպական միության հիմնադիր պայմանագրերն ըստ էության գտնվում են միջազգային համընդհանուր իրավունքի սահմաններում: Տե՛ս նաև՝ **Klppbers J.** Treaty conflict and European Union. Cambridge University Press. 2009. էջ 229:

<sup>71</sup> Մանրամասն տե՛ս **Հարությունյան Ա.Շ.** նշվ. աշխ., էջ 214-216, Ландо Д.Д., Самарин В.И. Европейское публичное право. 2010. էջ 11:

ուստի անհրաժեշտ է այդ կազմակերպությունը դիտարկել որպես վերաբերական: Առանցքային դերակատարումն այն է, որ Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգը ենթադրում է նոր իրավակարգի առկայություն, որտեղ սահմանվում են այդ անձանց իրավունքների ու պարտականությունների շրջանակները, ինչպես նաև իրավախախտումների համար կիրառվող պատասխանատվության միջոցներն ու մեխանիզմները<sup>72</sup>:

Եվ վերջապես, Եվրասիական տնտեսական միությունն օժտված է նաև առանձնահատուկ և ինքնուրույն իրավակարգով, որի նորմերը կարգավորում են այդ միության շրջանակներում տնտեսական ինտեգրման գործընթացների ընթացքում ծագող հասարակական հարաբերությունները:

Ասվածը բացատրվում է այն հիմնավորմամբ, որ Եվրասիական տնտեսական միության իրավունքն օժտված է յուրօրինականությամբ, և, ի տարբերություն դասական՝ ներպետական և միջազգային իրավական համակարգերի, այդ միության իրավակարգով սահմանվում են իրավաբանական և ֆիզիկական անձանց վարքագծի միասնական ու միատեսակ կանոններ՝ դրանով իսկ ստեղծելով մասնակից պետությունների տնտեսությունների կայուն զարգացման, ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի միասնական շուկայի ապահովման, ինչպես նաև բազմակողմանի արդիականացման, համագործակցության և ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացման համար անհրաժեշտ պայմանների իրավական հիմքեր (Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիր, հոդվ. 4):

Այսպիսով, ընդհանրացնելով Եվրասիական տնտեսական միության իրավական կարգավիճակի հիմնախնդիրների հետազոտության արդյունքները՝ ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 205-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումների համատեքստում կարելի է եզրահանգել հետևյալը.

---

<sup>72</sup> Մանրամասն տե՛ս **Бекяшев К.А., Моисеев Е.Г.** նշվ. աշխ., էջ 35:

1) Եվրասիական տնտեսական միությունը վերպետական միջազգային կազմակերպություն է, որն օժտված է այդ կազմակերպություններին բնորոշ հատկանիշներով, որպիսիք են՝ մասնակից պետությունների և նրանց իրավազորության տակ գտնվող իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից պարտադիր կատարման ենթակա ակտերի ընդունման իրավասությունը, այդ միության մարմինների կողմից ձայների մեծամասնությամբ որոշումների ընդունման իրավասությունը՝ առանց հաշվի առնելու որևէ պետության կամարտահայտությունը և այլն:

2) Եվրասիական տնտեսական միությունն ու դրա իրավական համակարգն օժտված են առանձնահատուկ և ինքնուրույն իրավական համակարգով, որի նորմերը կարգավորում են այդ միության շրջանակներում տնտեսական ինտեգրման գործընթացների ընթացքում ծագող հասարակական հարաբերությունները, սահմանում են մասնակից պետությունների լիազորությունների ու իրավասության, ինչպես նաև նրանց իրավազորության տակ գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ու պարտականությունների շրջանակները, պատասխանատվության միջոցներն ու մեխանիզմները:

3) Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգը միջազգային իրավունքի և միաժամանակ մասնակից պետությունների իրավական համակարգի բաղկացուցիչ մաս է, որի երկակի նշանակությունը պայմանավորված է ներպետական իրավունքի և միջազգային իրավունքի հարաբերակցության, ինչպես նաև այդ հարաբերակցության հիմքում ընկած Եվրասիական տնտեսական միության իրավունքի գերակայության և անմիջական գործողության սկզբունքների առկայությամբ:

4) Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունը կարգավորող նորմերի հետագա իրականացումն առավել մասշտաբային է ոչ միայն միջազգային տնտեսական ինտեգրման առումով, այլև սահմանադրաիրավական այն իմաստով, որ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 103-րդ հոդվածի տրամաբանության համատեքստում նման անդամակցությունն ինքնին կարող է

ենթադրել ոչ միայն պետության որոշ լիազորությունների փոխանցում այդ միությանը, այլև դիտարկվել որպես պետության ինքնիշխանության սահմանափակում կամ դրա մի մասից հրաժարում:

### **3.3. Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրականության հիմնախնդիրները և դրանց լուծումները սահմանադրական արդարադատության պրակտիկայում**

Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության առանցքային հիմնախնդրի լուծումներն ունեն երկիմաստ նշանակություն: Այսպես, այդ անդամակցությամբ Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է միջազգային պարտավորություններ, որոնք մի կողմից ամբողջությամբ պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, իսկ մյուս կողմից այդ պարտավորությունները պետք է ուղղված լինեն նույն միջազգային կազմակերպության խնդիրների ու նպատակների իրագործմանը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նորմերի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ այդ նորմերի կիրառման հիմքում ընկած են սահմանադրական այնպիսի հիմնարար արժեքներ ու սկզբունքներ, ինչպիսիք են՝ Հայաստանի Հանրապետությունը որպես ինքնիշխան պետություն սկզբունքը, որը հռչակվել է Սահմանադրության 1-ին հոդվածով, օրենքների նկատմամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի նորմերի առաջնայնության ապահովումը, որը բխում է Սահմանադրության 5-րդ հոդվածի բովանդակությունից, պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանը նպատակաուղղված պետության արտաքին քաղաքականության իրականացումը (հոդվ. 13) և այլն:

Իսկ եթե հաշվի առնեք այն հանգամանքը, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 63-րդ հոդվածի տրամաբանությանը համապատասխան՝ Սահմանադրական դատարանը

պարտավոր է իրավանորմի սահմանադրականությունը գնահատել իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ հանդերձ, ապա Սահմանադրության հիշատակված նորմերի և այդ նորմերին անուղղակիորեն առնչվող 55, 61, 81-րդ և այլ հոդվածներով ամրագրված դրույթների համակարգային վերլուծությունից կարելի է բխեցնել հետևյալը, որ Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունը և այդ անդամակցությամբ պայմանավորված պետության ինքնիշխանության սահմանափակումներն իրավաչափ են այն դեպքում, եթե միաժամանակ կարող են պահպանվել հետևյալ պայմանները.

ա) այդ անդամակցությունը և դրա հետ կապված պետության ինքնիշխանության սահմանափակումը չպետք է հակասեն սահմանադրական կարգի հիմունքներին,

բ) այդ անդամակցության հետ կապված պետության ինքնիշխանության սահմանափակումը չպետք է հանգեցնի մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակմանը,

գ) այդ անդամակցությունը պետք է ձևակերպվի միջազգային պայմանագրի ձևով և իրավական բոլոր ընթացակարգերին ու կառուցակարգերին համապատասխան լինի պատշաճ ընդունված և վավերացված:

Անդրադառնանք այդ պայմաններից յուրաքանչյուրին խնդրո առարկա հիմնախնդրի հետազոտության սահմանադրաիրավական տեսանկյունից:

Առաջին, Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրականության խնդրի կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ Սահմանադրական դատարանն իր 2014 թվականի նոյեմբերի 14-ի ՍԴՈ-1175 որոշմամբ քննության առարկա է դիտարկել 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը և որոշել, որ այդ

պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Ընդ որում քննության առարկա հարցերի շրջանակում Սահմանադրական դատարանը մասնավորապես պարզել է նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների արժեքանական մոտեցումների համարժեքությունը ՀՀ Սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրված հիմնարար սկզբունքներին, ինչպես նաև միջազգային համագործակցության ձևերի ու մեխանիզմների համապատասխանությունը մասնակից պետությունների ինքնիշխանության, իրավահավասարության և գործակցության փոխշահավետության սկզբունքներին (ՍԴՈ-1175, կետ 3):

Միաժամանակ Սահմանադրական դատարանը, կարևորելով Եվրասիական տնտեսական միության դերը հատկապես միջազգային արդի զարգացումների և գլոբալացման գործընթացներում, արձանագրել է. «...միջպետական ինտեգրման միտումները հանգեցրել են նրան, որ երկրները գնում են առավել խոր փոխշահավետ գործակցության՝ ի սպաս իրենց ժողովուրդների և քաղաքացիների բարօրության, համատեղ լուծելու տնտեսական, բնապահպանական, սոցիալական, մարդկանց անվտանգության ապահովման և համարժեք այլ խնդիրներ» (ՍԴՈ-1175, կետ 4): Այնուհետև դատարանն իր իրավական հիմնավորումների շրջանակում «...նոր դարաշրջանի աշխարհակարգին համարժեք այդպիսի գործակցության ձև է դիտարկել տնտեսական ոլորտում անդրազգային կորպորացիաների գերիշխանությունը, գլոբալ աղետների դեմ պայքարի համաշխարհայնացումը, մարդու իրավունքների ոլորտում միասնական չափորոշիչների սահմանումը, արժեհամակարգային ինտեգրման խորացումը» (ՍԴՈ-1175, կետ 5):

Անշուշտ, ասվածի համատեքստում սահմանադրական կարգի հիմունքների և վերպետական միջազգային կազմակերպությանն անդամակցությամբ ստանձնած պարտավորությունների հնարավոր հակասությունների մասով էական է պարզել առաջին հերթին այդ պարտավորությունների և պե-

տության ինքնիշխանության փոխառնչությունները հատկապես այն մասով, թե առկա՞ է արդյոք պետության ինքնիշխանության սահմանափակում կամ դրա մի մասից հրաժարում, թե՞ ոչ:

Չնայած այն հանգամանքին, որ Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրականության խնդրի կապակցությամբ նշված ՍԴՈ-1175 որոշումն ընդունվել է ՀՀ Սահմանադրության (2005 թ. փոփոխություններով) կարգավորումների պահանջների հաշվառմամբ, այնուամենայնիվ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներն արդիական են նաև վերպետական միջազգային գործակցության ժամանակակից պայմաններում:

Անշուշտ, ցանկացած երկրի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման համար միջազգային ինտեգրման գործընթացները տնտեսական հարաբերությունների ու դրանց իրավակարգավորման ողջ համակարգով դուրս են եկել երկրի պետական սահմաններից և ստացել են վերպետական բնույթ: Ե՛վ պետության ինքնիշխանության, և՛ միջազգային կազմակերպությունների վերպետականության հարաբերակցության վերաբերյալ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «Վերպետական կառույցները ձևավորվում են վերպետական հարթակի օբյեկտիվ իրավահարաբերություններից բխող խնդիրների փոխհամաձայնեցված լուծման համար: Դա արդեն վերպետական գործակցության բոլորովին այլ որակ է: Յուրաքանչյուր երկրի ինքնակամ մասնակցությամբ ձևավորված վերպետական մարմնի որոշումներում առկա է ազգային մասնակցության կամքի արտահայտությունն այն մանդատով, որը մասնակցին,՝ իր իսկ ազգային շահերից ելնելով, վերապահվել է վավերացված միջազգային պայմանագրի ուժով: Ազգային կառույցներն իրենց գործառույթներն իրականացնում են ներպետական իրավական համակարգի անբաժանելի մաս հանդիսացող միջազգային պայմանագրերի իրավակարգավորումները հաշվի առնելով» (ՍԴՈ-1175, կետ 6):

Այնուամենայնիվ, 2015 թվականի սահմանադրական նոր կարգավորումների արդյունքում Ազգային ժողովին է վերապահված միջազգային այն պայմանագրերի վավերացման, կասեցման կամ չեղյալ հայտարարման իրավասությունը, որոնք նախատեսում են Հայաստանի Հանրապետության անդամակցություն միջազգային կազմակերպությանը (Սահմանադրության հոդվ. 116, մաս 1, կետ 3): Միաժամանակ Սահմանադրությունը հռչակեց, որ վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության հարցը լուծվում է հանրաքվեի միջոցով (հոդվ. 205, մաս 1):

Հայաստանի Հանրապետության որպես ինքնիշխան պետության (հոդվ. 1) սահմանադրական կարգի սկզբունքի համատեքստում վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վերաբերյալ սահմանադրական նորմերի համակարգային վերլուծությունից անհրաժեշտ է կարևորել այն, թե պետությունն ինչպիսի սահմանադրական արգելքներ պետք է հաղթահարի, որպեսզի վերպետական միջազգային կազմակերպության շրջանակում իր ստանձնած միջազգային պարտավորություններն ամբողջությամբ համապատասխանեն երկրի ինքնիշխանության սահմանադրական բովանդակությանը և միաժամանակ հստակ ուղղված լինեն նույն միջազգային կազմակերպության խնդիրների ու նպատակների իրագործմանը:

Թերևս ընկալելի և միաժամանակ արդարացի է այն պնդումը, որ միջազգային վերպետական կազմակերպությանը պետությունը փոխանցում է գործառնական բնույթի լիազորություններ, սակայն միջազգային և սահմանադրաիրավական հարաբերություններում պետությունների և միջազգային վերպետական կազմակերպությունների հետ փոխգործակցության նման ձևի պարագայում յուրաքանչյուր ինքնիշխան երկիր, ինքնակամ մասնակցելով այդ կազմակերպություններին, իր մասնակցության կամքի ար-



տահայտման միջոցով ապահովում է իր իսկ ինքնիշխանության և ազգային շահերի պաշտպանության երաշխավորումը<sup>73</sup>:

Անշուշտ, դա համահունչ է ՀՀ Սահմանադրության նախաբանով հռչակված ինքնիշխան պետության վերականգնման, հայրենիքի հզորացման ու բարգավաճման, սերունդների ազատության, ընդհանուր բարեկեցության, քաղաքացիական համերաշխության վերաբերյալ համամարդկային արժեքներին Հայաստանի Հանրապետության հավատարմության վերաբերյալ դրույթների բովանդակությանը, ինչով պայմանավորված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը որևէ սահմանափակում չի նախատեսում միջազգային ու տարածաշրջանային համագործակցության ու այն ապահովող կառույցների իրավաչափ գործունակության ապահովման հարցերում (ՍԴՈ-1175, կետ 6):

Սակայն խնդրահարույց է դառնում այն իրավիճակը, երբ պետության լիազորությունն ուղղակիորեն փոխանցվում է վերպետական կազմակերպությանը, ինչը նշանակում է ինքնիշխանության սահմանափակում<sup>74</sup>: Կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում նման սահմանադրական արգելքի հաղթահարման համար կարևոր նշանակություն ունի հետևյալը.

ա) վերպետական միջազգային կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ պետության ինքնիշխանությունից կամ դրա մի մասից հրաժարում կարող է իրականացվել միայն ժողովրդի կամարտահայտման արդյունքում՝ հանրաքվեի միջոցով (Սահմանադրության 205-րդ հոդվ., մաս 1),

---

<sup>73</sup> Տե՛ս **Խաչատրյան Ա.Ա.**, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության հիմնախնդիրները. սահմանադրական ժամանակակից կարգավորումների համատեքստում և դրանց լուծումները միջազգային իրավական ու սահմանադրական արդարադատության պրակտիկայում, Եր., 2016, էջ 104:

<sup>74</sup> Օրինակ, Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից Հայաստանի Հանրապետության տարածքում կիրառվում են Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերը («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 2-րդ հոդված): Կամ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում իրականացվում է միասնական մաքսային կարգավորում՝ Եվրասիական տնտեսական միության Մաքսային օրենսգրքին և Միության իրավունքը կազմող՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 32-րդ հոդվածի 1-ին կետ) և այլն:

բ) Եվրասիական տնտեսական միության օրինակով Հայաստանի Հանրապետությունը Միության կազմում իր անդամակցության դադարման գործընթացը կարող է նախաձեռնել ցանկացած պահի («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 118-րդ հոդված), ինչը Սահմանադրական դատարանը դիտարկել է որպես պետությունների ինքնիշխանության սկզբունքի հարգման իրավական հիմք (ՍԴՌ-1175, կետ 6):

գ) ի վերջո, անհրաժեշտ է նշել, որ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությունն ինքնին կրում է տնտեսական բնույթ, և միայն հետևանքներն ունեն սահմանադրաիրավական նշանակություն:

Հարկ է նկատել, որ Եվրասիական տնտեսական միության մասնակից առանձին պետությունների մասով նման սահմանադրական արգելքները հաղթահարված են սահմանադրական առկա կարգավորումների միջոցով: Այսպես, օրինակ, ՌԴ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ Ռուսաստանի Դաշնությունը կարող է մասնակցել միջազգային միավորումներին և փոխանցել միջազգային պայմանագրերով նախատեսված իր լիազորությունների մի մասը, եթե այդ մասնակցությունը չի հանգեցնում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակմանը և չի հակասում ՌԴ սահմանադրական կարգի հիմունքներին:

Միաժամանակ նույն Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրության դրույթները չպետք է հակասեն ՌԴ սահմանադրական կարգի հիմունքներին: Եվ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՌԴ Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված նորմը չի կարող հակասել սահմանադրական կարգի սկզբունք համարվող պետության ինքնիշխանությանը, ուստի ցանկացած ձևով միջազգային կազմակերպությանն անդամակցությունն ինքնին չի կարող դիտարկվել պետության ինքնիշխանության սահմանափակում:

Երկրորդ, պետության ինքնիշխանության սահմանափակման իրավաչափության ապահովման հաջորդ պայմանը վերաբերում է Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության արդ-

յունքում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակումը բացառելուն: Այդ առումով անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում պետական ինքնիշխանության երաշխավորման և իրացման կարևոր իրողություններից է այն, որ սահմանադրորեն Ազգային ժողովին է վերապահված Հայաստանի Հանրապետության միջազգային այն պայմանագրերի վավերացման, կասեցման կամ չեղյալ հայտարարելու իրավասությունը, որոնք վերաբերում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին, ինչպես նաև պարտականություններին (հոդվ. 116, մաս 1, կետ 1):

Միաժամանակ ՀՀ Սահմանադրությունը միջազգային իրավունքում Հայաստանի Հանրապետության համար ճանաչում է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների գերակայությունը նաև հետևյալ պարագաներում.

ա) մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են, իսկ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք (հոդվ. 3, մաս 2 և 3),

բ) Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա, որն ուղղված պետք է լինի բարիդրացիական և փոխշահավետ հարաբերությունների հաստատման պայմանի կատարմանը (հոդվ. 13),

գ) ՀՀ Սահմանադրությունը միջազգային մարմինների իրավազորությունը ճանաչում է յուրաքանչյուր անձի իրավունքը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին (հոդվ. 61, մաս 2),

դ) ՀՀ Սահմանադրությունը միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան ճանաչում է պայման մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրության մեջ ամրագրված դրույթների մեկնաբանման ժամանակ (հոդվ. 81, մաս 1),

ե) ՀՀ Սահմանադրությունը միջազգային պայմանագրերին է վերապահում նաև իրավունքների սահմանափակման շրջանակների սահմանման որոշիչ դերը (հոդվ. 81, մաս 2),

զ) ՀՀ Սահմանադրությունը վերաբերյալ միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության հարցի լուծման համար պարտադիր իրավական հետևանք առաջացնող պայման է դիտարկում հանրաքվեին քաղաքացիների անմիջական մասնակցությունը (հոդվ. 205, մաս 1) և այլն:

Նշված սահմանադրական նորմերի համակարգային վերլուծությունից բխում է հետևյալը, որ չբացառելով տվյալ ոլորտում հնարավոր ռիսկերի անխուսափելիությունը՝ այնուամենայնիվ Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունը չի կարող հանգեցնել մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների որևէ ձևով սահմանափակմանն այն հիմնավորմամբ, որ առկա են ՀՀ Սահմանադրության արժեքանությունից և կոնկրետ նորմերի բովանդակությունից բխող սահմանադրական հստակ պահանջներ: Այդպիսիք են.

1) պետության ինքնիշխանության երաշխավորումը,

2) պետությունների հետ միջազգային հարաբերություններում բարիդրացիականության ու փոխշահավետության հաստատումը,

3) մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների միայն այնպիսի հնարավոր սահմանափակումների նախատեսումը, որոնք չեն կարող գերազանցել միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները,

4) Հայաստանի Հանրապետության և իր իրավազորության տակ գտնվող իրավաբանական ու ֆիզիկական անձանց համար Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերի՝ գործողության շրջանակը սահմանափակվում է այդ ակտերի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության շրջանակներում:

Երրորդ, պետության ինքնիշխանության սահմանափակման իրավաչափության ապահովման հաջորդ պայմանը վերաբերում է Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության իրավական կարգավորումներին, ընթացակարգերին ու կառուցակարգերին:

Նախ, ինչպես արդեն նշվեց, Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրականության հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1175 որոշումն ընդունվել է 2005 փոփոխություններով սահմանադրական կարգավորումների պահանջների հաշվառմամբ: Անշուշտ, այդ ժամանակ բացակայում էին այնպիսի պայմաններ, որոնք հետագա սահմանադրական կարգավորումների արդյունքում դիտարկվեցին որպես միջազգային կազմակերպություններին անդամակցության սահմանադրական պահանջներ: Խոսքը վերաբերում է 2015 թվականի սահմանադրական նոր կարգավորումներով Ազգային ժողովի կողմից միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության միջազգային պայմանագրի պարտադիր վավերացմանը (Սահմանադրության հոդվ. 116, մաս 1, կետ 3) և վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության հարցի բացառապես հանրաքվեի միջոցով լուծմանը (հոդվ. 205, մաս 1):

Սահմանադրական դատարանը նշված որոշմամբ արձանագրելով, որ 2005 թ. փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը չի նախատեսում վերպետական միջազգային կազմակերպություններին անդամակցության խնդրի լուծում պարտադիր

իրավական հետևանքներ ունեցող հանրաքվեի միջոցով, այդուհանդերձ իր որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը, ըստ որի. «Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ որևէ վերապետական մարմնի կողմից ընդունված ցանկացած որոշում, որը չի համապատասխանում այդ պահանջներին, կիրառելի չէ Հայաստանի Հանրապետությունում: Իսկ այդ պահանջների պահպանման պարագայում Հայաստանի Հանրապետության կողմից այս կամ այն տարածաշրջանային կամ միջազգային կազմակերպության հետ գործակցությունը սահմանադրականության խնդիր չի կարող առաջացնել: Սա ամբողջությամբ վերաբերում է նաև քննության առարկա Պայմանագրին ու դրա շրջանակներում ստանձնվող միջազգային պարտավորություններին» (ՍԴՈ-1175, կետ 7):

Պետության ինքնիշխանության սահմանափակման իրավաչափության ապահովման կարևոր նախադրյալներից են նաև այն հիմնարար սկզբունքներն ու նպատակները, որոնք դրված են Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի հիմքում: Մասնավորապես այդ պայմանագրի 3-րդ հոդվածով սահմանվում են այդ միության շրջանակներում մասնակից պետությունների փոխհարաբերությունների առանցքը կազմող սկզբունքները:

Դրանք են՝ ա) միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքների՝ ներառյալ անդամ-պետությունների ինքնիշխան հավասարության հարգումը, բ) անդամ- պետությունների քաղաքական կարգի առանձնահատկությունների հարգումը, գ) փոխշահավետ համագործակցության ապահովումը, իրավահավասարությունը, կողմերի ազգային շահերը հաշվի առնելը, դ) շուկայական տնտեսության սկզբունքների պահպանումը և բարեխիղճ մրցակցությունը:

Իսկ նույն պայմանագրի 4-րդ հոդվածով ամրագրվել է այն նպատակների շրջանակը, որոնց իրագործմանն է նպատակաուղղված Եվրասիական տնտեսական միության գործունեությունը: Խոսքը վերաբերում է՝ ա) բնակչության կենսամակարդակի բարձրացման շահերից ելնելով՝ անդամ-պետությունների տնտեսությունների կայուն զարգացման համար պայմանների

ստեղծմանը, բ) այդ միության շրջանակներում ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի միասնական շուկայի ձևավորմանը, գ) համաշխարհային գլոբալ տնտեսության պայմաններում ազգային տնտեսությունների համակողմանի արդիականացմանը, համագործակցությանը և մրցունակության բարձրացմանը:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ փոխհարաբերությունների շարադրված սկզբունքները և միության գործունեության նպատակները սահմանադրականության առումով խնդիրներ չեն հարուցել այն իմաստով, որ այդ սկզբունքների նշանակությանն ու նպատակների իրականացմանն է ուղղված տվյալ պայմանագրով նախատեսված մարմինների ձևավորումը, որոնցում անդամ-պետություններն ունեն մասնակցային իրավահավասար դերակատարություն, իսկ առանցքային հարցերը լուծվում են փոխհամաձայնությամբ՝ պահպանելով յուրաքանչյուրի վետոյի իրավունքը:

Հետազոտության առարկայի շրջանակում անհրաժեշտ է դիտարկել Հայաստանի Հանրապետության կողմից Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության և Եվրոպական միության միջև համապարփակ ու ընդլայնված գործընկերության համաձայնագրին մասնակցության հարաբերակցության հիմնահարցը՝ ստանձնած պարտավորությունների սահմանադրականության հիմնախնդրի համատեքստում<sup>75</sup>: Բնականաբար, առանցքային է այն հարցադրումը, թե միջազգային իրավական այդ երկու կարևոր պայմանագրերից բխող պարտավորությունների միաժամանակյա կատարումը բխո՞ւմ է արդյոք սահմանադրական կարգավորումների բովանդակությունից: Անշուշտ, այդ հարցադրումը հավաստվում է այն հիմնավորմամբ, որ հիշատակված միջազգային պայմանագրերի նպատակները և դրանց իրագործման մեխանիզմները և շրջանակները համընկնում են: Խոսքը

<sup>75</sup> Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ-պետությունների՝ մյուս կողմից, միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության մասին համաձայնագիրը ստորագրվել է 2017 թվականի նոյեմբերի 24-ին Բրյուսելում, վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2018 թվականի ապրիլի 11-ի ՀՀ 313-Ն օրենքով. տե՛ս ՀՀ ՊՏ 2018.04.23/34(1392), հոդ.583:

վերաբերում է կողմերի միջև տնտեսական գործընկերության ու համագործակցության ամրապնդմանը, օրենսդրության ներդաշնակեցմանն ու մերձեցմանը, առանձին ոլորտների, մասնավորապես մաքսային հարցերով փոխադարձ վարչական աջակցությանը և այլն:

Այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանի 2014 թվականի ՍԴՈ-1175 և 2018 թվականի ՍԴՈ-1407 որոշումների բովանդակությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետության կողմից պարտավորությունների ստանձնումն իրավաչափ է, և այդ պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածի բովանդակությանը, համաձայն որի Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:

Միաժամանակ անհրաժեշտ է նկատել, որ ՀՀ Սահմանադրական դատարանն՝ իր ՍԴՈ-1175 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշումներ, որոնք էական նշանակություն են ունենում Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությունից հետո ցանկացած այլ միջազգային կազմակերպություններին մասնակցության համատեքստում: Այսպես, այս որոշման շրջանակում Սահմանադրական դատարանն արձանագրել է՝

«ՀՀ Սահմանադրության նախաբանում հավաստելով իր հավատարմությունը համամարդկային արժեքներին, սահմանադրական կարգի հիմունքներով արտաքին քաղաքականության իրականացման հիմքում դնելով միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը, իրավական, ժողովրդավարական պետության կայացման գործում գերակայություն վերապահելով միջազգային իրավունքին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը որևէ սահմանափակում չի նախատեսում միջազգային ու տարածաշրջանային համագործակցության ու այն ապահովող կառույցների իրավաչափ գործունակության ապահովման հարցերում: Սակայն դրա համար



առկա են նաև սահմանադրական հստակ պահանջներ, որոնք բխում են ՀՀ Սահմանադրության թե՛ արժեքանությունից և թե՛ մի շարք կոնկրետ դրույթներից: Դրանք են. 1) պետական, ժողովրդական ու ազգային ինքնիշխանության երաշխավորումը, 2) միջազգային հարաբերությունների իրավահավասարությունն ու փոխշահավետությունը, 3) մարդու իրավունքների միայն այնպիսի հնարավոր սահմանափակումների նախատեսումը, որոնք համարժեք են միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին, 4) Հայաստանի համար վերպետական մարմինների որոշումների գործողության հնարավորությունը միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության շրջանակներում»:

Եվ ընդհանրացնելով Սահմանադրական դատարանը եզրահանգել է. «...Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ որևէ վերպետական մարմնի կողմից ընդունված ցանկացած որոշում, որը չի համապատասխանում այդ պահանջներին, կիրառելի չէ Հայաստանի Հանրապետությունում: Իսկ այդ պահանջների պահպանման պարագայում Հայաստանի Հանրապետության կողմից այս կամ այն տարածաշրջանային կամ միջազգային կազմակերպության հետ գործակցությունը սահմանադրականության խնդիր չի կարող առաջացնել...»:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության ու նրա անդամ-պետությունների միջև համապարփակ ու ընդլայնված գործընկերության համաձայնագրին, ապա անհրաժեշտ է հաշվի առնել, որ այդ համաձայնագրի նախաբանում կողմերը ևս ընդունում են միջազգային կազմակերպություններում և համագործակցության ձևաչափերում Հայաստանի Հանրապետության ակտիվ մասնակցությանը և դրանից բխող իր ստանձնած պարտավորություններին տրվող կարևորությունը:

Անշուշտ, պետության ինքնիշխանության սահմանափակման իրավաչափության ապահովման տեսանկյունից ինչպես Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի հիմքում դրված (հոդվ. 3), այնպես էլ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև

փոխհարաբերությունների առանցքը կազմող սկզբունքները գործնականում նույնն են (օրինակ, հիմնարար ազատությունների, մարդու իրավունքների, ժողովրդավարական սկզբունքների, իրավունքի գերակայության և արդյունավետ կառավարման նկատմամբ հարգանքը, ժողովրդավարության և շուկայական տնտեսության ամրապնդումը և այլն):

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշված մոտեցումները և ընդհանրացնելով Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրականության հիմնախնդիրների հետազոտության արդյունքները, կարելի է ներկայացնել հետևյալ եզրահանգումները.

1) Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հիմնախնդրի լուծումներն ունեն երկիմաստ նշանակություն, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ այդ անդամակցությամբ Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է միջազգային պարտավորություններ, որոնք մի կողմից ամբողջությամբ պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, իսկ մյուս կողմից այդ պարտավորությունները պետք է ուղղված լինեն նույն միջազգային կազմակերպության խնդիրների ու նպատակների իրագործմանը:

2) ՀՀ Սահմանադրության 1, 5, 13, 55, 61, 81-րդ և այլ հոդվածներով ամրագրված դրույթների համակարգային վերլուծության համատեքստում Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունը և այդ անդամակցությամբ պայմանավորված պետության ինքնիշխանության սահմանափակումներն իրավաչափ են այն դեպքում, եթե միաժամանակ կարող են պահպանվել հետևյալ պայմանները. ա) Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունը և դրա հետ կապված պետության ինքնիշխանության սահմանափակումը չպետք է հակասեն սահմանադրական կարգի հիմունքներին, բ) Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունը և դրա հետ կապված պետության

ինքնիշխանության սահմանափակումը չպետք է հանգեցնեն մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակմանը, գ) Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունը պետք է ձևակերպվի միջազգային պայմանագրի ձևով և իրավական բոլոր ընթացակարգերին ու կառուցակարգերին համապատասխան լինի պատշաճ ընդունված և վավերացված:

3) Հայաստանի Հանրապետությունում վերաբնակարարությանը պետության լիազորության ուղղակիորեն փոխանցման սահմանադրական արգելքի հաղթահարման համար կարևորվում են հետևյալ հանգամանքների հաշվառմամբ. ա) պետության ինքնիշխանությունից կամ դրա մի մասից հրաժարում կարող է իրականացվել միայն ժողովրդի կամաբարտախայտման արդյունքում՝ հանրաքվեի միջոցով (Սահմանադրության 205-րդ հոդվ., մաս 1), բ) Եվրասիական տնտեսական միության օրինակով Հայաստանի Հանրապետությունն այդ միության կազմում իր անդամակցության դարձման գործընթացը կարող է նախաձեռնել ցանկացած պահի, ինչը դիտարկվում է որպես պետությունների ինքնիշխանության սկզբունքի հարգման իրավական հիմք, գ) Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությունն ինքնին կրում է տնտեսական բնույթ, և միայն հետևանքներն ունեն սահմանադրաիրավական նշանակություն:

4) Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունը չի կարող հանգեցնել մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների որևէ ձևով սահմանափակմանը, քանի որ առկա են ՀՀ Սահմանադրության արժեքանությունից և որոշակի նորմերի բովանդակությունից բխող սահմանադրական հետևյալ հստակ պահանջները. ա) պետության ինքնիշխանության երաշխավորումը, բ) պետությունների հետ միջազգային հարաբերություններում բարիդրացիականության ու փոխշահավետության հաստատումը, գ) մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների միայն այնպիսի հնարավոր սահմանափակումների նախատեսումը, որոնք չեն կարող գերազանցել միջազգային պայմանագրերով սահման-

ված սահմանափակումները, դ) Հայաստանի Հանրապետության և իր իրավազորության տակ գտնվող իրավաբանական ու ֆիզիկական անձանց համար Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերի գործողության շրջանակը սահմանափակվում է այդ ակտերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության շրջանակներում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարևորելով Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության սահմանադրականության հիմնահարցերի տեսական և գործնական խնդիրների դիտարկումը՝ անհրաժեշտ է նկատել, որ այդ հարցադրումներն արդիական են հենց ժամանակակից սահմանադրական իրավունքի և միջազգային իրավունքի համակարգում: Միջազգային կազմակերպությունների վերաբնականության և այդ կազմակերպություններին պետության անդամակցության սահմանադրականացման հիմնահարցերը, անկասկած, գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում և կարող են բազմաթիվ բանավեճերի առարկա հանդիսանալ այդ ոլորտի խնդրաբանությամբ զբաղվող գիտնականների շրջանում:

Ամփոփելով հետազոտության արդյունքները, թերևս, նպատակահարմար է առանձնացնել հետևյալ եզրահանգումները.

1) Պետության արտաքին քաղաքականությունը պետք է իրականացվի միջազգային իրավունքի նորմերի հիման վրա, ինչը նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունը միջազգային կազմակերպություններին անդամակցելիս պարտավոր է ղեկավարվել և անշեղորեն կատարել միջազգային իրավունքի նորմերով ստանձնած պարտավորությունները:

2) Միջազգային կազմակերպություններին անդամակցությամբ Հայաստանի Հանրապետությունը հայկական Սփյուռքի հետ կապերի համակողմանի զարգացումն ապահովելու միջոցով պետք է հետապնդի ոչ միայն արտաքին քաղաքականության ընդհանուր նպատակների իրագործում, այլև միջազգային իրավունքի նորմերի հիման վրա իրականացնի ազգային ու իրավական արժեքաբանական նշանակություն ունեցող հայապահպանությանն ուղղված քաղաքականություն:

3) Հայաստանի Հանրապետությունը կարող է անդամակցել ինչպես այն միջազգային կազմակերպություններին, որոնց կանոնադրական խնդիրներն ուղղված են պետությունների միջև ընդհանուր բնույթի համագործակցության ապահովմանը, այնպես էլ այն կազմակերպություններին, որոնք օժտված են վերապետականության տարրերով:

4) Հայաստանի Հանրապետությունը չի կարող անդամակցել միջազգային այն կազմակերպություններին և հետևաբար՝ վավերացնել այն միջազգային պայմանագրերը, որոնք նախատեսում են Հայաստանի Հանրապետության անդամակցություն միջազգային կազմակերպությանը, եթե դրանք հակասում են ՀՀ Սահմանադրությանը, ինչը ենթադրում է, որ Հայաստանի Հանրապետության՝ միջազգային կազմակերպություններին անդամակցելու կամ մասնակցելու իրավասությունը պայմանավորված չէ միայն հիշատակված սահմանադրական նորմերի առկայությամբ:

5) Անհրաժեշտ է նկատել, որ Եվրասիական տնտեսական միության երկրների սահմանադրություններով այդպես էլ չեն սահմանվում միջազգային կազմակերպություններին պետությունների անդամակցության հիմքերն ու երաշխիքները, որոնց առկայությունը, կարծում ենք, կվկայեր սահմանադրական մակարդակում միջազգային վերապետական այդ կազմակերպությունների նոր իրավական ձևի ու դրա ուժի բարձրացման ու դերակատարության երաշխավորման մասին:

6) Սահմանադրությունը կարող է չպարունակել կոնկրետ Եվրասիական տնտեսական միությունում պետությունների անմիջական մասնակցության որոշակի մեխանիզմներ, սակայն չպետք է բացառել, որ ինտեգրման զարգացման արդյունքում պետությունների նման իրավական ձևի համագործակցությունը կարող է վերածվել համադաշնային պետության ստեղծմանը, ինչպես օրինակ՝ դա իրականացվեց Եվրոպական միության երկրների փորձով:

7) Հայաստանի Հանրապետությունում միջազգային իրավունքի և ներպետական իրավունքի փոխգործակցության մասով, ի տարբերություն ՀՀ

Սահմանադրության՝ 2005 թվականի խմբագրության, երկրի իրավական համակարգի կազմում բացակայում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքների ու նորմերի ներառման հանգամանքը, ինչը սակայն չի ենթադրում, որ Հայաստանի Հանրապետությունն այդ նույն սկզբունքների ու նորմերի հիման վրա չի կրում պարտավորություն: Այդ սկզբունքները, ի վերջո, համընդհանուր նշանակություն ունեն ՄԱԿ-ի բոլոր անդամ-պետությունների համար, ընդ որում մի կողմից՝ դրանց աղբյուրը հենց միջազգային պայմանագրերն են, իսկ մյուս կողմից՝ դրանք համընդհանուր են ու հանրաճանաչ՝ առանց այդ սկզբունքների ամրագրման աղբյուրի նշման և գոյության:

8) Հայաստանի Հանրապետության տարածքում Եվրասիական տնտեսական միության ակտերի նկատմամբ առաջնահերթությամբ օժտված է ՀՀ Սահմանադրությունը, սակայն իրավական նորմերի աստիճանակարգությանը համապատասխան այդ ակտերն ունեն գերակայություն ազգային օրենքների նկատմամբ:

9) ՀՀ Սահմանադրության և Եվրասիական տնտեսական միության ակտերի առավել ամբողջական հարաբերակցության վերաբերյալ կարելի է ձևակերպել հետևյալ բանաձևը. Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված Եվրասիական տնտեսական միության ակտերը չպետք է հակասեն Սահմանադրությանը, ինչը նշանակում է, որ այդ ակտերով ստանձնած միջազգային պարտավորությունները պետք է համապատասխանեն նույն Սահմանադրությանը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում այդ ակտերն օժտված լինեն գերակայությամբ ազգային օրենքների նկատմամբ:

10) Եվրասիական տնտեսական միության ինտեգրման գործընթացների զարգացման որակապես նոր աստիճան ապահովելու նպատակով կարևոր խնդիր պետք է դիտարկել պետություններում սահմանադրական իրավունքի համակարգում, այդ թվում՝ իրավունքի սկզբունքների, ինստիտուտների, Եվրասիական տնտեսական միության ակտերի կիրառելիության և իրա-

կանացման կառուցակարգերի բնագավառում համաձայնեցված սկզբունքների սահմանումը, ինչը պետության ինքնիշխան իրավունքներից է:

11) Հաշվի առնելով Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգում պետության սահմանադրական իրավունքի առանցքային դերակատարությունը՝ անհրաժեշտ է ստեղծել այդ միության և պետությունների իրավասու մարմինների փոխգործակցության կազմակերպարավական ձևեր և կառուցակարգեր, ինչն այդ միության գործունեության արդյունավետության ապահովման կարևոր երաշխիքներից է:

12) Եվրասիական տնտեսական միության իրավունքի շրջանակում միասնական իրավական ակտերի պրակտիկայում ազգային օրենսդրության հետ հնարավոր ու պարբերական բնույթի հակասությունները բացառելու նպատակով անհրաժեշտ է հրաժարվել այդ պրակտիկայից և դիտարկել համապատասխան իրավակարգավորումների համար գործուն մեխանիզմներ սահմանելը:

13) Եվրասիական տնտեսական միությունը վերպետական միջազգային կազմակերպություն է, որն օժտված է այդ կազմակերպություններին բնորոշ հատկանիշներով՝ մասնակից պետությունների և նրանց իրավազորության տակ գտնվող իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից պարտադիր կատարման ենթակա ակտերի ընդունման իրավասությունը, այդ միության մարմինների կողմից ձայների մեծամասնությամբ որոշումների ընդունման իրավասությունը՝ առանց հաշվի առնելու որևէ պետության կամարտահայտությունը և այլն:

14) Եվրասիական տնտեսական միությունն ու դրա իրավական համակարգն օժտված են առանձնահատուկ և ինքնուրույն իրավական համակարգով, որի նորմերը կարգավորում են այդ միության շրջանակներում տնտեսական ինտեգրման գործընթացների ընթացքում ծագող հասարակական հարաբերությունները, սահմանում են մասնակից պետությունների լիազորությունների ու իրավասության, ինչպես նաև նրանց իրավազորության տակ գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց



իրավունքների ու պարտականությունների շրջանակները, պատասխանատվության միջոցներն ու մեխանիզմները:

15) Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգը միջազգային իրավունքի և միաժամանակ մասնակից պետությունների իրավական համակարգի բաղկացուցիչ մասն է, որի երկակի նշանակությունը պայմանավորված է ներպետական իրավունքի և միջազգային իրավունքի հարաբերակցության, ինչպես նաև այդ հարաբերակցության հիմքում ընկած Եվրասիական տնտեսական միության իրավունքի գերակայության և անմիջական գործողության սկզբունքների առկայությամբ:

16) Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունը կարգավորող նորմերի հետագա իրականացումն առավել մասշտաբային է ոչ միայն միջազգային տնտեսական ինտեգրման առումով, այլև սահմանադրաիրավական այն իմաստով, որ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 103-րդ հոդվածի տրամաբանության համատեքստում նման անդամակցությունն ինքնին կարող է ենթադրել ոչ միայն պետության որևէ լիազորությունների փոխանցում այդ միությանը, այլև դիտարկվել որպես պետության ինքնիշխանության սահմանափակում կամ դրա մի մասից հրաժարում:

**Վերջում նկատենք, որ սահմանադրական նոր կարգավորումների համատեքստում Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության իրավական կարգավորման հիմնախնդիրներին անդրադառնալիս մենք փորձ ենք արել առանձնացնել ոչ թե բոլոր վիճահարույց կամ լրացուցիչ վերլուծության ու ուսումնասիրության կարիք ունեցող հարցադրումները, այլ առավել արդիական ու հրատապ խնդիրները:**

**1995 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 5-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ (2005 ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ) ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** 1995 թվականի հուլիսի 5-ի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ 2005 և 2015 թվականների փոփոխություններով, (այսուհետ՝ Սահմանադրություն) 13-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

**«Պետությունը միջազգային իրավունքի հիման վրա այլ պետությունների հետ կարող է մասնակցել միջազգային վերպետական կազմակերպություններին և դրանց մարմինների ստեղծմանը՝ միջազգային պայմանագրերին համապատասխան փոխանցելով իր լիազորությունների մասը, եթե դա համապատասխանում է իր ազգային շահերին»:**

**Հոդված 4.** Սույն Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### I. Իրավական և դատական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության 1995 թվականի հունիսի 5-ի Սահմանադրությունը՝ 2015 թվականի փոփոխություններով, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, Հատուկ թողարկում, հոդվ. 1118, 21 դեկտեմբերի 2015 թ.,

2. Հայաստանի անկախության մասին 1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունված հռչակագիրը, ՀՀ ԳԽՏ 1990/16,

3. ՄԱԿ-ի կանոնադրությունը (ստորագրվել է 1945 թվականի հունիսի 26-ին, ուժի մեջ է մտել 1945. հոկտեմբերի 24-ին), Սկզբնաղբյուրը՝ [http://www.un.am/up/file/1.%20UN%20Charter\\_arm.pdf](http://www.un.am/up/file/1.%20UN%20Charter_arm.pdf)

4. ՄԱԿ-ի Միջազգային դատարանի կանոնադրությունը (ստորագրվել է 1945 թվականի հունիսի 26-ին, ուժի մեջ է մտել 1945 թվականի հոկտեմբերի 24-ին),

5. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (ընդունվել է 1948. դեկտեմբերի 10-ին), Սկզբնաղբյուրը՝ [http://www.ohchr.org/EN/UDHR/Documents/UDHR\\_Translations/arm.pdf](http://www.ohchr.org/EN/UDHR/Documents/UDHR_Translations/arm.pdf),

6. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա (4 նոյեմբերի 1950 թվականի, Հռոմ), Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2002.06.05/17(192) Հոդ.367,

7. ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր՝ կից կամ ընտիր արձանագրությամբ (16 դեկտեմբերի 1966 թվական), Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1997.12.25/29,

8. ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (16 դեկտեմբերի 1966 թվական),

9. Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիր (29 մայիսի 2015 թվական), Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2015.01.21/3 (1092), հոդվ. 24,

10. Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագիր (11 ապրիլի 2017), Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2018.03.12/17 (1375),

11. Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության 1978 թվականի ապրիլի 14-ի Սահմանադրությունը, Երևան, 1978.,

12. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2018 թվականի մարտի 16-ի ՍԴՈ – 1407, 2017 թվականի հոկտեմբերի 10-ի ՍԴՈ-1381, 2014 թվականի նոյեմբերի 14-ի ՍԴՈ-1175 և որոշումները, <http://www.concourt.am>:

13. Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական Միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության մասին համաձայնագիրը ստորագրվել է 2017 թվականի նոյեմբերի 24-ին Բրյուսելում, վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2018 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-313-Ն օրենքով. ՀՀՊՏ 2018.04.23/34(1392), հոդ.583,

14. Конституция Российской Федерации 1993 года. М.: 1993, 45 էջ,

15. Конституция Республики Беларусь 1996 года. Минск. 1997, 39 էջ,

16. Конституция Республики Казахстан 1995 года. Астана, 2013, 65 էջ,

17. Конституция Республики Таджикистан 1994 года. Душанбе, 2000, 43 էջ,

18. Конституция Республики Кыргызстан 1993 года. Бишкек, 1993, 25 էջ,

19. Договор о Таможенном союзе и Едином экономическом пространстве (Москва, 26 февраля 1999 г.). Собрание законодательства Российской Федерации от 15 октября 2001 г. N42 ст. 3983.

20. Договор об учреждении Евразийского экономического сообщества (Астана, 10 октября 2000 г.). Собрание законодательства Российской Федерации. 2002. N7, 632 էջ,

21. Закон Республики Беларусь «О международных договорах» от 23 октября 1991 года N1188-ХП (в редакции Закона от 8 июля 1998 года N181-3).

22. Указ Президента Республики Казахстан «О порядке заключения, исполнения и денонсации международных договоров» от 12 декабря 1995 года N2679 (имеющий силу Закона Республики Казахстан).

23. Закон «О международных договорах» Кыргызской Республики от 21 июля 1999 года №89.

24. Закон Республики Таджикистан «О международных договорах Республики Таджикистан» от 11 декабря 1999 года N909 (с изменениями, внесенными Законом Республики Таджикистан от 6 августа 2001 года N31).

25. Конвенция о привилегиях и иммунитетах Евразийского экономического сообщества (Минск, 31 мая 2001 г.).

26. Положение о нормативно-правовых актах Межпарламентской Ассамблеи Евразийского экономического сообщества. Утверждено постановлением МПА ЕврАзЭС от 16.06.2003.

27. Программа гармонизации национальных законодательных и иных нормативных правовых актов государств-участников Договора о Таможенном союзе и Едином экономическом пространстве утверждена решением Межгосударственного Совета Республики Беларусь, Республики Казахстан, Кыргызской Республики, Российской Федерации и Республики Таджикистан от 26 октября 1999 г. N 52. Текст программы опубликован в "Российской газете" от 30 октября 1999 г.

28. Договор о Европейском союзе (Маастрихт, 7 февраля 1992г.). Единый европейский акт. Договор о Европейском союзе. - М., Право, 1994.

29. Договор об учреждении Европейского экономического сообщества. (Рим, 25 марта 1957). Договоры, учреждающие европейские сообщества. - М., Право, 1994.

30. Договор об учреждении Европейское сообщество по атомной энергии (Рим, 25 марта 1957). Договоры, учреждающие европейские сообщества. - М., Право, 1994.

31. Договор об учреждении Европейского объединения угля и стали (Париж, 18 апреля 1951г.). Договоры, учреждающие европейские сообщества. - М., Право, 1994.

## **II. Մասնագիտական գրականություն, մենագրություններ, գիտական հոդվածներ ու զեկույցներ.**

1) Արդարադատության իրավունքի իրացումը Հայաստանի Հանրապետության դատական համակարգում: (Մոնիտորինգի արդյունքներ), **Գ.Ղազինյան, Վ.Քոչարյան, Հ.Ղուկասյան, Ա.Հարությունյան, Վ.Ենգիբարյան**, Եր., 2009. 220 էջ,

2) **Այվազյան Ն.Ա.**, Ինքնիշխան պետություն // Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունք, - Եր.: -ԵՊՀ: 2012, էջ 121-122:

3) **Ավազյան Ռ.Հ.**, Հայ իրավական մտքի գանձարան, Եր., 2002. 507 էջ,

4) **Դանիելյան Գ.Բ.**, Շեղումներ սահմանադրական բարեփոխումների գործընթացից // Օրենք և իրականություն, Երևան, 2001., N13(27), 124 էջ,

5) **Թոխյան Ֆ.Պ.**, Խորհրդարանական ընտրությունների սահմանադրաիրավական կարգավորման հիմնախնդիրները երիտասարդ ժողովրդավարության երկրներում (Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիման վրա), խմբ.՝ Ա.Շ.Հարությունյան. - Երևան: 2004. 654 էջ,

6) **Խաչատրյան Ա.Ա.** Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության հիմնախնդիրները. սահմանադրական ժամանակակից կարգավորումների համատեքստում և դրանց լուծումները միջազգային

իրավական ու սահմանադրական արդարադատության պրակտիկայում, Եր., 2016. 160 էջ,

7) **Խաչատրյան Հ.Մ., Ստեփանյան Հ.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը. -Եր.: 1997, 139 էջ,

8) **Հարությունյան Ա.Շ.**, Եվրոպական Միության իրավունքի հիմունքները (Սահմանադրական իրավունք), Եր., 2011, 568 էջ,

9) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում, Եր., 2006., 400 էջ,

10) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ **Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի**. Եր., 2010., 1086 էջ:

11) **Հարությունյան Գ.Գ.**, Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Եր., 2003. 73 էջ,

12) Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950. նոյեմբերի 4-ի Կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն, Եր., 2005. 528 էջ,

13) **Մուրադյան Մ.Հ.**, Պետության հասկացությունը և հատկանիշները // Պետության և իրավունքի տեսություն: -Եր: 2014, 587 էջ,

14) **Պետրոսյան Ռ.Գ.**, Իրավունքի և օրենքի, դատարանի և արդարադատության աստվածաշնչյան հիմունքները, Եր., 2008. 72 էջ,

15) Պետության և իրավունքի տեսություն, -Եր.: 2014, 183 էջ,

16) **Պողոսյան Վ.**, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծ և մեկնաբանություններ. դեկտեմբերի 6-ին ասա՝ այդ սահմանադրական բարեփոխումներին, Եր., 2015., 144 էջ,

17) Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն) / **Գ.Բ.Դանիելյան, Վ.Ա.Այվազյան, Ա.Ա.Մանասյան**.- Եր., 2015, 240 էջ,

18) Սահմանադրական բարեփոխումներ. ի՞նչ են կարծում փորձագետները // Հանրային քաղաքականության վերլուծության և երկխոսության Ապելլա ինստիտուտի զեկույցը, Երևան, 2014, 155 էջ,

19) **Ստեփանյան Վ.Վ.**, Մարդու իրավունքների վերաբերյալ սահմանադրական նորմերի օրենսդրական փոխակերպման մի քանի հարցեր: Համատեղ սեմինարների նյութերի ժողովածու, Եր., 1998. 232 էջ,

20) **Շահամիրյան Շ.**, Որոգայթ Փառաց, Մադրաս, 1773, 224 էջ,

21) **Քոչարյան Վ.Վ.**, Միջազգային իրավունք, Եր., 2002, 504 էջ,

22) **Авакьян С.А.**, Договор между республикой Беларусь и Российской Федерацией о создании союзного государства: конституционно- правовой анализ. Вестник Московского университета. Серия 11, Право. 2001. N1.

23) **Авдийский В.И.** Национальная экономическая безопасность в условиях глобализации // Международное публичное и частное право. 2012. - N2. էջ 9,

24) **Азанов Б.К.** Договор о Евразийском экономическом союзе // Евразийский юридический журнал, -М.: 2014, N9. էջ 26:

25) **Алексеев Р.Ф., Михайлов В.П.**, Евразийское экономическое сообщество. Международная жизнь. 2000. №11.

26) **Арутюнян А.Ш.**, Конституционализм: проблемы постсоветской реальности. –М.: Норма, 2013, - 160 էջ,

27) **Арановский К. В.**, Суверенитет в системе федеративных отношений. // Право и политика. - 2000. էջ 12—23,

28) **Бабурин С.Н.** Российская реинтеграция: социально-экономические и политико- правовые проблемы. М., 2006, 448 էջ,

29) **Барков А.В.** Правовой статус Евразийского экономического сообщества // Журнал российского права, N4, апрель 2003,

30) **Барков А.В.** Проблемы гармонизации в Евразийском экономическом сообществе. "Журнал российского права", N 8, август 2003 г.



- 31) Барцис И.Н. Правовое пространство России конституционной теории и практики. М., 2006, № 117,
- 32) **Бекашев К.А., Моисеев Е.Г.** Право Евразийского экономического союза. М., 2016, № 2,
- 33) **Бирюков М.М.** Новый учредительный договор Европейского Союза — конституция для Европы и последние изменения в составе и статусе европейского парламента. Журнал российского права, 2005, № 5
- 34) **Вихарев С.Р.,** В.И. Ленин о суверенитете союзных республик, Минск: 1969. № 176,
- 35) **Вишняков В.Г.** Правовые проблемы становления Евразийского экономического сообщества // Журнал российского права, 2001, № 10,
- 36) **Вишняков В.Г.** Право и межгосударственные объединения. СПб., 2003, № 278,
- 37) Второй этап формирования Таможенного союза: современные проблемы и задачи (информационно-аналитический доклад). Интеграционный Комитет. М., 1999.
- 38) **Гоббс Т.,** Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского. — М.: 1991, № 337,
- 39) **Гессен В.М.** Общее учение о государстве. СПб., 1912. № 56 // Теория государства и права: Курс лекций: Под ред. **Н.И. Матузова и А.В. Малько,** — М.: 2001. № 18-21.
- 40) **Доронина Н.Г.** Унификация и гармонизация права в условиях международной интеграции. Журнал российского права. № 6, 1998.
- 41) **Еллинек Г.** Общее учение о государстве. СПб.: 2004. — 752 с.
- 42) ЕврАзЭС: экономическое притяжение. Под редакцией **Г.А. Рапота, С.Д. Примбетова** и др. М., 2005.
- 43) **Зорькин В.Д.** Апология Вестфальской системы // Рос. газ. 2004, 13 июля.

44) **Зиновьев А.В.** Суверенитет, демократия, государство // Правоведение - 2006. - №6. - С. 20 - 28.

45) **Зыбайло А.И.** Судебный контроль за соответствием конституционного и международного права. Вестник Конституционного Суда Республики Беларусь. 1999. №1.

46) Информационные бюллетени ЕврАзЭС, №1-4. Сборник документов, определяющих правовую основу деятельности Евразийского экономического сообщества.

47) Интеграционные процессы в странах СНГ. Ученые записки кафедр общественных наук вузов С.-Петербурга. Политическая экономия. Вып. XXII. СПб., 1996.

48) **Исингарин Н.К.** 10 лет СНГ. Проблемы, поиски, решения. Алматы, ОФ «БИС», 2001,

49) История политических и правовых учений / Под общ. ред. акад. РАН, д-ра юрид наук, проф. В.С. Нерсисянца. М.: 2004. 552 էջ,

50) **Капустин А.Я.** Европейский Союз: Интеграция и право. М., РУДН, 2000.

51) **Калугин В.Ю.** Механизм имплементации норм международного гуманитарного права на внутригосударственном уровне. Белорусский журнал международного права и международных отношений. 2000, №1.

52) **Карпович В.Д.** Постатейный комментарий к Конституции Российской Федерации. М., Юрайт-М, 2002.

53) **Кашкин С. Ю., Четвериков А.О.** Право Евразийского экономического союза, М.: 2016,

54) **Кашкин С.Ю.** Право Европейского Союза М., Юрист, 2002.

55) **Каюмова А.Р.** Суверенитет и юрисдикция государства: проблемы соотношения / А.Р: Каюмова // Конституционное и муниципальное право. - 2008. - №9. - С. 12-15.

56) **Клемин А.В.** Суверенные права государства. М.: 2008, 348 էջ,

57) **Курбанов Р.А.** Евразийское право: процессы формирования // Государство и право. – М., 2015. – N9. 71.

58) **Кубасова И.А.** Некоторые аспекты и проблемы правового обеспечения интеграции государств - членов ЕврАзЭС (по итогам заседания Постоянной комиссии Межпарламентской Ассамблеи ЕврАзЭС по правовым вопросам). Проблемы современной экономики, N 3(15).

59) Конституции зарубежных государств. Сб., Т.1-3. М.: 2010-2014, 1011 72,

60) Конституции государств Европейского Союза. Сборник под общей редакцией **Л.А. Окунькова**. М., 1997,

61) **Ландо Д.Д., Самарин В.И.** Европейское публичное право. 2010. 72 511,

62) **Леонтьев К.Н.** Византизм и славянство. М.: 2008. 606 72,

63) **Лукашук И.И.** Международно-правовое регулирование международных отношений (системный подход). М., Международные отношения, 1975.

64) **Лукашук И. И.** Международное право в судах государств. СПб., 1993.

65) **Локк Дж.** Сочинения: Т. 3. М.: 1988. 345 72,

66) **Манов Б.Г.** О соотношении права СНГ и современного международного права. Журнал российского права. 1999, N7/8.

67) **Манов Б.Г.** Новое о межгосударственной интеграции // Журнал российского права, 2005, N9.

68) **Манжосов А.И.** Евразийское экономическое сообщество. Правовые и экономические основы. М., 2004.

69) **Матузов Н.И.** Актуальные проблемы теории права. Саратов, 2014. 494 72,

70) Международное сотрудничество и совершенствование правовой системы Евразийского экономического сообщества: материалы

международной научно-практической конференции, 26 февр. 2004 года. Сборник статей / Редколлегия: А. Н. Марышев и др. СПб., Береста, 2004.

71) **Михалева Н.А.** Практикум по конституционному праву стран СНГ. Методические разработки и нормативные материалы. М., 1998.

72) Межгосударственное объединение и эволюция конституционных институтов. Вестник МПА. N2 (25), 2000.

73) **Михалёва Н.А.** Координация межгосударственного и национального права как основа интеграционных процессов. Вестник Межпарламентской Ассамблеи. 2000, N2.

74) **Моисеев А.А.** Суверенитет государства в международном праве. М.: 2009, 375 էջ,

75) **Назарбаев Н.А.** Евразийский Союз: идеи, практика, перспективы. 1994-1997. М., 1997,

76) **Нарышкин С.Е., Хабриева Т.Я.** К новому парламентскому измерению евразийской интеграции // Журнал российского права. – М., 2012. – N8. էջ 13,

77) Научный макет Новой Конституции/Под общей редакцией **С.С. Сулакшина.** - М.: 2011, 487 էջ,

78) Новые конституции стран СНГ и Балтии. Сборник документов. Вып. 2. Составители: **Ю.А. Дмитриев, Н. А. Михалева.** М., Манускрипт, 1997.

79) Об итогах международного научно-практического семинара "Правовые акты Межпарламентской Ассамблеи Евразийского экономического сообщества как средство сближения и унификации систем национальных законодательств". МПА ЕврАзЭС. Санкт-Петербург, 2002.

80) Преамбула доктрины "Развитие Евразийского экономического сообщества в XXI веке". (Проект Преамбулы подготовлен проф. **Н.А.Черкасовым.**) Проблемы современной экономики, N 1(13).

81) Предложения по законодательному регулированию миграционной политики государств - членов ЕврАзЭС (одобрены постановлением Бюро

Межпарламентской Ассамблеи ЕврАзЭС от 14.11.2013 N5). Тематический сборник N2(8.1) Межпарламентской Ассамблеи ЕврАзЭС. СПб., 2014,

82) **Примбетов С.Д.** Европейский Союз и Евразийское экономическое сообщество - использование опыта и перспективы сотрудничества. Информационно-аналитический журнал «ANALYTIC». Алматы, №3, 2003.

83) Правовые акты Межпарламентской Ассамблеи Евразийского сообщества как средство сближения и унификации систем национальных законодательств: материалы международной научно- практического семинара // Под ред. **А. П. Войтовича**. СПб., Секретариат Совета Межпарламентской Ассамблеи государств-участников Содружества Независимых Государств, 2002.

84) Правовое обеспечение межгосударственной интеграции. Сборник статей. Отв. ред. **Ю.А. Тихомиров, В.И. Лафитский**. М., 2005.

85) Первый экономический форум ЕврАзЭС. Под **редакцией Г.А. Рапота, С.Д. Примбетова** и др. М., 2003.

86) **Примбетов С.Д.** Международная экономическая интеграция в современном мире. Алматы, 2003.

87) **Примбетов С.Д.**, Европейский Союз и Евразийское экономическое сообщество - использование опыта и перспективы сотрудничества. Информационно-аналитический журнал «ANALYTIC». Алматы, N3/2003. 257 էջ,

88) Развитие межгосударственной интеграции в ЕврАзЭС и проблемы ее правового обеспечения. Из проекта "Порядок реализации международных договоров и решений органов Евразийского экономического сообщества". Проблемы современной экономики, N3(15).

89) Рекомендации международного консультативного семинара «Межгосударственные объединения и эволюция конституционных институтов». Центр публичного права МПА СНГ. Санкт-Петербург, 20 октября 1999.

90) Рекомендации международного научно-практического семинара «Проблемы правового обеспечения Евразийского экономического

сообщества». Комитет Совета Федерации Федерального Собрания Российской Федерации по делам Содружества Независимых Государств совместно с Межпарламентским Комитетом Республики Беларусь, Республики Казахстан, Кыргызской Республики, Российской Федерации и Республики Таджикистан. Москва, 1 марта 2001г.

91) Рекомендации расширенного заседания секции публичного права Ученого совета Института законодательства и сравнительного правоведения при Правительстве РФ "Правовые проблемы межгосударственной интеграции". Москва, 23 марта 2005 г.

92) **Румянцев О.Г.** Основы конституционного строя России (понятие, содержание, вопросы становления). М., 2010, 455 էջ,

93) **Рыхтикова Л.Ю.** Конституционно-правовые основы имплементации норм международного права в Российской Федерации. Монография. М., 2004.

94) **Романова Л.М.** Современные политико-правовые трансформации\* суверенитета // Философия права. - 2008. - №1. 165 էջ,

95) **Свинарев В.В.** Международная интеграция: правовой опыт Европейского Союза и перспективы его применения на Евразийском пространстве Российский ежегодник международного права. СПб., 2013, 423 էջ,

96) **Скуратов Ю.И.** Евразийская парадигма и некоторые проблемы интеграции на пространстве Содружества Независимых Государств (СНГ) // Государство и право. 2015. N2. էջ 90-99,

97) **Слюсарь Н.Б., Кулматов Т.Ш.** О механизме гармонизации законодательств государств-членов Евразийского экономического сообщества. Проблемы современной экономики. N 3(11).

98) **Усенко Е.Т.** Соотношение и взаимодействие международного и национального права и Российская Конституция. Московский журнал международного права. 1995. N2.

- 99) Тематический сборник N2(8.1) Межпарламентской Ассамблеи ЕврАзЭС. Спб., 2004.
- 100) **Тинберген Я.** Пересмотр международного порядка. М.: 2010. 498 էջ,
- 101) **Тихомиров Ю.А.**, Коллизионное право. М., 2000. 738 էջ,
- 102) **Четвериков А.О.** Европейский Союз: новый этап интеграции. Общество, политика, наука: новые перспективы. - М., 2000.
- 103) **Шишков Ю.В.** Интеграционные процессы на пороге XXI века. Почему не интегрируются страны СНГ. - М., НП «III тысячелетие», 2001.
- 104) **Черниченко С.В.** Международное право: современные теоретические проблемы. М., 2009, էջ 150,
- 105) **Эбзеев Б.С.** Конституция. Демократия. Права человека. М., 2002, 171 էջ,
- 106) **Юмашев Ю.М.** О правовой природе Европейского Сообщества. Европейская интеграция: правовые проблемы. - Кн.1. - М., 1992.
- 107) **Bedjaoui M.** International law: Achievements and Prospects. Leiden: Martinus Nijhoff Publishers, 1991. 675 էջ,
- 108) **Bodin J.** *Lex six Works of the Republic.* - Paris, 1986. 293 էջ,
- 109) **Crievés F.L.** *Supranationalism and International Adjudication.* Urbana. 1969. 588 էջ,
- 110) **Dieter N.** *Elections in Europe: A Data Handbook.* Baden-Baden: Nomos Publishers, 2010. 494 էջ.
- 111) **Kissinger H.** *Does America Need a Foreign Policy? Forward Diplomacy for the 21 Century.* N.Y. 2001, 234 էջ,
- 112) **Klppbers J.** *Treaty conflict and European Union.* Cambridge University Press. 2009. 564 էջ,
- 113) **Malko A., Elistratova V.** *Die Eurasische Wirtschaftsunion: Die Verwendung der europäischen rechtlichen Erfahrung der zwischenstaatlichen Integration // Rechtspolitisches Forum.* - Trier, 2014. 717 էջ,

- 114) **Martinez M.** National Sovereignty and International Organizations. The Hague: Martinus Nijhoff Publishers, 1996. 577 էջ,
- 115) **Malone L.** International Law. NewYork: Aspen Publishers Online, 2008. 753 էջ,
- 116) **Newman Edward.** Failed states and international order: constructing a post-Westphalian world. // Contemporary security policy 30.3 (2009), 643 էջ,
- 117) **Janis M.W., Kay R.S.,** European Human Rights Law: Connecticut, Oxford University Press. 1990, VII էջ,
- 118) **Crievs F.L.** Supranationalism and International Adjudication. Urbana. 1969. 199 էջ,
- 119) **Robertson A.H.** Legal Problems of European Integration. RCADI. 1957. Volume 91. 688 էջ,
- 120) **Stephen D.Krasner.** Promlematic Sovereiggnty, New York: 2001 // Конституционное право и политика. Юр., фак. МГУ, 2012, 726 էջ,
- 121) **Schermers H.G., Blokker N.M.** International Institutional Law: Unity without Diversity. Leiden: Brill, 2011. 544 էջ:

### III. Ատենախոսություններ, սեղմագրեր.

1. **Анненкова В.Т.** Единство Российского государства: проблемы конституционной теории и практики: Автореф. дисс....докт. юрид. наук. М., 2006, 50 էջ,
2. **Барков А.В.** Правовой статус Евразийского экономического сообщества. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2003. 24 էջ,
3. **Богданова, М.В.** Государство в современных международных отношениях: автореф. дис. ... канд. полит, наук: 23.00.04. М., 2008. - 23 էջ,



4. **Воронцова Н.А.** Правовые основы становления и функционирования межгосударственного механизма интеграционных процессов в Евразийском экономическом сообществе. Автореферат диссертации на соискание ученой степени доктора юридических наук. М., 2004.

5. **Грачев Н.И.** Государственное устройство и суверенитет в современном мире: вопросы теории и практики: Диссертация на соискание доктора юр. наук, Волгоград: 2009. 156 էջ,

6. **Жигулин В. В.** Конституционно-правовые основы участия Российской Федерации и других государств в Евразийском экономическом сообществе: Дисс...канд. юрид. наук. – М.: 2005, 156 էջ,

7. **Кузоакин Д.В.** Обеспечение единства экономического пространства Российской Федерации (конституционно-правовое исследование): Автореф. Дисс...канд. юрид. наук. Омск, 2005, 25 էջ,

8. **Мамонов В.В.** Конституционные основы участия Российской Федерации в Содружестве Независимых Государств. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Саратов, 1999.

9. **Моисеев, А.А.** Соотношение суверенитета и надгосударственности в современном международном праве (в контексте глобализации): Автореф. дис.... канд. юрид. наук: М., 2007. - 46 էջ,

10. **Степаненко С.М.** Административно-правовые аспекты межгосударственной таможенной интеграции в Евразийском экономическом сообществе. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2006. 23 էջ,

11. **Троицкий В.А.** Правовые аспекты интеграции в рамках ЕврАзЭС и Единого Экономического Пространства Беларуси, Казахстана, России и Украины. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. СПб., 2005. 27 էջ,

12. **Хижняк В.С.** Конституционно-правовой механизм взаимодействия внутригосударственного права Российской Федерации и международного права. Автореферат диссертации на соискание ученой степени доктора юридических наук. Саратов, 2004. 45 էջ,

13. **Шеленкова Н.Б.** Современные правовые проблемы европейской интеграции. Автореферат диссертации на соискание ученой степени доктора юридических наук. М., 2005. 52 էջ,

14. **Шпак О.В.** Международно-правовое регулирование таможенного сотрудничества государств-членов Евразийского экономического сообщества. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2006. 22 էջ,

15. **Шувалов Е.Н.** Конституционные основы интеграционных процессов Российской Федерации и стран-членов СНГ в таможенной сфере. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Москва, 2001, 21 էջ:

#### **IV. Հղումներ էլեկտրոնային ռեսուրսների վրա**

1. CDL-AD(2014)027, 2014 թվականի հոկտեմբերի 13, Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծի վերաբերյալ եզրակացություն, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով), <http://moj.am/storage/uploads/CDLAD2014027-e>.pdf. <http://www.venice.coe.int/>,

2. **Кузнецова Е.**, Западные концепции государственного суверенитета // Международные процессы. 2006. Т.4. N2 [www.intertrends.ru/eleventh/007.htm](http://www.intertrends.ru/eleventh/007.htm).

3. **Иванов В.**, О суверенитете как претензии //Интернет-издание «Взгляд» от 23.08.2006. [//www.vz.ru/columns/2006/8/23/46314.html](http://www.vz.ru/columns/2006/8/23/46314.html).

4. *Croatia* EU Referendum: Voters Back Membership // [www.bbc.com/news/world-europe-16670298](http://www.bbc.com/news/world-europe-16670298).
5. **Icelanders** to get a referendum on joining the EU // [www.bbc.com/news/world-europe-22624110](http://www.bbc.com/news/world-europe-22624110).
6. **Sweden**. Euro Referendum, 2003 // [www.electoralgeography.com/new/en/countries/s/sweden/swed-en-euro-referendum-2003.html](http://www.electoralgeography.com/new/en/countries/s/sweden/swed-en-euro-referendum-2003.html):